



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1455

05. № 2738.

ԶԵՐՆԱՐԿ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

Գ. ՏԱՐԻ

ԿԵՐ ԿՐԹՍԵՐ ՆԱԽԵԳՈՏՐՈՒՏԱԿԱՆ Գ. ԲԵԺԱՆՈՒՄՆ

ՇԱՀԱԿԱՔԱՂ. ՀԻՒՍՈՒԱԾՔ

ՏԵՐՈՒՆԱԼԱՆ Եւ ՆԿԵՂԵԳԱԼԱՆ ԱՎԱՍՈՒՄՆԱԹԻՆՆԵՐԻց. ԻՐԵՆԻց
յարմար շարականներով:

Մարիամեան—Յովհանեան օր. Գոլոսի տաների համար

ՀԱՅԱՆՈՒԹԻՒՆ
ԻՆՍՏԻՏՈՒՏ
ՊԵՏՈՒԽԵԱԼԻԱ
Բազմաթիվ Հայէ
СССР

ԱՐՍԻՆ ԱԽԱԳ.-ՔԱԶ. ԲԱԳՐԱՏՈՒԻՆԻ



ԹՐԵԼԻՍ
ՏԵՂՐԱ Տ. Պ. ՊՈՅԻՆԵԱՆՆ
1905

2(075)

F-15

5 6 FEB 2013

Հ Յ Ր Կ 3497 2 1575
Բ - 15

Oriental Manuscripts Department of the Library of Congress

ԶԵՐԱՆՈՐԴԻ

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ

Գ. ՏԱՐԻ

ԿԸՄ ԿՐՏՈՒԹ ՆԵԽԵՊԵՏՐՈՎՏԱԿՆ Գ. ԲԱԺԱՆՈՒՄՆ

ԽԱՂՎԱՔԱՂ ՀԻՒՍՈՒԱԾՔ

Տէրունական եւ Եկեղեցական պատմովիններից. իրենց
յարժաք շարականներով:

Մարիամեան—Յովանիսան օր. Դպրոցի սաների համար

ԱՐՄԵՆ ԱԻԱԴ.-ՔԱՅ. ԲԱԳՐԱՑՈՒԽԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՄԻСՏԻՎԱԴ
ԲՈՒԺԵՎԵՆԻ
Պետական Խորհ
С С С Р

Թ Ի Ֆ Լ Ի Ս
Յ Ա Ր Ա Ն Տ Ա Ր Ա Ն Ե Ր
1905

26 FEB 2013

1455

03 AUG 2009

Одобрено Кавказскимъ Учебнымъ Комитетомъ, 12 Сентября 1903 г. № 13,827.

1985911824Р ДЛЯ ДОДА

1903 .

1985911824Р ДЛЯ ДОДА

1903 .

Дозволено цензурою, Тифлисъ. 13 Апрѣля 1905 г.



61069 - 67

Հստ Բարձու հրամանի նորին Ս. Օծովթեան Վեհափառ Հայրապետի ազգիս Տ. Տ. Մկրտչի, Դիւանս թուլատրէ տպագրութիւն Դասագրոյս որ ընդ անուամբս «Զեռնարկ Կրօնական Գիտելիքների» վաւերացուցանելով ստորագրութեամբ եւ ղրոշմամբ կնքոյ Հայրապետական Դիւանի:

Ի 18 Սեպտեմբերի 1902 ամի ի Տփխիս:

Դիւանապետ Կորին Վարդապետ.

ուն և աշխարհական իշխանությունների պատճեն—չն մինչ
ուղարկությունների պատճենը պահպանության մեջ մտնելու
պահանջման առ պահպանության մեջ մտնելու պահանջմանը զիմ
Ա Զ Պ.

Գ. տարուայ կամ Աւագ Բաժանման ծրագիրը ամ-
փոփուած է լոկ Տէրունական և Եկեղեցական մի քանի
պատմութիւնների մէջ. և ոչ Հին-Ռւստի ամբողջ Դաս-
ընթացի մէջ, և այս ահա թէ ինչու,—նախ՝ որ սանե-
րից ոմանք այս բաժանումն աւարտելով՝ թողնում են
դպրոցը զանազան պատճառներից զրգուած, ուստի և
անհրաժեշտ է տալ նրանց համառօտ տեղեկութիւն հին
և նոր ուխտի սուրբ պատմութիւններից, աղօթքներից,
տօներից ևս և Աղքային Եկեղեցական պատմութիւնից.
երկրորդ՝ եթէ չթողնեն և շարունակեն իրենց դպրոցա-
կան դասառութիւնը՝ գարձեալ կորուստ ու վիաս չու-
նին. ընդհակառակին նոցա, այս երեք բաժանմանց մէջ,
հատ ու կտոր ուսածները վերին դասարաններում աւելի
հաստատուն հիմք կունենան իրենց մէջ—համառօտը՝ ընդ-
արձակելով, հատ ու կտորը՝ ամբողջացնելով. երրորդ՝
Հին Ռւստի դասընթացը ամբողջովին վերապահելով
Դ. տարուան՝ աւելի նպատակայարմար է. որովհետեւ
սաները աւելի գիտակցորէն կուսանին քան թէ **Գ.** տա-
րում. և այդ անհրաժեշտ է, քանի որ բարձր և վսէմ
մաքերն ու գաղափարները, որ տալիս է Հին Ռւստը,
դիւրըմբոնելի չեն **Գ.** տարուայ սաներին. որը նկատել
եմ ես ի փորձոյ: Աւելի նպատակայարմար է թւում
մեղ—կցել դասական նիւթին մեր կեանքից վերցրած
օրինակներ, իբրև բարոյակըթական զրոյցներ, և զէթ
այդ ճանապարհով հարցասիրութիւն զարթեցնել սա-

ների մէջ—անցեալը ներկայով տպաւորելու և մարմնացնելու:

Յիշեալ երեք հանգամանքները դրական պատճառներ համարելով՝ ևս այսպէս դասաւորեցի իմ ձեռնարկները, միշտ ի նկատի ունենալով բազմամեայ փորձերս և սաների մտաւոր, ըմբռնողական և իրանցից անկախ արտաքին հանգամանքները:

Արայն աւ. քահ. Բագրատունի:

ԾՐԱԳԻՐ

Պ Ա Ս Լ Ն Թ Ռ Ա Ց Ի Ւ

Գ. ՏԱՐԻ ԿԱՄ ԱՒԱԴ ԲԱԺԱՆՄԱՆ.

Ա. Բ Ա Ժ Ի Ն

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՈՆԱԿԱՆ ԱՎԱՄՈՒՁԻՄՆԵՐ:

ա. Սուրբ Աստուածածնի Վերափոխումը: ա. Աղօթական երդ—Փառաւորեալ և օրհնեալ: զ. Կանոն Վերափոխման Սուրբ Աստուածածնի—Սրեելք գերարփին...:

բ. Յայտնութիւն Վարագայ Սուրբ Խաչի: զ. Կանոն Վարագայ խաչին—Որ զլոյս...:

գ. Գիւտ Սուրբ Խաչի: դ. Կանոն Գիւտ Խաչին—Այսօր խնդրի...:

դ. Երեսումն Սուրբ Խաչի: ե. Կանոն նաւակատեաց Սուրբ Խաչին—Այսօր ընդ ամպս...:

ե. Վերացումն Սուրբ Խաչի կամ Խաչվերաց: զ. Կանոն վարագայ Խաչին—Նշանաւ...:

Բ. Բ Ա Ժ Ի Ն

Ազգային—Եկեղեցական տօնական ԱՎԱՄՈՒՁԻՄՆԵՐ 1).

ա. Հայաստանի առաջին Քրիստոնէական Լուսաւորութիւնը—Աբգար՝ առաջին Քրիստոնեայ Հայ Թագաւոր և առաջին Լուսաւորիչներ Հայաստանի Թաղէոս և Բարդուղիմէոս:

1) Եթէ լարմար կդատէ ուսուցիչը՝ այս պատմութիւններից ևս կարող է Պատկերներ ներկաւացնել, ընտրելով ասների միջից ձեռնհասներին.

բ. Սուրբ Թաղէսս և Բարդուղիմէսս առաքեալների և Սուրբ Մանդուխտ Կոյսի նահատակութիւնը։ է. Հարական Սրբուհոյն Մանգխտոյ—Քե պարծի...։ ը. Հարական երկոտասան Առաքելոցն—Հայրատունկ այգւոյն...։ թ. Կանոն Վերափոխման—Բարդուղիմէ յետոյ եկեալ...։

գ. Սուրբ Ոսկեանց և Սուրբիասեանց Քրիստոնէութիւն ընդունելը և նահատակական վախճանը։—Ժ. Հարական Սրբոց Ոոկեանց—Որք արժանաւորեցալք...։ Ժա. Հարական Սրբոց Սուրբիասեանց—Ահա տեսաք զՄուկաւէտ...։

դ. Հայաստանի երկրորդ Քրիստոնէական լուսառութիւնը—Տրդատ՝ երկրորդ Քրիստոնեայ Հայ թագաւոր և Սուրբ Գրիգոր՝ երկրորդ Լուսաւորիչ Հայաստանի։ 1. Խոսրով Հայոց Թագաւորի մահը և Սուրբ Գրիգորի ծնունդը։ 2. Սուրբ Գրիգորի մկրտութիւնը, ամուսնութիւնը և Հոռվմ գնալը։ 3. Արտաշրի արշաւանքը Հայաստանի վերայ և Տրդատի ազատութիւնը՝ Հոռվմ փախչելով։ 4. Թագավորակ Տրդատի վերադարձը և Սուրբ Գրիգորի շարշարանքներն ու Արտաշատու վիրապը ձգուիլը։ 5. Սուրբ Հոռվմիմեան և Գայիանեան կուսանաց փախուստը Հոռվմից և նահատակութիւնը Հայաստանում։ 6. Սուրբ Գրիգորի վիրապից դուրս գալը, ձեռնազրութիւնը, կատարած գործերը և Հայաստանի մկրտութիւնը։ 7. Սուրբ Գրիգորի միւս գործերը, և Կաթողիկէ Սուրբ Էջմիածնի և միւս Եկեղեցիների շինութիւնը, Մանեայ այրը առանձնանալը և վախճանը։—Հարական Սուրբ Լուսաւորչի ծագման—Ժը. ի վշարեր արմատոյ...։ Հարական Սուրբ Լուսաւորչի Վիրապը մանելու։—Ժդ. Պարտկից...։ Հրաշալի...։ Հարական Վիրապից դուրս գալու։—Ժե. Հրաշաղործ...։

Ժդ. Հարական ս. Լուսաւորչի կոչման, գործերի, Քահանայալեանալուն և Հայ ժողովրդին մկրտելուն։—Հրաշափառ...։ Տանն Աստուծոյ...։ Ըստրեալ...։ Որ համբերութեամբ...։ Ժէ. Հարական Կաթուղիկէ Սուրբ Էջմիածնի—Էջմիածնին ի Հօրէ...։ Ժը. Հարական Տըրդատայ թագաւորի—Որ ի ձեռն մազթանաց...։ ԺԺ. Հարական Սուրբ Հոռվմիմեանց և Գայիանեանց—Գեղեցկութիւնք...։ Թուլացան...։ ի վերայ միոյ...։ Լուան թագաւորք...։ Կանայք պատուականք...։ Մերժեցին զկարիս...։ ի. Հարական Ս. Լուսաւորչի առանձնանալուն Մեպուհոյ Մանիայ այրը, վախճանին և սուրբ Նշարների գտնուելուն—Լերինը ամենայն...։ Հովուին հսկողի...։ իշ. Հանգանակ նիկիական։

ե. Մեծն ներսէս։ իթ. Հարական Մեծին ներսիսի—Այսօր տօն է Եկեղեցի...։ Որ յանդիմանելով...։

զ. Ս. Սահակ Պարթև։ իզ. Հարական Սրբոյն Սահակայ Պարթևի—Որ նորափետուր բանիւ...։

է. Ս. Մեսրովի Մաշտոց։ իղ. Հարական Ս. Մեսրովայ Մաշտոցի—Էրեշտակ երեցեցար...։ Ստացող եղեր...։

ը. Տառերի գիւտը։ ին. Հարական Ս. Սահակայ և Մեսրովբալ—Որ երկրումքը...։ իզ. Հարական Տառպիտի և Ս. Մեսրովբայ—Որ խորհրդեամբ...։ Նմանեալ Մովսիսի...։

թ. Ս. Թարգմանիչը։ իէ. Հարական Սրբոց թարգմանչացն—Որ զգիտութիւն քո զերկնային...։

ժ. Ս. Ատովմեանք։ իթ. Հարական Ս. Ատովմեանց—Եղաչեմք զքեղ Տէր...։

ժա. Ս. Վարդանանք։ իթ. Հարական Ս. Վարդանանց—Նորահրաշ...։ Բամկական...։ Դոհութեամբ...։

ժբ. Ս. Ղետնղեանք։ լ. Հարական Ս. Ղետնղեանց—

Սահակայ և Յովսէփայ սուրբ հայրապետացն...: Որք ե-
կեալ հասեալք...: Որք չուեալ գնացեալք...:

Ժդ. Ս. Ջուշանիկ:

Ժդ. Ս. Եղիշէ:

Ժե. Ս. Մովսէս Խորենացի:

Ժդ. Ս. Գրիգոր Նարեկացի:

Ժէ. Ս. Ներսէս Ջնորհալի կամ Կլայեցի:

այ մրցան կոճազնա մարտակ մէջ ընդու մահաց
ու ուստանան առա սխութաւացն ու առ
ուստան այս առա սխութաւացն ու առ ուստան
ուստան առա սխութաւացն ու առ ուստան առա սխութաւացն ու առ ուստան

Ա. ԲԱԺԻՆ

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԵՐ.

ա. ՍՈՒՐԲ ԱՍՏՈԱԾԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՈՒՄԸ.

Յիսուսի Համբարձումից յետոյ, մերձաւորապէս,
տասն և եօթն տարի ևս ապրեց Աստուածամայրը երկրի
վերայ Յիսուսի սիրելի աշակերտ Յովհաննիսի հսկողու-
թեան տակ, ինչպէս յանձնարարել էր Յիսուս, ասե-
լով Յովհաննիսին—Ահա մայր քո. իսկ մօրն ասելով—
Ահա որդի քո:

Այդ յանձնարարութիւնից յետոյ անցել էր տասն և
եօթն տարի. և Աստուածամայրը, մօտաւոր հաշւով,
վաթսուն չորս տարեկան հասակում յայտնութիւն ստա-
ցաւ Գաբրիէլ հրեշտակապետից իւր մահուան օրերի մօ-
տենալու մասին: Աստուածամայրը նոյնպէս սիրով և
խոնարհութեամբ ընդունեց հրեշտակապետի այս վերջին
յայտնութիւնը՝ ինչպէս երբեմն նորա, իրեն, տուած
աւետիքը:

Աստուածամօր սուրբ բաղձանքն այն էր՝ որ մա-
հուանից առաջ տեսնէ առաքեալներին վերջին անդամ,
օրնէ նրանց և այնպէս մեռնէ: Նորա սուրբ բաղձանքը
կատարեց Աստուած—թէկ Առաքեալները, բարողութեան

գործավ, ցըռւել էին զանազան երկիրներ՝ սակայն բոլորն ևս, Բարդուղիմէսսից զատ, Աստուածամօր մահուանը նեեկայ էին. և տեսան—թէ ինչպէս երկեցաւ նորա Միածին որդի Քրիստոսը և հրեշտակների ներկայութեանը՝ ընդունեց իւր ամենասիրելի Մօր լուսեղին հոգին:

Առաքեաները, աշակերտները, աշակերտուհիները, սուրբ կոյսերը որոնք ներկայ էին. նաև շատ հաւատացեաներ վառ լազտերներով, ջահերով, սաղմոսերդութեամբ և խնկարկութեամբ վերցրին սուրբ մարմինը և տարան Գեթսեմանի. ու մի այրի մէջ դրին:

Երեք օր մնացին գերեզմանի մօտ, որպէս զի թըշնամի Հրէաները չվերցնեն Ամենօրհնեալ Աստուածամօր մարմինը. և երեք օր ևս նորա լսում էին օդի մէջ հրեշտական օրհներգութիւններ. երեք օրից յետոյ օրհներգական ձայները լուեցին. և իրանք հեռացան դարձեալ իրենց երկիրները:

Սուրբ Աստուածանի վերափոխման յիշատակը մեր Եկեղեցին կատարում է Օգոստոս ամսի միջնաթուերին հանդիպած Կիւրակէ, իննը օր տեղութեամբ¹⁾:

ՍՐԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.

Սուրբ Աստուած, Սուրբ և Հոգօր, Սուրբ և Սնաման որ եկիր ի փոխումն մօր քո և կուսի. ողորմեամեղ:

¹⁾ Հարցել տալ սահերին—ալզ օրը Տփխիսի Հայոց ժը Եկեղեցւու տօնն է, ինչու համար. Բնէ սրբազան արարողութիւն կամ ծէս է կատարում ալզ օրը. Բնէ է ալզ ծիսէ խորհուրդը:

ՅԱՅՆ ԹՈՎՄԱ ԱՌԱՔԵԼՈՅ ԱՍԱԾ ԱՂՅԹԱԿԱՆ ԵԲԴԸ Ի ՊԱ-
ՏՈՒԱՅՆ ՍԻՒ ԱՍՏՈՒԱԾԱԾՈՅ.

Փառաւորեալ և օրհնեալ միշտ սուրբ կոյս Աստուածածին Մարիամ՝ մայր Քրիստոսի. մատոն զաղաշանս մեր որդւոյ քո և Աստուծոյ մերոյ:

Ո՞վ փառաւորեալ և օրհնեալ մայր Քրիստոսի Աստուածածին Մարիամ, որ կոյս էիր և միշտ էլ սուրբ կոյս մնացիր. դիմք մեր աղաչանքները Քո Որդւոյ և մեր Աստուծոյ առաջ—բարեխօս եղիր նորա առաջ մեզ համար:

բ. ՇԱՐԱԿԱՆ ՓՈԽՄԱՆ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ.

Հոյլք վերին զօրացն իշեալ՝ շուրջ զկուսիւ պարառեալ, զերզս օրհնութեան եղանակեալ՝ քաղցը ձայնիւ ակումբ առեալ...:

Զայնակից նոցին եղեալ՝ դասք երջանիկ պետացն ընտրեալ. ի Հոգւոյն վերաբերեալք՝ որք յընդհանուր աշխարհ սփռեալք...:

Փողովեալ սուրբ գնդին՝ երկոտասան դասուց խմբին. սլացեալք որպէս զարծիւք՝ յերուսաղէմ քաք հասին:

Ղամբարափայլ ջահիւք լուցեալ՝ սուրբ կուսանացն զումար առեալ. զերզս օրհնութեան նուազեալ ի պատիւ մօրն ամենօրհնեալ...:

Սերովբէից գունզք հիացեալ՝ յորժամ տեսին զէրն իշեալ. ի փոխումն Աստուածածնին անապական և միշտ կուսին՝ զարհուրեալ զայս ասէին՝ Օրհնեալ ես սուրբ Աստուածածին:

Բարունեացն խմբից՝ աշակերտացն դասուց. բար-

ձեալ զմարմինն մաքուր՝ Աստուածարեալ սուրբ բագկօք. եղին ի դեր հանգստեան քաղցրածայնեար սաղմոսիւք:

Ցնծալից բերկրանօք և յորդահոս արտասւօք եղանակէին քաղցը երգօք՝ երեքօրեայ խմբեալ պարուք:

Հրեշտակների դասը—երկնային դօրքերի բաղմութիւնը երկնքից իջնելով՝ օրհներգական երգերով պարէին բռնել սուրբ կուսի շուրջը:

Ընտրեալ երջանիկ զլխաւորների դասը—խումբը՝ օրհներգակից եղան հրեշտակներին, թէկ ընդհանուր աշխարհ էին տարածուած տռաքեալները՝ բայց չոգով Մըրով երուսաղէմ վերաբերուեցին:

Տասներկու տռաքեալների սուրբ խումբը արծուէթուիշ արագութեամբ երուսաղէմ հասան:

Սուրբ կոյսերը դամբարափայլ վառած ջահերը ձեռքերին բռնած՝ հաւաքուեցին, և ի պատիւ ամենօրհնեալ Աստուածամօր՝ օրհներգներ—երգեցին:

Սերովբէների գունդը հիացաւ. երբ տեսաւ որ Տէրը ինքն է իջել անապական և միշտ կոյս Աստուածածնի փոխման համար. և զարհուրելով՝ ասում էին—օրհնալ ես, ավ սուրբ Աստուածածին:

Դասավետների խումբ՝ աշակերտների դասը, սուրբ բազուկներով մաքուր մարմինը վերցըին և քաղցրածայն սաղմոսերգութեամբ դրին հանգստեան տեղը:

Ցնծալի բերկրանքով և յորդահոս արտասուքներով, երեք օր գերեզմանի շուրջը խումբ կապած՝ քաղցը երգեր էին եղանակում¹⁾:

¹⁾ Որորհետև թարգմանութեան մէջ, լեզուի գեղեցկութիւնը պահելու համար, երբեմն զրաբարաձե պարբերութիւններ են դրւում. ուսուցիչը պէտք է պարզաբանէ իւր բացարութիւններով.

Բ. ՅԱՅԵՆՈՒԹԻՒՆ ՎԱՐՍԳԱՑ ՍՈՒՐԲ ԽԱԶԻ

Երբ սուրբ չոխիսիմեան կոյսերը Դիոկետիանոս կայսեր երեսից փախստական եկան մեր հայաստան աշխարհը՝ փոքը ինչ հանգիստ առան Վարագ լերան վերայ: Եւ որովհետև սուրբ չոխիսիմէն պարանոցից կախած ունէր մի խաչ, որի մէջ ամրացած էր Կենաց փայտի, այսինքն այն Խաչափայտի մասը՝ որի վերայ խաչուած էր երբեմն Քրիստոսը: Այդ խաչափայտի մասը Պատրոնիկէ թագուհին, որ Կողեայ կայսեր կինն էր՝ Երուսաղէմից տարաւ չոռվմ. և որովհետև չոխիսիմէ կոյսը նրանց ազգական էր, ուստի Պատրոնիկէն նորապարանոցից կախեց այդ խաչի մասը, իբրև պահապան կուսին: Գալով Տոսպ գաւառի Վարագ լեառը և վախենալով թէ մի գուցէ Հայաստան—հեթանոսների աշխարհը գնալով յափշտակեն կենաց փայտը և անարգեն՝ ուստի լերան գլխին մի տեղ փորեցին և այդ փորուածքի մէջ խնամքով ծածկեցին Սուրբ Խաչի մասը. և իրենք եկան Վաղարշապատ. իսկ նոցա ուղեկիցներից մի քանի քահանաներ ու կոյսեր այնտեղ մնացին, իբրև սպասաւորներ Սուրբ Խաչին:

Այդ անցքից յետոյ անցնում է 353 տարի և Խաչը անյայտութեան մէջ է մնում մինչեւ Վարդ Պատրիկ իշխանի և ներսէս Շինող կաթողիկոսի օրերը: 653 թուին Գլակայ վանքի վանահայր Թողիկ ճգնաւորը և նորա Յովիկ աշակերտը Վարագ լերան մէկ քարի վերայ տեսան լոյս կանգնած. և լուսոյ շուրջը՝ տասն և երկու լուսեղէն սիւներ և հրեշտակական օրհներգութիւններ էին լսում: Երբ զմայլուած ու ապշած նայում էին տակաւին՝ տեսան—որ քարի վերայ կանգնած լոյսը բարձրացաւ օդի մէջ խաչած և գնալով՝ մտաւ Եկեղեցին, իսկ

լուսեղէն սիւները դարձեալ իրենց տեղերում անշարժ մնացին:

Ճգնաւորի ու իւր աշակերտի հետաքրքրութեանը և ապշութեանը չափ ու սահման չկար՝ երբ մանելով Ելիդեցին, տեսան որ այն խաշաձե լոյսը կանգնած է սուրբ Սեղանի վերայ: Խոկոյն երեսների վերայ ընկան, երկրպալդեցին և փառաբանեցին Աստուծուն այս հրաշալի տեսիլքի մասին:

Տաններկու օր լուսեղէն սիւները մնացին Վարագ լերան վերայ. հեռաւոր բնակիչներն անգամ տեսան: Եւ երբ այս բանն իմացաւ Ներսէս Դ. Շինող կաթողիկոսը՝ Թշունեաց Վարդ նախարարին հետն առաւ և շատ հոգերականներով ու աշխարհականներով եկաւ այնտեղ. փորել տուեց այն տեղը՝ ուր լոյսն էր կանգնած և ողի շուրջը տասն երկու լուսեղէն սիւները. և փորուածքից հանեցին Սուրբ Հոգիսիմէ կոյսի պահած Կենաց փայտը—Սուրբ Խաչի մասը. և թափորական հանդէսով տարան Եկեղեցի ու բազմեցրին Սուրբ Սեղանի վերայ, ուր լոյսն էր կանգնել. երկրպագեցին, աղօթեցին և փառաբանեցին Աստուծուն այս հրաշալի յայտնութեան համար: Բայց որպէս զի շմոռացուի այս անցրը՝ ուստի Ներսէս Շինող կաթողիկոսը տօն և պահճ սահմանեց ի պատիւ Վարագայ Սուրբ Խաչի յայտնութեան. տօնը կատարւում է Հոկտեմբեր ամսին. իսկ շաբաթական պահճը ասւում է Վանցոց պահճ: Իսկ տասներկու լուսեղէն սիւների տեղերում շինեցին տասներկու մատուռ. իսկ այն Եկեղեցին, ուր բազմեցրին Սուրբ Խաչը, նորոգեցին—մեծացրին և նորա մօտ միանձանց հոչակաւոր փանը շինեցին:

Վարագայ Սուրբ Խաչի յայտնութեան յիշատակը մեր Եկեղեցին կատարում է Վերացման Խաչի Գ. Կիւ-

րակէին. որը դալիս է երբեմն Սեպտեմբերի վերջին և երբեմն Հոկտեմբերի սկզբին:

գ. ՇԱՐԱԿԱՆ ՎԱՐԱԳԱՅ ԽՈԶԻ.

Որ զլոյս անճառելի Աստուածութեանդ քո Քրիստոս. ի վերայ Խաչին ծագեցեր այսօր ի լեառն Վարագայ...:

Որ զահաւոր և զմիւսանգամ քո գալստեանն երկումն. ծագեցեր այսօր նշանաւ խաչի քո ճառագյութելով յերկրի...:

Որ յայտնեացն այսօր զիրկական նշանն, հրեշտակացն իջմամբ ի լեառն Վարագայ...:


Սա կամաւ քո Քրիստոս և թեօք ամենազօր սուրբ Հոգւոյն. և դասուք հրեշտակաց թոռւցեալ եկաւուրի. ի լեառն Վարագայ բնակիլ ի նմա:

Քո անճառելի Աստուածութեան լոյսը, ով Քրիստոս, ծագեցիր այսօր Վարագայ լերան Խաչի վերայ:

Քո միւսանգամ ահաւոր գալստեան երկումը—ձեր այսօր յայտնեցիր—Խաչի նշանը երկրի վերայ ճառագյութով¹⁾:

Քրկական նշանը—Խաչը, այսօր հրեշտակների Վարագ լերան վերայ իջնելով, յայտնեց Տէրը:

¹⁾Բացատրել սաներին, եթէ հնարաւորէ—որ Վարագ լերան վերաւ իջած լուսը՝ Քրիստոսն է. Լուսեղէն տասն երկու սիւները՝ տասն երկու առաքեալներն են. Հրեշտակական օրհներզը—հրեշտակներն են. ամբողջը՝ Քրիստոսի միւսանգամ փառաւոր զարւացնէ Հրեշտակներով և ամպերով օղի մէջ և դատաստանը՝ Առաքեալների ներկայութեանը.



Քո կամքով, նվ Քրիստոս, և Սուրբ Հոգոյ ամենազօր թերով և հրեշտակների խմբերով թռաւ, եկաւ Խաչը Վարագ լերան վերայ բնակուելու:

Գ. ԳԻՒՏ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ.

Կոստանդիանոս Մեծի մայր Հեղինէ թագուհին Սուրբ Խաչի սիրով վառուած՝ կամեցաւ գտնել այն Սուրբ Խաչափայտը, որի վերայ Հրէաները բեկուցին անպարտական փրկչին. և իւր այս սուրբ մտադրութիւնը իրագործելու նպատակով՝ 327 թուին ուղևորեցաւ Երուսաղէմ ուխտ անելու և Երկրպագութիւն տալու Փրկչի տնօրինական սուրբ տեղերին:

Հրէաները Երեք խաչափայտերն էլ թաղել էին հողի տակ Գողգոթայ լերան վերայ. իսկ Հոռովմայեցիք կռատուն էին շինել նոյն տեղում: Թէև դժուար էր թագուհու համար գտնել Խաչափայտը՝ բայց թագաւորական սաստին ու հրամանը և իւր հաւատքն ու ջերմեռանդ բաղձանքը, միւս կողմից էլ Աստուծոյ օգնութիւնն ու օրհնութիւնը դիւրացրին դժուարութիւնները. և Խաչափայտը գտնուեցաւ Յուգա անունով մեծերունի Հրէայի ցուցմամբ:

Թագուհու հրամանով ցոյց տուած տեղը փորեցին, Երեք խաչափայտերն էլ գանուեցան և իսկոյն մի հաճելի անուշահոտութիւն բուրեց. Պիղատոսի հրամանով Յիսուսի խաչի վերայ գրած տախտակն էլ Երևեցաւ:

Եւ որովհետեւ խաչերի միաշափութիւնը և նմանութիւնը դժուարացնում էին որոշելու Յիսուսի խաչը այն Երկու միւս խաչերից՝ ուստի Երուսաղէմի Մակարիոս պատրիարքը, որի կենդանի հաւատը շատերին յայտնի էր, Յիսուսի խաչը միւսներից որոշելու համար՝ հետեւալ

Երկու միջոցներին դիմեց, առաջին՝ հրամայեց քերել մի մահամերձ հիւանդիք. Պատրիարքը խաչերը կարգով դիպցնում էր հիւանդին. Երբ Երբորդ խաչը դիպցրեց՝ հիւանդը իսկոյն առողջացաւ: Երկրորդ՝ նոյն կարգով խաչերը զրին մի մեռեալի վերայ. Երբ Յիսուսի Կենարար Խաչը զրին նորա վերայ՝ մեռեալլ յարութիւն առաւ, կենդանացաւ:

Այս հրաշալի փորձերը, իբրև դրական վաստեր, համոզեցին և հաւատացրին ամենքին—որ Երբորդ հրաշագործ խաչը Յիսուսի խաչափայտն է, որը զիտմամբ ծածկել էին Հրէաները, որպէս զի ապագայում շպաշտուի Քրիստոնէաներից.

Մակարիոս պատրիարքը հոգեորական ուխտի և աշխարհական գասի հետ թափորական մեծ հանդիսով Սուրբ Խաչափայտը Գողգոթայից տանում է Երուսաղէմայ տաճարը, և բէմի վերայ պատրիարքը բարձրացնելով ի տես հաւատացեաների՝ օրհնում է Նրանց և բազմեցնում է այնտեղ. բոլորն էլ Երկրպագեցին Սուրբ Խաչին:

Խաչգիւտի յիշատակը մեր Եկեղեցին կատարում է Խաչվերացից յետոյ վեցերորդ կիւրակէին, հոկտեմբեր ամսին:

Գ. ՇԱՐԱԿԱՆ ԽԱՉԳԻՒՏԻ.

Այսօր խնդըի պատուական փայտ խաչին աւանդեալն ի Գողգոթա. ի ձեռն Աստուածամէր զշխոյին...:

Այսօր ընծայէ Գողգոթա զծածկեալն ի յերկրի վերաբերեալ անուշահոտ խնկովք. ի ձեռն Երանելոյն Յուղայի...:

Այսօր ի ձեռն վրկական սուրբ խաչին. կենարքործի պատանին մեռեալ...:

Անճառելի երեսում երեսեալ դշխոյին. նստելով յատենի յերուսաղէմ. խնդրէը զպատուական փայտ խաշին. յոր զՄեսիայն բևեռեցին:

Մեծասաստ հրամանաւն ժողովեալ Հրէից. ցուցանելով նմա զպատուական փայտ խաշին...:

Ընդ յայտնիլ սրբոյ Խաշին ի տեղուջն սրբութեան. բուրմամբ անուշահոտ խնկոց. և լցան տիեզերք մեծապէս պարզեօք:

Այսօր, Աստուածամէր թագուհու ձեռքով, որոնւում է այն պատուական Խաշափայտը՝ որ աւանդուած էր—թաղուած էր Գողգոթայում:

Այսօր, երանելի Յուդայի ձեռքով, Երկրի մէջ ծածկուած Խաչը Գողգոթան ընծայում է որոնողին անուշահոտ խնկան բուրմունքներով:

Այսօր, փրկական սուրբ Խաչի զօրութեամբ, մեռեալ պատանին կենդանանում է:

Այն անթաքչելի գանձը, որ Հրէաները թագցրել էին, թագուհու փափագելովը կենաց փայտ յայտնուեցաւ¹⁾:

Անճառելի էր թագուհուն յայտնուած երեսյթը. տառեան էր նստել երուսաղէմում և որոնում էր այն խաշափայտը՝ որի վերայ Մեսիային բևեռեցին:

Թագուհու մեծասաստ—սաստիկ խիստ հրամանովը ժողովեցան Հրէաները և ցոյց տուին նորան պատուական խաշափայտը:

Սուրբ տեղումը, անուշահոտ խունկերի բուրմունքներով Սուրբ Խաչի յայտնուելովը՝ աշխարհը մեծ պարգևներով լցուեցաւ²⁾:

¹⁾ Բացատրել—կենաց փայտ յայտնուեցաւ. Բնչպէս:

²⁾ Բացատրել—աշխարհը մեծ պարգևներով լցուեցաւ. Բնչ պարզեներ:

Դ. ԵՐԵՒՈՒՄՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ.

Կիւրեղ Երուսաղէմայ եպիսկոպոսը և ընակիչները Քրիստոսի 351 թուականին Մայիսի 7-ին, Հրէից Պենտեկոստէի տօնի օրը մի հրաշալի երեսյթ են տեսնում օդի մէջ—Գողգոթայի երկնքում երեսում է Յիսուսի Կենարար Խաչը լուսաձե, որը փակում է իւր մէջ արեգական ճառագայթները. և որի լուսոյ ճաճանչները ճառագայթում է և Գողգոթայից մինչև Զիթենեաց լիառն է տարածւում:

Այս հրաշալի երեսյթի մասին Կիւրեղ Երուսաղէմացին թուղթ է զրում Հոռվմայեցւոց Կոստանդ կայսրին, որ Կոստանդիանոս մեծի որդին էր, պատմելով հրաշալի տեսիլը և ներբողելով Սուրբ Խաչը:

Քրիստոնեայ ժողովուրդը հիացած այս տեսիլքով՝ խուռն բազմութեամբ հաւաքւում են Եկեղեցի և փառաւորում են Աստուծուն և նորա Միածին Որդի—Յիսուս Քրիստոսին. և այդ օրը, ինչպէս վկայում է մեր Յայսմաւուրը¹⁾ 100,000 հոգի հաւատացին Քրիստոսին և մկրտուեցան:

Սուրբ Խաչի երկման լիշտակը մեր եկեղեցին կատարում է Յինանց հինգերորդ Կիւրակի օրը—Զատկից յետոյ հինգերորդ կիւրակին:

Ե. ՇԱՐԱԿԱՆ ԵՐԵՒՄԱՆ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ.

Այսօր ընդ ամպս լուսաւորս երեսեալ նշան տէրունական խաշին. բոցանիչ փայլմամբ տեսողացն ընթացեալք ի քաղաքն պատմէին...:

¹⁾ Բացատրել սաներին Յակոմաւուրը կամ վկաւաբանութիւն սրբոց:

Քրիստոս Աստուած... առաւել քան զարեգակն զնշան քո յաղթող հրաձե ցուցեր գեր ի վերոյ սըր-բոյն Գողգոթայ...:

... պայծառ և սուրբ Քրիստոս իւաչ քո Տէր, զարդարեալ ի լուսոյ յերկնից ցոլացեալ երեխւր յերուսաղէմ...:

Եւ բոցաճաճանջ փայլմամբ՝ արեգակնայիցն յաղ-թէր ճառագայթից...:

Որ զահաւոր խորհուրդ միւսանգամ զալստեանն իւրոյ Քրիստոս. տպաւորեաց փայլմամբ սուրբ խաչին...:

Այսօր տէրունական խաչի նշանը ամպերի վերայ լուսաւոր և բոցափայլ երկեցաւ տեսնողներին, որոնք գնացին քաղաք պատմելու ամենքին:

Ո՞վ Քրիստոս Աստուած, Քո յաղթող հրաձե նշանը Սուրբ Գողգոթի բարձունքի վերայ—Գողգոթայի երկրն-քում արեգակից աւելի փայլով ցայց տուիր: Տէր, Քո լուսագարդ—լուսով զարդարուած Քրիստոս պայծառ ու սուրբ խաչը երկնքից ցոլանալով՝ Երուսա-ղմումն էր երկում...:

Եւ բոցաճաճանջ—բոցի նման ճաճանջ ունեցող փայլմունքներով արեգակի ճառագայթներին էր յաղթում: Քրիստոսը իւր միւսանգամ՝ զալստեան ահաւոր խորհուրդը այսօր Սուրբ Խաչի փայլմամբն է տպաւո-րում հաւատացեալների մէջ...¹⁾.

¹⁾ Բացատրել—որ սա ևս մինսոն խորհուրդն ունի, որ ինչ Վարագոյ Սուրբ Խաչի բարանութեան շարականի մէջ տես-

Ե. Վերը ՅՈՒՐԻ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԿԱՄ ԽԱՉՎԵՐԱՅ.

Քրիստոսի 614 թուականին Պարսից Խոսրով թա-գաւորը ուղարկեց իւր Խոռնեմ փեսային Յունաց Հերակլ կայսրի դէմ պատերազմի: Խոռնեմը ասպատակեց Յունաց աշխարհը, անցաւ Պաղեստին և յարձակուեցաւ Երուսա-ղէմի վերայ. կողոպատեց քաղաքը, շատ վնասներ հասցը-րեց քաղաքին ու բնակիչներին, կոտորեց յիսուն հազար հոգի, կործանեց Գողգոթայի վերայ շինուած սուրբ Յա-րութեան Եկեղեցին, յափշտակեց Քրիստոսի սուրբ խա-չափայտը և երեսուն հազար գերիների հետ՝ տարաւ Պարսկաստան. իսկ Խոսրովը Յիսուսի խաչափայտը գրաւ իւր մեհենի մէջ:

Յունաց Հերակլ կայսրը Քրիստոսի 620 թուին Յոյն և Հայ գօրքեր հաւաքեց և յարձակուեցաւ Պարսկաստա-նի վերայ. յալթեց պարսիկներին, կոտորեց երեսուն հա-զար հոգի: Վեց տարի գրեթէ շարունակուեցաւ պատե-րազմը, որից յետոյ խաղաղութեան գան կապեցին, խա-զաղութեան պայմաններից մէկն ևս էր—Խաչի դարձը:

Հերակլ կայսրը յաղթող վերագարձաւ Յունաստան, Երբ Խոռնեմը Արտաշելի ժառանգին սպանելով, ինքը թա-գաւորեց Հերակլի օգնութեամբ, մեծ պատով սուրբ խաչը ուղարկեց Հերակլին: Հերակլ կայսրը շատ ուրա-խանալով սուրբ Խաչի դարձի պատճառով՝ 629-ին Կոս-տանղնուպօլիսից տարաւ Երուսաղէմ. ուր հանում է վրա-յից արքայական զգեստը, ումն է առնում սուրբ խաչա-փայտը և բոկոտն—բոպիկ ոտով Գողգոթայ է բարձ-րացնում: Յետոյ թափօրական մեծ հանդիսով սուրբ խա-չափայտը բարձրացրած՝ տանում բազմեցնում է իւր

Նախկին տեղը։ Այդ բարձրացնելու պատճառով՝ ասւում
է Խաչվերաց կամ Վերացումն սուրբ խաչի¹⁾։

Խաչվերացի յիշտառակը մեր եկեղեցին կատարում է Սեպ-
տեմբերին. սուրբ Աստուածածնի ծննդեան տօնից յետոյ։

Զ. ՀԱՐԱԿԱՆ ԽԸՉԻ.

Նշանաւ ամենայաղթ խաչիւդ քո Քրիստոս. պահ-
պանեա զմեզ մարդասէր յաներևոյթ թշնամւոյն. զի
գու միայն եւ թագաւոր փառաց. օրհնեալ յափտեան։

Որ ի վերայ սորա տարածեցեր զանարատ բա-
զուկս քո. և հեղեր զարիւնդ ի փրկութիւն տիեզերաց.
զի դու...։

Ի միւսանդամ քո գալստեանն յերեիլ սուրբ
նշանիս. արժանի արա զծառայս քո վերստին նո-
րոգման. զի դու...։

Քո ամենայաղթ խաչիւդ նշանովը, ով Քրիստոս,
պահպանիր մեզ աներևոյթ թշնամուց, մարդասէր Տէր.
որովհետի դու ես միայն փառքի թագաւորը և օրհնեալ
ես յափտեան։

Սորա վերայ տարածեցիր քո անարատ բաղուկները.
և տիեզերքի փրկութեան համար արիւնդ թափեցիր.

Քո միւսանդամ գալստեանը, երբ այս Սուրբ նշա-
նը կերեի, Քեզ հաւատացողներիս արժանի արա նո-
րոգման²⁾։

¹⁾ Ուսուցիչը կամփոփէ խաչի չորս տօները համառօտ
կերպով. և կբացատրէ—որ չորս տօներն ևս կարող են ասուել
վերացումն խաչի կամ խաչվերաց. որովհեե խաչի
վերացումը նշանակում է բարձրացնել ըստ Դաւիթ Անդրեա-
քարձրացուցէք զջէր Աստուած մեր...։ Խաչ և խաչեալ միա-
սին հասկանալով։

²⁾ Բացտարել սաներին—մեր միւս անգամ նորոգումը։

Բ. ԲԱԺԻՆ.

ԱԶԳԱՑԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ա. Հայաստանի առաջին Քրիստոնէական լուսաւորու-
թիմը—

Արդար՝ առաջին Քրիստոնեալ Հայ թագաւոր. նորա տկարու-
թիւնը և ղետպանները. իւր նամակը և Յիսուսի պատասխանը.
Դաստառակը և Արդարի հաւատալը։

Հայոց Արգար թագաւորը, որ նստում էր Եղեսիա-
յում, Պարսից Արշաւիր թագաւորի մահուանից յետոյ,
Արտաշէսի և նրա Կարէն ու Սուրէն եղբայրների մէջ յա-
ռաջացած խովութիւնները դադարեցնելու համար գնաց
Պարսկաստան. ուր և հիւանդացաւ բորսութեան ցա-
ւով Փրկչական 26 թուականին և վերագարձաւ իւր
Եղեսիա քաղաքը։

Լոելով՝ թէ ամբաստանել են իրեն Տիբերիոս կայ-
սեր առաջ, ղետպաններ ուղարկեց Պաղեստինի կողմերի
վերակացու չոռվայեցի Մատինոս իշխանին իրեն ար-
դարացնելու համար։ Դեսպանները վերադառնալիս՝ լսե-
ցին Յիսուսի կատարած սքանչելի գործերի մասին. ուս-
տի փոխանակ Եղեսիա դալու գնացին Երուսաղէմ, որ
անձամբ ստուգեն լսածները։

Դեսպանները վերադառնակ պատմեցին Արգարին
Յիսուսի կատարած հրաշալի բժշկութիւնները առանց
դեղի և միայն խօսքով։ Արգարը հաւատաց և ասաց—
Նա կամ Աստուած է երկնքից իշած և կամ Աստուծոյ
որդի։ Եւ որովհետի եօթ տարի շարունակ շարաշար
տանջում էր բորսութեան ցաւով և բժշկական օգնու-

թիւնից ոչ մի արդիմք չեղաւ՝ ուստի Քրիստոսի 32
թուականին գրեց Յիսուսին հետեւեալ նամակը—

«Երգար Արշամի որդի, իշխան աշխարհի. Յիսուս
Փրկչին և Բարերարին, որ երևեցար Երուսաղէմացւոց
աշխարհումը՝ Ողջոյն:

Լսեցի Քո մասին և բժշկութիւններիդ մասին, որ լի-
նում է Քո ձեռքով առանց գեղերի և արմատների. ո-
րովհետեւ, ինչպէս ասում են—կոյրերին աշք ես տալիս, կա-
ղերին՝ ոտք. բորոտներին սրբում ես. պիղծ դեկրը հա-
նում ես. Երկար հիւանդութիւնից տանջւողներին բժշ-
կում ես. մեռելներին անզամ յարութիւն ես տալիս. Եւ
երբ լսեցի այս բոլորը Քո մասին՝ մտածեցի—որ Դու՝
կամ Աստուած ես, որ երկնքից իջել ես ու այդ գոր-
ծում ես, կամ Աստուծոյ Որդի ես. Լսեցի նաև, թէ
չըշաները տրտնջում են Քեզանից և ուզում են չարշա-
րել: Այս պատճառով գրում եմ Քեզ ե յայտնում, որ ես
մի փօքրիկ քաղաք ունիմ Եղեսիա անունով, Երկուսիս
շատ բաւական. Եկ ինձ մօտ, բորոտութիւնս կբժշկես
և միասին խաղաղութեամբ կապրենք...»:

Այս նամակը յանձնեց գեսապաններին և նրանց հետ
գրեց մի նկարիչ, Յովհաննէս կամ Անանէ անունով, որ
եթէ չկամենայ գալ՝ պատկերը նկարէ և բերէ, որպէսզի
իւր սրտի փափազն առնէ: Պատուիրեց գեսապաններին—
մտնել Երուսաղէմայ Տաճարը և զոհեր մատուցանել Աս-
տուծուն իւր առողջութեան համար: Դեսպանները հա-
սան Երուսաղէմ այն ժամանակ՝ երբ Յիսուս յազթական
կերպով և հանդիսով մտնում էր քաղաքը: Նամակը հաս-
ցրին Յիսուսին Փիլիպոս և Անդրէաս առաքեալների
ձեռքով¹⁾:

¹⁾ Կարելի է Աւետարանից կարդալ այդ կտորը և թարգ-
մանել սամներին: Ցով. Ժ. 20—22:

Յիսուս նամակը կարգալուց յետոյ՝ պատուիրեց Թով-
մասին պատասխանել Արգարի նամակին հետեւալը—

«Երանի՛ է նորան, ով որ կհաւատայ ինձ, իրեւ ինձ
շտեսած. որովհետեւ իմ մասին այսպէս է գրուած—որոնք
չեն տեսնում ինձ՝ կհաւատան և կապրեն. իսկ որոնք
տեսնում են՝ նորան ինձ չեն հաւատալ: Իսկ իմ քեզ մօտ
գալու մասին, որ գլուխ էիր՝ ես չեմ կարող գալ. որով-
հետեւ ես պիտի կատարեմ այն ամենը, ինչի համար
որ ուղարկուած եմ: Եւ երբ կկատարեմ այն ամենը՝
կհամբառնամ ինձ ուղարկողի մօտ: Այն ժամանակ կու-
ղարկեմ քեզ մօտ աշակերտներիցս մէկին՝ որ կըբժշկէ
քո ցաւը. և քեզ, և քեզ հետ բոլոր եղողներին կեանք
կշնորհէ»:

Անանէ նկարիչը մի բարձր քարի վերայ նստեց և
աշխատում էր ծածուկ նկարել Յիսուսի պատկերը, երբ
Յիսուս խօսում էր ժողովրդի հետ, բայց չէր յաջողւում
նորան: Ծածկագէտ Յիսուսը իմանալով նորա սրտի ցան-
կութիւնը՝ կանչեց իւր մօտ, առաւ մի գաստառակ,
զրեց իւր Աստուածային երեսի վերայ և իւր սուրբ պատ-
կերը տպուեցաւ դաստառակի վերայ. այդ պատճառով
էլ՝ ասուեցաւ անձեռագործ պատկեր և տուաւ նորան
և միւսներին ու ասաց—տանել այդ նամակի հետ և տալ
Արգարին որ միսիթարուի:

Դեսպանները Պատուառակն ու նամակը հետներն ա-
ռած՝ վերադարձան Եղեսիա և տուին թագաւորին: Ար-
գարը անպատճելի խնդութեամբ լցուեցաւ և մեծ ջեր-
մեռանդութեամբ երկրպագեց սուրբ Պատկերին և ցաւին
թեթեսութիւն զգաց. կարգաց նամակը և անհամբեր
սպասում էր նամակի մէջ յիշուած խոստման կատարմանը:

Արգար թագաւորը պատուիրեց—որ մեծ զգուշու-
թեամբ պահեն թէ նամակը և թէ Պատճառակը:

Արգարի, իրրե առաջին չայ քրիստոնեայ թագաւորի, Յիսուսին հաւատալու յիշատակը մեր Եկեղեցին կատարում է Գելտեմբեր ամսին. Թաղէսս և Բարդուղիմէսս առաքեալների տօնից գրեթէ քսանօրեայ միջոց յետոյ:

Բ. ԱՌԱՋԻՆ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԼՈՒՍԱԽՈՐԻՉՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ—
ԹԱԴԵՈՍ ԵՒ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՐԸ ԱՐԱԳԵԱԼՆԵՐԸ.

Աւետարանի կամ Քրիստոնէութեան առաջին քարոզիլ չայաստանում եղաւ սուրբ Թաղէսս Առաքեալը, որ Քրիստոսի եօթանասուն երկու աշակերտներիցն էր:

Յիսուսի չամբարձումից յետոյ սորան վիճակուեցաւ չայաստանը. և սա 33 թուականին եկաւ Եղեսիա, բերելով իւր հետ կողամուխ գեղարդը ¹⁾: Ներկայացաւ թագաւորին, որի մօտ հաւաքուած էին չայ նախարարներն ու մեծամեծները. քարոզեց Քրիստոսի իրկազործ տնօրինութիւնները, բժշկեց թագաւորին և մկրտեց նորան և բոլոր պալատականներին: Այնուհետև բժշկեց Եղեսիայի մէջ եղած հիւանդներին, մկրտեց ժողովրդին, շինեց Եկեղեցի, որը եղաւ առաջին Քրիստոնէական Եկեղեցին Եղեսիայում և վերջը կոչուեցաւ Սստուածածնայ Եկեղեցի: Թագաւորի խոյը կամ թագ շինող Աղքէին, Քրիստոնէական ուսմունքը սովորյնելուց յետոյ՝ քահանայական կարգ տուեց և յետոյ Եպիսկոպոս ձեռնադրելով կարգեց Առաջնորդ և Հովիւ Եղեսիայի: Եղեսիա քաղաքի գրան վերայ հրամայեց Արգար՝ բազմեցնել Թաստառակը, որը ոսկեղարդ շրջանակի մէջ էր գրուած. և քահակել տուաւ նորա տակը հետեւալլ—Քրիստոս Աստուած. Քեզ վերայ յոյս դնողը շի խաբուի իւր յոյսի:

¹⁾ Գեղարդը գտնուում է ալժմ Ս. Էջմիածնայ թանգարանումը:

մէջ: Հրաման հանեց—որ ամեն ոք, որ կմտնէ քաղաքը՝ պարտաւոր է արժանաւոր յարգանք և երկրպագութիւն տալու Աստուածային Պատկերին:

Ամեն ինչ կարգի դնելուց յետոյ, Արգարից հրովարտակ ¹⁾ տուաւ նորա Սանատրուկ քեռորդու վերայ, որ Արտազ դաւառի Հաւարշան քաղաքումն էր թագաւորում: Կեցաց այնտեղ, քարոզեց Սանատրուկին, Սանգուստ աղջկանը և պալատականներին. հաւատացին բոլորը և մկրտուեցան: Այնուհետև Հաւարշանի ժողովրդին քարոզեց և մկրտեց նոցա: Այստեղ ևս, ինչպէս և Եղեսիայում, կռատումները ²⁾ քանդեց, և նոցա տեղը խաչի նշանը բարձրացրեց. մատուռներ ու աղօթատուններ շինեց. իւր աշակերտներից՝ Զաքարիային Եպիսկոպոս ձեռնադրեց ու կարգեց Առաջնորդ և Հովիւ Հաւարշանի:

Այստեղ ևս ամեն ինչ կարգադրելուց յետոյ, գնաց Վիրին չայք, ուր շատերը շընդունեցին նորա քարոզութիւնը. այնտեղից գնաց Սիւնեաց և Ազուանից աշխարհները. ուր նոյն յաջողութեամբ քարոզեց և հաւատացեաներին մկրտեց. և յետոյ անցաւ Կապազովկացւոց Կեսարիա քաղաքը. ուր իւր աշակերտ Թէոփիլոս Աստիոքացուն Եպիսկոպոս ձեռնադրելով՝ Առաջնորդ և Հովիւ կարգեց Կեսարիայի ³⁾:

¹⁾ Բացատրել հրովարտակ բառը—թագաւորական հրամանագիր...

²⁾ Բացատրել կռատուն և կռապաշտութիւն բառերը:

³⁾ Հասկացնել սաներին—որ ամեն տեղ վերջացաւ Եպիսկոպոսական բաջորդութիւնը և Կեսարիաբում միայն մնաց և հասաւ մինչև չորրորդ դարը, երբ Վեռնդէս Եպիսկոպոսն էր. որից մեր Ս. Գրիգոր Լուսաւորիչը քահանական կարդուանական գույքը Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ և Հայուստանի առաջին Կաթուղիկոսը եղաւ:

Թաղէոսից յետոյ եկաւ չայաստան 65 թուականին Քրիստոսի առաքեալներից թարգուղիմէոսը. քարողեց Մեծ չայր աշխարհում. հաւատացեալների թիւը շատացրեց, եկեղեցիր հաստատեց, Եպիսկոպոսներ ու քահանաներ ձեռնադրեց:

Բարգուղիմէոս առաքեալը բերեց իւր հետ Սուրբ Աստուածածնի պատկերը: Այդ պատկերը Կիպարիս¹⁾ փայտի վերայ փորագրել էր Յիսուսի սիրելի աշակերտ Յովհաննէս Առաքեալը և Աւետարանիչը. և երբ Պաղեստինում բորոտութեան ցաւ էր տարածուած՝ առաքեալ ները խնդրեցին Տիրամօրը—որ օրհնէ իւր պատկերը նա օրհնեց պատկերը և ազօթեց—որ Աստուծոյ Սուրբ Հնորհը իջնէ պատկերի վերայ. և այդ պատկերը առաքեալերը, բորոտութեամբ վարակուած, հիւանդների վերայ դնելով՝ ազօթում էին, բորոտութիւնը սրբւում— առողջանում էր: Այդ պատկերը, իբրև սուրբ աւանդ, իբրև մի անգին գանձ էին պահում Առաքեալները:

Սուրբ Աստուածածնի մահուանը և թագմանը ներկայ չէր Բարգուղիմէոս առաքեալը: Նա երբ եկաւ և աեսաւ թէ արդէն թաղուած է՝ շատ տիրեցաւ, թէ ինչո՞ւ շարժանացաւ նորա օրհնութեանը և վերջին տեսութեանը: Խնդրեց Առաքեալներին—տանել իրեն և ցոյց տալ մարմինը գերեզմանի մէջ գտնէ: Գնացին, տապանը բացին և տեսան որ մարմինը չկայ. նոր միայն հասկացան—թէ երեք օրից յետոյ երբ դադարեցաւ հրեշտակական օրհներգը՝ կնշանակէ այն ժամանակ Տիրամօր սուրբ մարմինը հրեշտակները վերափոխել են իրինք:

¹⁾ Բացատրել Կիպարիս—նոճի ծառ կամ սոճի ծառ. սունա ասածն է. որ Յուլիս ամսին արեի տաքութիւնից իւղը դուրս է զալիս ու անուշահոտ և առողջարար բուրմունքով լցում է սոճիի—սոսնաչի անտառը:

Բարգուղիմէոսի տիրութեանը չափ չկար: Առաքեալները չգիտէին ինչ անեն. վերջապէս մտածեցին և միարան վճռեցին Տիրամօր սուրբ պատկերը նուիրել Բարգուղիմէոսին մխիթարութեան յիշատակ. այդպէս էլ արին:

Բարգուղիմէոսը առաւ այդ սուրբ գանձը և ուրախութեան վերադարձաւ չայաստան: Տիգրիս գետի մօտակայ Կանգուար բերդի մօտ մի Եկեղեցի շինեց և սուրբ պատկերը այնտեղ բազմեցրեց: Այնուհետև Եկեղեցւոյ շուրջը խցեր, բնակարաններ շինեց, կոյսեր հաւաքեց այնտեղ, Յուսիկ իշխանի Մարիամ քրօջը նոցա Մայրապետ կարգեց, նոցա համար քահանայ ձեռնադրեց. և այդ Եկեղեցին կոչեց—Աստուածածնայ Եկեղեցի կամ չողեաց Վանք:

Գ. ՍՈՒՐԲ ԹԱԳԻՈՍ և ԲԱՐԴՈՒՂԻՄԷՈՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ և ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒԽԾ ԿՈՒՍԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ.

Արգարի մահից յետոյ, գահը ժաւանգեց նորա Անանէ որդին: Նա թողեց իւր ընդունած Քրիստոնէական կրօնը և դարձեալ շարունակեց նախկին կռապաշտութիւնը: Նորա օրինակին հետեցաւ և Սանատրուկը:

Այնուհետև նորահաւատ Քրիստոնեաների գէմ հալածանք յարուցին, Եկեղեցիները, մատուռները, ազօթատները քանդեցին. կռապունները նորից բացին. և Քրիստոնեաներին կամ սպանում էին, կամ նորից դարձնում գէպի կռապաշտութիւն:

Սանատրուկը շատ ջանաց համոզել իւր Սանդուխտաղջկանը, որ Քրիստոնէութիւնը թողնէ և կռապաշտութիւնը նորից ընդունէ. բայց քաջարի Սանդուխտը, որի մէջ ճառագայթել էր Քրիստոնէական Կրօնի բոցա-

ճաճանջ լոյսը, ոչ համոզիչ խօսքերից դրաւուեց և ոչ սպառնալիքներից վախեց. այլ բացէ ի բաց մերժեց հօր առաջարկութիւնը, սաստն ու հրամանը:

Սանատրուկը շատ յուղուցաւ, տեսնելով իւր աղջկայ գիմադրութիւնը և լսելով Ոսկեանց՝ Քրիտոնէութիւն ընդունելը. և այս բոլորի պատճառը Թաղէոսին համարելով, իբրև թէ նա է խարել իւր աղջկանը և մոլորեցրել զեսպաններին, կանչեց Զաւարշան քաղաքը և նահատակեց 51 թուին. և նրա հետ էլ իւր դուստր Սանդուխտին:

Նորահաւատ Քրիտոնեաները սոցա մարմինները թաղեցին Զաւարշան զաւառի Սանատրուկ կոչուած դաշտումք. Սուրբ Թաղէոսի գերեզմանի վերայ յետոյ Եկեղեցի շինուցաւ. որ կոչում է Թաղէոս Առաքելոյ վանք¹⁾

Սուրբ Թաղէոս Առաքեալի նման՝ նահատակուցաւ նաև Սուրբ Բարդուղիմէոսը, դարձեալ Սանատրուկից. երբ Արեբանոս քաղաքում մկրտեց Սանատրուկի Ոգոնէ քրոջը և շատերին. Սանատրուկը բոլորին էլ նահատակել տուեց. իսկ Բարդուղիմէոսի մարմինը տիկ հանել տալով՝ հրամայեց Ազբակայ կողմը խաչ հանել 68 թուին:

Սուրբ Թաղէոս Առաքելոյ և Սանդուխտ կուսի նահատական հանդէուը մեր Եկեղեցին կատարում է Յուլիս ամսին, Պարդակառի առաջին կիւրակէի եօթնեկին. իսկ Սուրբ Թաղէոս և Բարդուղիմէոս առաքեալներինը միասին՝ կատարում է նոյեմբերին, Սուրբ Աստուածածնայ ընծայման տօնից յետոյ:

¹⁾ Սուրբ Թաղէոս Առաքելոյ աջը և զագաթի մասը արձաթի պահարանի մէջ դրուած՝ պահուում է Սուրբ Էջմիածնալ Թանգարանումը.

Է. ՇԱՐԿԱՆ ՍՈՒՐԲ ՍԱՆԴՈՒԽՏ ԿՈՒՍԻ.

Քե պարծի այսօր սուրբ Եկեղեցի. ով վկայուհի սուրբ Սանդուխտ. որ գհայրականն քո թողեր զպաշտօն. վասն Քրիստոսի հեղեղ զարիւն քո սուրբ:

Աշակերտեցար առաքելոյն Թաղէոսի և ի հաւատս ճշմարիտս հաստատեցար. ոչ խառնակելով ընդ հեթանոսական պաշտօնսն....:

Որ զտիկնութեանն քո թողեր զփառս. և Աստուածային փառօքն զարդարեցար:

Քեզանով, ով Սուրբ վկայուհի Սանդուխտ, այսօր Եկեղեցին պարծենում է. որովհետև քո հայրենի կուպաշտական կրօնը մերժեցիր և Քրիստոսի սիրոյ և Աստուածային սուրբ արիւնդ թափեցիր:

Թաղէոս Առաքեալին աշակերտ եղար և ճշմարիտ հաւատի մէջ հաստատուեցար. հեթանոսական պաշտամունքները մերժեցիր, նրանցից բոլորովին հեռացար:

Արքայաշուր—թագաւորական փառքով պճնուած տիկին կարող էիր լինել. բայց զու այդ փառքը շուղեցիր. մերժեցիր. և Աստուածային փառքով զարդարուեցար¹⁾:

¹⁾ Քացատրել շարականի մութ իմաստը և բառերը. Սանդուխտ կուսի արժանաւատկութիւնները շեշտել. Խօսել որդւոց հնազանդութեան մասին դէպի ծնողները. բայց որ դէպքում, երբ. լաւ բացատրել.

Ը. ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ և ԲԱՐԳՈՒՂԻՄՔՈՍ
ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ.

Հայրատունկ այգուոյն հրեղէն պարիսպք և բարձր
աշտարակ. ոսկեղէն բաժակը և ժիր մատուռակ. Հայ-
յաստանեաց հայր հոգեոր Բարդուղիմէոս և Թա-
դէոս... ¹⁾:

Ով Հայաստան աշխարհի և Հայ աղջի հայր Բար-
դուղիմէոս և Թադէոս, Հօր Աստուծոյ տնկած այգու—
Հայաստանի համար եղաք դուք հրեղէն պարիսպներ և
բարձր աշտարակներ, որպէս զի Քրիստոնէական այգու
մէջ նորից ոտք. չդնեն հեթանոսութեան գող այգեապան-
ները. Այդ Հայրատունկ Քրիստոնէական այգու—Հայաս-
տան Ազգի ու Եկեղեցոյ սրտի ու գրկի միջին դակք
եղաք ոսկեղէն բաժակներ՝ որ ամեննին չի ժանգոտի,
այլ միշտ իւր փայլն ու կշիռը մեծագին ունի. և արի
ու ժիր մատուռակներ—զինի բաժանողներ. Աւետարա-
նական բարողութեան ոսկեայ բաժակներով հողին պար-
արող ու գուարթացնող զինի բաշխող ու բաժանող
սուրբ Առաքեալներ, Հայաստանի Քրիստոնէական լու-
սաւորութեան պատճառը՝ դուք եղաք, փառքը՝ դուք.
պարձանքը՝ դուք. արդ՝ բարեխօս եղէք Հօր առաջ—որ
իւր տնկած և ձեր մշակած այգին միշտ ծաղկեալ և
աճեցուն յարատեէ:

¹⁾ Բացատրել ալս և ալսուհետեւ դաստանդելի շարա-
կանների, հոգեոր երգերի և առհասարակ, գրաբառ դարձու-
ածների մութ կէտերը, իմաստը, բառերը... և ալն. որպէս զի
զգացուին սաները՝ ըմբռներով դաստանդման նիւթը.

Թ. ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒՃԱԾՆԻ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՇԱՐԱԿԱՆԻՑ
ՍՈՒՐԲ ԲԱՐԳՈՒՂԻՄՔՈՍԻ ՄԱՍԻՆ.

... Բարդուղիմէ յետոյ եկեալ՝ և զտենչալին իւր
ոչ տեսեալ: Իիւծեալ ըամից դասուց սրբոց՝ զըղձումն
եղբօրն վճարեալ. բացեալ զտապանն ամենօրհնեալ՝
և զբաղձալին իւր ոչ գտեալ....

Բարդուղիմէոսը յետոյ եկաւ և իւր տենչալուն
շտեսաւ. որովհետև ուշացաւ, չհասաւ Աստուծածնի
մահուանն ու թաղմանը:

Սուրբ Առաքեալները հալում ու մաշտում էին
իրենց ընկերի տիսուր վիճակի մասին. և կամենալով
նորա վերջին փափազը կատարել՝ բաց արին ամեն-
օրհնեալ տապաւը. բայց Բարդուղիմէոսը այնտեղ էլ
չգտաւ իւր բաղձալի հոգեոր մօրը:

Գ. ՍՈՒՐԲ ՈՍԿԵԱՆՅ և ՍՈՒՐԲԻԱՍԵԱՆՅ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԻՒՆ
ԸՆԴՈՒՆԵԼԸ և ՆԱՀԱՏԱԿԱԿԱՆ ՎԱԽՃԱՆԸ:

Երբ Թադէոս Առաքեալը Կապակովկացւոց կեսա-
րիայում լսեց Սանատրուկի գործերը, շատ ցաւեցաւ. և
մտագրուեց դառնալ Եղեսիա և նորից քարողել. երբ
հասաւ Միջագետքի սահմանները, պատահեցան նորան
չոռվմայեցի հինգ դեսպաններ, որոնք արքունի գործով
գնում էին Սանատրուկի մօտ: Նոցա քարոզեց Քրիստո-
նէական կրօնը: Նորա դիմեցին Թադէոսին, տսելով.
«Ի՞նչ նշան, թի՞ հրաշք կարողես ցոյց տալ մեզ. որ
մենք հաւատանք—թէ դու Աստուծոյ մարդ ես և Աստու-
ծուցն ես խօսում»: Թադէոսը ցոյց տուեց նրանց մի

հրաշք¹⁾: Նրանք հաւատացին և Եփրատի ակունքներումը մկրտուեցան Թաղէոսից: Յետոյ նորա հետ սկսան շրջել և քարոզել. և ծախեցին իրենց ունեցած բոլոր ինչքն ու գոյքը:

Այդ հինգ գեսպանների գլխաւորի անունն էր—Խըրիւսի, հայերէն—Ոսկի. դրան Թաղէոս Առաքեալլ մկրտութիւնից յետոյ ձեռնադրեց քահանայ. և միւս չորս ընկերներն էլ դորա անուամբ կոչուեցան—Ոսկեանք: Սոքա մի քանի ժամանակից յետոյ հեռացան աշխարհային կեանքից. առանձնացան ծաղկէոյ սարը Եփրատի ականքների մօտ. և անապատական կեանք էին անցկացնում բանջարեղիններով կերակրուելով:

Սուրբ Թաղէոսի մահից անցել էր գրէթէ քառասուն երեք տարի. նորա Ոսկեանք աշակերտները արդէն ծերացել էին: Իրենց ճգնութեան տեղից—ծաղկէոյ սարից եկան Արտաշատ քաղաքը և սկսան քարոզել Քրիստոնէութիւնը: Այդ ժամանակ պատահեցան սոցա Սուրբիասեանք. որոնք մեր Արտաշէս Բ. Թաղաւորի Սաթենիկ կնոջ աղղականներն էին. ազգով Ալաններ (Անգղիք). տասն և եօթն հոգի էին, որոնք Սաթենիկի հետ էին եկել Ալանաց աշխարհից և ծառայում էին թաղաւորի պալատումը. ոոքա լսելով Ոսկեանց քարոզութիւնը՝ հաւատացին Քրիստոսին և նոցա հետ միասին գնացին ծաղկէոյ ու Եփրատի ակունքներում մկրտուեցան. նոցա զլխաւորը, որ կոչւում էր Բահաղբաս՝ մկրտուելուց յետոյ կոչուեցաւ Սուրբիաս: Գրէթէ տասն և հինգ տարուց յետոյ Արտաշէսի Արտաւազդ որդին յորդորեց նրանց թուղու Քրիստոնէութիւնը. բայց երբ նոքա յանձն չառան, իսկոյն հրամայեց նահատակել Ոսկեանց 107 թուին: Իսկ Սու-

¹⁾ Պատմել սաներին այդ հրաշքը—վարի ալծեամների մասին, եթէ լարմար կհամարուի:

քիասեանք, որ ճգնում էին Սուկաւէտ (Քօսաղաղ) լերան վերայ և կերակրում էին խոտեղէններով՝ երբ Ոսկեանց մարմինները թաղեցին՝ իրանք հեռացան այստեղից և գնացին Զրաբաշխ լեառը, Բագրեանդ գաւառը. այդ լեառը նոցա անունով ասուեցաւ Սուկաւ կամ Սուկաւէտ, ուր ճգնեցին մինչև Գատիանոս կամ Գիգիանոս Ալանաց թագաւորի օրերը, որը ուղարկեց իւր Բառլահա գօրավարին և նահատակել տուեց բոլորին 130 թուին:

Ոսկեանց ճգնութեան ժամանակը հաշւում են 43 տարի. իսկ Սուրբիասեանց՝ 20 տարի:

Ոսկեանց քահանաների և Սուրբիասեանց վկանների նահատակական հանդէսը մեր Եկեղեցին կատարում է Սուաջաւորաց Պահոց հետեւեալ եօթնեկին կամ Բուն բարեկենդանի նախընթաց եօթնեկին:

Ճ, ՇԱՐԱԿԱՆ ՄՐԲՈՑ ՈՍԿԵԱՆՑ.

Ողք արժանաւորեցայք կոչիլ յաշակերտութիւն առաքելոյն Թաղէոսի. և Աստուածային հրով մաքրութեան ոսկի փորձեալ գտայք ի բնակարանս հրեշտակացն. ով երանելի սուրբ Ոսկեանք...

Ողք անհրաժեշտ դաւանութեամբ քարոզեցիք զՔրիստոս ի զրունս թագուհոյն. մկրտելով զքաջ նահատակսն ի յակունս Եփրատայ ի ծաղկազարդ վայելչութիւնսն...

Ով երանելի Սուրբ Ոսկեանք. դուք արժանի եղաք Սուրբ Թաղէոսի քարոզութիւնը լսելով՝ աշակերտել ու հետեւ նորան, և ինչպէս ձեր անունն է ոսկի՝ նոյնպէս և իրու ոսկի փորձուեցաք հրեշտակաց բնակարանում Աստուածային մաքրութեան կրակով:

Թագուհու պալատումը Քրիստոս քարոզեց. և այդ քարոզութիւնը անհրաժեշտ դաւանութեամբ կնքեցին. քաջ Նահատակներին Եփրատի ծաղկազարդ ու վայելուշ ակունքներում մկրտեցիք:

ԺԱ. ՇԱՐԱԿԱՆ ՄՐԲՈՅ ՍՈՒԲԻԱՍԵԱՆՑ.

Ահա տեսաք զՄակաէտ՝ լեառն դիտակ և բնակարան վկայիցն. որոց առեալ զողորմութիւն յԱստուծոյ փրկչէն իւրեանց:

Սուկաւէտ լեառը՝ իրրե դիտանոց և իրրե վկաների բնակարան տեսանք. որոնք իրենց Փրկիչ Աստուծուց ողորմութիւն ստացան:

Ե. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԼՈՒՍԱԿՈՐՈՒԹԻՒՆԸ—ՏՐԴԱՏ. ԵՐԿՐՈՐԴ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹ ՀԱՅ ԹԱԳԱՆԻՈՐ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԵՐԿՐՈՐԴ ԼՈՒՍԱԿՈՐԻՉ ՀԱՅԱՍՏԱՆԻ.

I. Հայոց Խոսրով թագաւորի մահը եւ սուրբ Գրիգորի ծնունդը եւ փախուստը:

Հայոց Խոսրով Բ. թագաւորը շատ յաղթութիւններ էր տանում Պարսից Արտաշիր թաղաւորի դէմ տասն տարուայ ընթացքում մղած պատերազմների մէջ։ Մի անդամ այնքան նեղը ձգեց նորան՝ որ քշեց իւր երկրի ներսերը մինչև Հնդկաց սահմանը. աւերելով և գերելով Պարսից աշխարհը։ Եւ երբ հասաւ Ատրպատական աշխարհը, այն զաւառում՝ ուր առաջին անդամ դադար էր առել, անուանեց Վարուժ կամ Վարուժան, այսինքն ուժով վարեց կամ հալածեց Սասանեաններին և այնտեղ մեծ, հոյակապ, եօթնպարսպիան մի քաղաք շինեց և

անուանեց Դավթէժ. այսինքն՝ դա ի վրէժ Արտաշրի, որ այժմեան Թաւրիդն է։

Արտաշիրը, որ իւր զօրքով փախել էր Հնդկաց աշխարհը՝ միշտ մտատանջւում էր. և մտածում էր—թէ ինչպէս աղատուի Հայոց Խոսրով թագաւորից, որպէս զի կարողանալ հանգստութեամբ տիրել Պարսից։ Խորհուրդ արեց իւր նախարարների ու մեծամեծների հետ. խոստումներ արեց նրան՝ ով կազմատէ իրեն Խոսրովի ձեռքից։ Որովհետև պատերազմով, խելքով չէր կարող հասնել նպատակին՝ ուստի խարդախ ու խորամանկ միջոցների դիմեց—խոստացաւ, Խոսրովին սպանովին՝ տալ քաղաքներ, թագաւորական պատիւ և դարձնել իւր երկրորդը։

Դանուեցաւ նախարարների մէջ մէկը, որ յանձն առաւ սպանել Խոսրովին խորամանկ միջոցով. դա էր Պահլաւեան ազգից, Սուրենեան ցեղի Անակնախարարը. որը կեղծօրէն փախաւ Պարսկաստանից իւր ընտանիքով և եղբօր հետ եկաւ Հայաստան. դիմեց մեր Խոսրով թագաւորի պաշտպանութեանը, իրրե փախստական Արտաշրի երեսից։

Անակը, իրրե փախստական Պարսից զօրքերից՝ հասաւ Ասորեստան, այնտեղից Ատրպատականի սահմանները. այս լսելով Խոսրով թագաւորը, մի զօրագունդ ուղարկեց Անակին աղատելու։ Հայ զօրաբանակը պատուսկ բերին նորան Արտազ գաւառը. և նա իշեանեցաւ այն տեղում, ուր էր սուրբ Թագիս առաքելոյ տապանը։ Անակի Ռգոհէ կամ Ռոգոհի կինը այդտեղ յղացաւ Գրիգորին—մեր ապագայ Կուտաւորչին։

Խոսրովի մօտ հիւրասիրուեցաւ Անակը երեք տարի և բնակուեցաւ Վաղարշապատում։ Մի անդամ արքունի որսի ժամանակ Անակն ու իւր եղբայրը առանձնացրին

Խոսրովին և խարդախութեամբ սպանեցին նորան։ Եւ սկսան փախչել. համնելով Երասխի կամքջին՝ չայ զին-էորները կամքջի անցքերը փակեցին և Անակին ու եղ-բօրը ձգեցին ջուրը և խեղդեցին։ Խոսրովը, վերջին չնչին, հրամայեց ջնջել Անակի ցեղը։

Սյդ կոտորածից ազատուեցան Անակի Գրիգոր որդին, որ Վաղարշապատումն էր ծնուել փրկչական 257 թուին, Բուրդար պարսկի Սովիա կնոջ ձեռքով, որ Եւ-թաղի քոյրն էր։ Գրիգորին փախցրին Կալաղովկացւոց Կեսարիա քաղաքը. իսկ Սուրբն եղբօրը փախցրին Պարսկաստան։

2. ՍՈՒՐԲԻ ԳՐԻԳՈՐԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ, ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆԸ ԵՒ-ՀՈՌՎՄ ԳՆԱԼԸ.

Երեք տարեկան Գրիգորին նորա Սովիա Քրիստոնեայ դայեակը փախցրեց Կեսարիա. մկրտել տուաւ նորան այնտեղ և անունը դրին Գրիգոր։ Նա սովորեց այնտեղ Յունական զիտութիւնները և զարգանում էր Քրիստոնէական բարեպաշտութեամբ։ Երբ տասն և ութն տարեկան հասակն առաւ՝ ամուսնացրին նորան սուրբ Աթանազինէս Եպիսկոպոսի Մարիամ քրոջ հետ, որը Գաւ-փիթ անունով մի բարեպաշտ մարդու ազջին էր։ Սյդ ամուսնութիւնից երկու որդի ունեցաւ—Պրթանէս և Արիստակէս։

Գրիգոր պատանին իմանալով—որ ինքը մարդասպանի որդի է, որ իւր հայրն սպանել է չայոց Խոսրովի թագաւորին, որի որդին զտանւում է չոռվմում։ մտադրում է զնալ այնտեղ, մտնել նորա մօտ իրեւ ծառայ, և իւր ծառայութեամբ քաւել հօր մեղքը. այս մտադրութիւնը գլուխ բերելու համար՝ խորհրդակցում

է իւր Մարիամ կնոջ հետ—որ բաժանուեն իրարից։ Փոխադարձ համաձայնութեամբ բաժանուում են երեք տարի ամուսնական կենակցութիւնից յետոյ։ Այն ժամանակ 23 տարեկան Տրդատը իւր անսովոր ուժով ու քաջագործութիւններով սիրելի էր դարձել կայսերական պալատին և մանաւանդ իւր իննամակալ Լիկիանոս իշխանին։ Գրիգորը գնում է չոռվմ և իրբև անծանօթ ծառայական պաշտօն է յանձն առնում Տրդատի մօտ։ և շատ սիրելի է լինում նորան։

Գրիգորի Մարիամ ամուսինը իւր մի տարեկան Արիստակէս որդու հետ մտնում է կանանց վանքը. ուր ինքը մնում է մինչև մահը, իսկ Արիստակէսը, հասակ առնելուց յետոյ, աշակերտում է Նիկոմաքոս միայնակեաց կրօնաւորին. որի հրամանով անապատ է առանձնանում։ Իսկ Վրթանէսը, որ Գրիգորի մեծ որդին էր և Արիստակէսի երեց եղբայրը, հասակ առնելուց յետոյ ամուսնանում է և ունենում է երկու որդի—Գրիգորիս և Յուսիկ։

Սուրբ Գրիգորի մահուանից յետոյ նորա Կաթուղիկոսական Աթոռը ժառանգում են Արիստակէսը, Վրթանէսը, Յուսիկը, յաջորդաբար։

3. ԱՐՏԱՇՐԻ ԱՐՃԱԿԱՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱՅ ԵՒ ՏՐԴԱՏԻ ՈՒ ԽՈՍՐՈՎԻ ԴԻՖԻՑԻ ԱԶԱՏՈՒԹԻՒՆԸ:

Երբ Պարսից Արտաշիր թագաւորը լսեց Խոսրովի սպանուիլը՝ զօրքեր հաւաքեց և արշաւեց չայաստանի վերայ. տիրեց երկրին և հրամայեց ընաշջնջ անել Խոսրովի ցեղը։ Կոտորածի հրամանը կատարուեցաւ. սակայն այդ կոտորածից ազատուեցան Խոսրովի մէկ ազգիկը—Խոսրովիդուխտ, որին ազատեց Ամատունեաց

Օտայ նախարարը և փախցրեց Ամուրն Անի—Կամախ։
և տղան—Տրդատ, որին Արտաւազդ Մանդակունի նախա-
րարը փախցրեց նախ Կեսարիա և յետոյ չոռվմ, ուր
Կայսերական Դրան ազատական կարգումն էր և Լիկի-
անոս իշխանի խնամակալութեան ներբոյ։

4. ԹԱԳԱՊՍԱԿ ՏՐԴԱՏԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ԵՒ ՍՈՒՐԲ ԳՐԻԴՈՐԻ
ԶՈՐՉԱՐԱՆՔՆԵՐՆ ՈՒ ԱՐՏԱՇԱՏՈՒ ՎԻՐԱՊ ԶԳՈՒԽԼԸ.

Հասաւ այն ժամանակը, երբ Տրդատը չափահաս
դարձաւ և իւր անօրինակ բաջագործութիւններով և զին-
որական հմտութիւններով չոռվմայեցւոց Դիոկետիանոս
կայսրին սիրելի եղաւ։ Կայսրը ի նշան սիրոյ և մեծ
յարգանաց՝ որ ունէր դէպի Տրդատը, թագ կապեց նո-
րան և չոռվմէական զօրքերով ուղարկեց չայաստան հօր
արքայական զահը ժառանգելու ։¹⁾

Հայ նախարարները լսելով իրենց նորընտիր թա-
գաւորի գալուստը՝ ճոխ պատրաստութեամբ ընդ առաջ
գնացին նորան և Գայլ գետի ափին արքայավայել բազ-
մախորտիկ սեղան պատրաստեցին նորա համար։

Երբ հասաւ Տրդատ Եկեղեց գաւառի Երիզա ա-
ւանը, ուր էր Հայոց սիրելի Անահիտ դիցուհու մե-
հեանը, արքայական սովորութեամբ մտաւ մեհեանը իւր

¹⁾ Ինչպէս մի անդամ էլ լիշել եմ՝ և այժմ եմ կրկնում
—որ լեզուի գեղեցկութեան համար են դրուած զրաբառաձե
բառերը. օր չափահաս, անօրինակ, զինւորական հմտութիւն-
ներով, ի նշան սիրու և մեծ յարգանաց, արքայական զահը
ժառանգելու, նորընտիր, գալուստը, ճոխ արքայավայել,
բազմախորտիկ, դիցուհու... և ալին, սաներին մաքուր խօսե-
լու մէջ վարժեցնելու համար, անհասկանալի բառերի որպէս
և իմաստների բացատրութիւնը, ի հարկէ, մնում է ուսուցչն,

Հնորհակալութեան մաղթանքները տալու, երկրպագու-
թիւն անելու և զոհեր մատուցանելու Դիցուհուն, և հը-
րամայեց Գրիգորին—կանաչ ճիւղերից, դալար ոստերից
պակ կապել և տանել, զնել Անահատի կուռքի գլխին։
Գրիգորը, որ մինչև այդ օրը ծածուկ էր պահել իւր
քրիստոնեայ լինելը, չկատարեց Տրդատի հրամանը.
պատճառ բերելով—որ ինքը Գրիստոնեայ է։ Տրդատ
խնստ զայրացաւ—բարկացաւ Գրիգորի անհազանդու-
թեան վերայ և հրամայեց շարչարել նորան տասն և եր-
կու տեսակ ամենախիստ և դառն տանջանքներով. որոն-
ցից աղատուելու և ապրելու ոչ մի հնարաւորութիւն
չկար։ Սակայն Գրիգորը դիմացաւ այդ տանջանքներին,
չմնուաւ, ապրեց. որովհետեւ Աստուած էր նորան պահո-
ղը. և պահում էր՝ որ Գրիստոնէութեան լուսով մի ամ-
բողջ ազգ ու աշխարհ լուսաւորէր։

Ասած է—եղը որ ընկնի՝ զանակաւորները կշատա-
նան. իսկոյն գտնուեցան մեր նախարարների մէջ մար-
դահաճներ, ինչպէս Տաճատ նախարարը, որին կարգել
էր Տրդատ իշխան Աշոցայ և Արտաւազդ Մանդակունին,
որին, իրեն ազատելու և չոռվմ փախցնելու համար, կար-
գել էր սպարապետ Հայ զօրաց. սոքա ահա և սոցա
նմանները նորընտիր թագաւորին հաճոյանալու համար
յայտնեցին անհամբեր կերպով—թէ արքայի հրամանը
չկատարող Գրիգորը արքայասպան Անակի որդին է։ Այս
որ լսեց հալարտ ու գոռող թագաւորը՝ իսկոյն հրաման
հանեց—տանել Գրիգորին Արտաշատ և ձգել մահապարտ-
ների խոր Վիրապը։ Հրամանը կատարուեցաւ։ Գրիգորը
վիրապի մէջ 15 տարի մնաց. նորան կերակրում էր ծած-
կաբար մի բարեպաշտ կին, որ ծածուկ Գրիստոնեայ էր.
օրական մի կտոր հաց էր բերում և ցած ձգում Գրիգո-
րին. ինչպէս աւանդութիւնն է ասում։

5. ՍՈՒՐԲ ՀՈՒՓՄԻՄԵԱՆ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆ ԿՈՒՍԱՆԱՑ ՓԱ-
ԽՈՒՏԾԸ ՀՈՌՎՄԻՑ ԵՒ ՆԱՀԱՏԱԿՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ.

Սուրբ Գրիգորին վիրապը ձգելու օրից անցել էր
տասն և հիսկ տարի. երբ 301 թուին չոռվմից փախան
չայաստան Սուրբ Հոփիսիմեան և Գայիանեան կոյսերը:

Չոռվմում կար մի կուսանոց, որի մայրապետն էր
սուրբ Գայիանէն. այդ կուսանսցումն էր և չոփիսիմէ
անունով մի աղջիկ, որ թագաւորական տոհմից էր սե-
րուած և ուխտել էր կոյս ապրել և կոյս մեռնել. նա-
շատ գեղեցիկ էր. նորա գեղեցկութեան, համեստութեան
ու ազնուականութեան համրաւը հառաւ Գիոկղետիանոս
կայսրի ականջը: Կայսրը մտադրուեցաւ հրաման արձա-
կել՝ հանելու կոյսին կուսանոցից և բերելու իրեն ի կու-
թիւն:

Կայսրի այս մտադրութիւնը աեղեկանալով սուրբ Գա-
յիանէ մայրապետը՝ դիպող ու յարմար օր որոշեց, հա-
ւաքեց կոյսերին և մի քանի քահանաների հետ, 70 հոգ-
ւով, փախան Պաղեստինացւոց աշխարհը. զնացին երու-
սաղէմ, երկրպագութիւն տուին Փրկչի տնօրինական
որբավյրերին—սուրբ տեղերին. մի քանիսը մնացին
այնտեղ. իսկ սուրբ Գայիանէ մայրապետը առնելով իւր-
հետ սուրբ Հոփիսիմէին և միւս կոյսերին՝ երեք քահա-
նաներով եկան Վասպուրական աշխարհը և իջեանեցան
Վարագ լերան վերայ. Այստեղից էլ անցնում են դէպի
Սրաբատեան աշխարհը. նոցանից Մանեայ կոյսը սուրբ
Գայիանէ մայրապետի թոյլտութեամբ զնում է Բարձր
չայր և Դարանազեաց գաւառի Սեպուհ լերան մի այլի
մէջ ճգնողական կեանք է անցկացնում. իսկ նունէ կոյ-
սը, դարձեալ մայրապետի թոյլտութեամբ. անցնում է
Վրաց աշխարհը, ուր Քրիստոնէութիւնը քարոզելով՝

յինում է Վրաստանի Քրիստոնէական լուսաւորութեան
առաջին առաքելուհին: Նա զնում է Մցխէթ, ուր սրբա-
կեաց միայնակեցական կեանք է վարում և ախտաժէտ-
ներին բժշկում է: Նա բժշկում է վրաց Միհրան թա-
գաւորի որդուն և թագաւորը կանչում է նորան իւր արքունիքը և աշակերտելով նորան՝ ընդու-
նում է Քրիստոնէութիւնը և ընդունել է տալիս իւր ժո-
ղովրդին: Այսուհետեւ թագաւորը և ո. Նունէն յայտնում
են ո. Գրիգորին ի մխիթարութիւն և խնդրում նորա
ցուցունքները.

Սուրբ Հոփիսիմեանը և Գայիանեանը 37 հոգւով
գալիս են Վաղարշապատ և ընակւում են քաղաքի այգի-
ների մէկ հնձանում. ¹⁾ ուր յուզունքներ են շինում, տ-
ղախնի ձեռքով քաղաք են ուղարկում և վաճառած փո-
զով ուտեսատներ են բերել տալիս և անյայտութեան մէջ
ապրում. բայց երկար շտեց նոցա խաղաղ կենցաղավա-
րութիւնը:

Գիոկղետիանոս կայսրը իմանալով կոյսերի չայոց աշ-
խարհ փախչելը՝ իսկոյն աղդարաբական թուղթ է ուղարկում
Տրդատին, առաջարկելով—ամեն չանք զործ զնել և ու-
ղարկել իրեն Հոփիսիմէ կուսին, որովհետեւ կամենում է
կին առնուլ իրեն կոյս Հոփիսիմէին. իսկ եթէ հա-
ճոյ կը թուի Տրդատին՝ թող ինքն ամուսնանայ նորա
հետ: Տրդատը խնդրակներ—սրննողներ է ուղարկում ա-
մեն տեղ. գտնում են նրանց հնձանի մէջ: Սուրբ Հոփի-
սիմէին բերում են պալատը. թագաւորը սուրբ Հոփիսի-
մէին տեսնելուն պէս՝ յափշտակում է նորա գեղեցկու-
թիւնից. և առաջարկում է նորան—ամուսնալ իւր հետ,

¹⁾ Բացարել հնձան բառը և նշանակութեան մասին
հասկացողութիւն տալ սաներին. գիւղացի սաները կգիտենան.
բաց քաղաքացիները՝ հազիւ թէ:

թագ կապել և չայաստանի թագուհի լինել։ Սուրբ չը-
ռիփսիմէն հաստատ մնալով իւր ուխտին՝ մերժում է Տըր-
դատի առաջարկութիւնը և փախչում։ Տրդատի հրամա-
նով նահատակւում են սուրբ Հռիփսիմէն, սուրբ Գայա-
նէ մայրապետը և նոցա ընկերուհիները. որոնց մարմին-
ները բացօթեայ են ձգում։

Աստուծոյ պատուհասը շատ շուտ հասաւ Տրդատին
և Վաղարշապատի բնակիչներին—թագաւորը դիւհա-
րեցաւ և ընկաւ շամքերը (ղամշլուղ). իսկ ժողովուրդը
մոլեգնեցաւ։

Սուրբ Հռիփսիմեանց և Գայիիանեանց նահատակա-
կան հանդիսի յիշատակը մեր Եկեղեցին կատարում է Հո-
գեգալստեան երկրորդ եօթնեկին. երկուշաբթի օրը՝
Սուրբ Հռիփսիմէի. իսկ երեքշաբթի՝ Սուրբ Գայանէի¹⁾.
իսկ երրորդ եօթնեկի երեքշաբթի օրը՝ կատարում է
Սուրբ Նունէի և Մանեայի յիշատակը։

6. ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՎԻՐԱՊԻՅ ԴՈՒՐՍ ԳԱԼԸ, ԶԵՌՆԱԴՐՈՒ-
ԹԻՒՆԸ, ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾԵՐԸ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԿՐՏՈՒԹԻՒՆԸ.

Հայաստանի և Հայ ժողովրդի զրութիւնը յուսահա-
տական էր—թագաւորը գահի վերայ չէ, նախարարնե-
րը իրարանցման մէջ, վաղարշապատի ժողովուրդը մոլե-

¹⁾ Նկարագրել սաներին Սուրբ Հռիփսիմեանց և Սուրբ Գա-
յիանեանց տօնակատարութիւնը Սուրբ Էջմիածնում—թէ ինչ-
պէս Երկուշաբթի և Երեքշաբթի՝ նոցա տօնական օրերը, ա-
ռաւօտեան՝ ժառանգաւորաց դպրոցի աշակերտները, միաբա-
նութիւնը «Անձինք նուիրեալք...» կամիտաս կաթողիկոսի լո-
րինած Հռիփսիմեանց շարականը երգելով՝ գնում են նոցա
գանքերը. ուր սուրբ Պատարագից լետոյ, ալգուլ մէջ միաբա-
նական ճաշ է լինում... և երեկուեան վերադառնում են ո. Էջ-
միածին... և ալլն և ալլն։

գնեալ վիճակի մէջ, այս բոլորը, իբրև Աստուծոյ պա-
տիժ, սպառնում էր Հայաստանին՝ եթէ Տրդատի Խոս-
րովիդուխտ քրոջ տեսած և հինգ անգամ կրկնուած տե-
սիլքներով չհանուէր Սուրբ Գրիգորը խորվիրապից։

Սուրբ Գրիգորի Աստուածը խղճաց Հայ աշխարհին-
և Խոսրովիդխտին ազգարարուեցաւ տեսիլքի մէջ—թէ
մինչև Գրիգորին վիրապից չհանէք՝ Հայաստանը չի բը-
ժկուի և չի փրկուի. Խոսրովիդխտի երազը ծաղրածու-
թեան էին առնում և ոչ ոք չէր հաւատում՝ թէ մի-
մարդ տամնեհինգ տարի խորվիրապում, խոնաւութեան
մէջ, թունաւոր ճճիների մէջ, քաղցած ու ծարաւ՝ կարող
է ապրել։ Բայց երբ միննոյն ազգարարութիւնը հինգ
անգամ կրկնուեց՝ հազիւ միայն այն ժամանակ որոշեցին
մարդիկ ուղարկել Արտաշատ Օտայ իշխանի առաջնոր-
դութեամբ և ստուգել Խոսրովիդխտի երազը։

Գնացին. և երբ Օտայ նախարարը հարցրեց թէ.
«Գրիգոր, ողջ ես». վիրապից լսուեցաւ նորա պատաս-
խանը. «Ողջ եմ»։ Հանեցին և որբան զարմացան՝ երբ
սուրբ Գրիգորից լսեցին. «Ուր են նահատակուած սուրբ
Կուսանաց մարմինները. տարեք ինձ այնտեղ». գարձեալ
զարմացան՝ երբ զալով հնձանի մօտ, տեսան—որ ինն
օր բացօթեայ ընկած մարմինները անվնաս և անարատ
ու մաքուր են մնացել. կարծես թէ քնած են. նոցա շեն
մօտացել ոչ մարդիկ, ոչ գիշատիչ թոշունները, ոչ վայ-
րի զազանները և ոչ մի զեռուն, սոզուն ու միջատ։ Եյս
ամենը սարսափի ու երկիւլի մէջ ձգեց տեսնողներին և
ակամայ ծաղեցաւ նոցա մէջ մի վերին զերնական զօ-
րութիւն նախախնամութեան զազափարը—միտքը. այդ
զերնական զօրութիւնն էր Գրիգորի Աստուածը,
որին շուտով պիտի ճանաշէին ու հաւատային։

Սուրբ Գրիգորը սկսում է իւր քալոզութիւնը և բը-

ժշկութիւնը, ալդ տեսում է 65 օր. և միաժամանակ կոյսիրի սուրբ և անարատ մարմինները ամփոփում է իրենց բնակուած հնձանում:

Սուրբ Գրիգորի առջտրկութեամբ երեք վկայարաններ շինուեցան. մէկը Սուրբ Գայիանեանց, երկրորդը՝ Սուրբ Հոփիսիմեանց և երրորդը՝ այն մենաւոր հիւանդ կոյսի համար, որ հնձանումը նահատակուեցաւ: Սուրբ Գրիգորը ինքն էր տեղաւորում իւրաքանչիւրի մարմինը առանձին առանձին արկղի մէջ և Քրիստոսանշան կնքով էր կնքում. Վկայարանների շինութեան աշխատանքի մէջ մասնակցում էին, իրեն մշակներ, Տրդատը՝ որ քար էր կրում. և Աշխէնն ու Խոսրովիդուստը՝ որ Տըրդատի բահով բրած հողերը իրենց շորերով դուրս էին բերում և դէն էին ածում. և այսպէս կազմում—պատրաստում էին կոյսերի վկայարանները:

Այսպէս ահա 65 օր քարոզութեամբ բժշկում է Տրդատին, նախարարներին և ժողովրդին. և որպէսզի չայ ժողովրդի յիշողութեան մէջ անշինչ մնայ այս անցքի յիշատակը՝ հինգ օրեայ անսուադ ծոմապահութիւն կարգեց, իրրի ապաշխարութիւն նրանց գործած յանցանքների. այդ ծոմապահութիւնը ասուեցաւ Առաջաւորաց պահը, որ ժողովրդական խօսքով՝ ասւում է սուրբ Սարգսի պահը: Այնուհետև Տրդատի հետ միասին շրջելով չայաստանի քաղաքներն ու գիւղերը՝ կռատունները կործանեցին և նրանց տեղումը խաչի նշանը բարձրացրին, ուսումնարաններ բացին և շատ կարգադրութիւններ արին. և այսպէս Սուրբ Թադէոս և Բարդուղիմէոս Առաքեալների հաստատած, բայց զրեթէ վերջացած Քրիստոնէութիւնը 302 թուին նորոգուեցաւ և յաղթական հաստատութիւն ստացաւ չայաստանի մէջ:

Տրդատ անսնելով Աստուծոյ մարդու—Սուրբ Գրի-

գորի մեծագործութիւնները և Աստուծային յայտնութիւն առնելով՝ նախարարներից, իշխաններից և Ազգի մէջ յայտնի ու առաջնակարգ մարդկանցից ժողով է կազմում և միակամ համաձայնութեամբ ընտրում են նրան չովիւ ժողովրդի. բայց սուրբ Գրիգորը հրաժարում է այդ մեծ կոչումից. իսկ երբ Աստուծային յայտնութիւն է լինում թէ նորան և թէ Տրդատին՝ այն ժամանակ միայն յանձն է առնում: Եյդ յայտնութիւնից յետոյ սուրբ Գրիգորին մեծ փառքով, աւագարած նախարարների և իշխանների հետ ուղարկում են Կեսարիա. ուր Թադէոս Առաքելոյ յաջորդ Ղեոնդէս Պատրիարքից քահանայական կարգ է առնում և յետոյ Եպիսկոպոս է ձեռնադրում. և ընծայ ստանալով նորանից Սուրբ Կարապետի—Յովհաննէս Մկրտչի և Եթանագինէ Եպիսկոպոսի մասունքները՝ հեռանում է: Առաւ իւր հետ Անտօն և Կրօնիդէս կրօնաւորներին նրանց աշակերտներով. և զանազան քաղաքներից հրաւիրեց Յոյն ու Ասորի, պաշտօնեաներ, Եպիսկոպոսներ, քահանաներ և Զենոռ Ասորին, որ մականուանւում էր Գլակ. որը զրել է այս ճանապարհորդութեան պատմութիւնը:

Հասնելով Տարմոյ գաւառը, մկրտեց գաւառի մարդկանցը և իրեն սւզեկցող նախարարներին ու զօրքին: Ճինեց մի եկեղեցի նննակինեան տեղում և անուանեց սուրբ Կարապետ. ուր և ամփոփեց հետը բերած Ս. Կարապետի և Եթանագինէի նշխարների մեծ մասը: Եյդ տեղ շենեց և մի ուրիշ վանք. ուր թողնելով Անտօն և Կրօնիդէս կրօնաւորներին իրենց աշակերտներով՝ միաբանութիւն կազմեց և վանահայր կարգեց Զենոռ Գլակին, Եպիսկոպոսական աստիճան տալով նորան. վանքը նորա անունով կոչուեցաւ Գլակայ վանք: Ամեն բան կարգի դնելուց յետոյ, ելաւ Տարօն գաւառից բաղմաթիւ

ուղեկիցներով և դիմեց գէպի Արարատեան աշխարհը՝
ճանապարհին քարոզում էր ժողովրդին և մկրտում:

Տրդատը իմանալով Սուրբ Գրիգորի վերադարձը
Կեսարիայից՝ հրամայում է հաւաքուել նախարարներին,
իշխաններին և զօրքերին և ընդառաջ գնալ Սոտուծոյ
մարդուն. ինքն էլ առնելով իւր հետ Աշխէն տիկինն ու
Խոսրովիդուխտ քոյրը գուրս եկաւ Վաղարշապատից և գը-
նաց Բագրեանդ գաւառի Բագաւան քաղաքագիւղը, այն-
տեղ սպասեցին Սուր Գրիգորին: Եկաւ Սուրբ Գրիգորը
և Տրդատը ընդունեց նորան: Սուրբ Գրիգորը նոյն աւա-
նում շինեց մի Եկեղեցի և մնացած նշխարները դրեց
այնտեղ. լետոյ սկսաւ քարոզել և ամսօրեայ ապաշխա-
րութիւն կարգեց նոյց համար ծոմով, պահքով, աղօթ-
քով. որպէս զի աբժանանան Սուրբ մկրտութեան չնոր-
հին: Ապաշխարութեան օրերն անցնելուց յետոյ՝ բոլոր
բազմութիւնը իրենց թագաւոր Տրդատի, թագուհի Աշ-
խէնի և Խոսրովիդուխտի հետ մտան Եփրատ գետը և
մկրտեց նոցա Հայաստանի Հայր և Հայրապետ Սուրբ
Գրիգորը. Տրդատի անունը փոխեց և դրաւ Յովհաննէս,
ի պատիւ Յովհաննու Կարապետի:

7. ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ ՄԻՒՍ ԳՈՐԾԵՐԸ, ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿԵ ՍՈՒՐԲ-
ԷՇՄԻԱԾՆԻ ԵՒ ՄԻՒՍ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՇԻՆՈՒԹԻՒՆԸ. ՄԱ-
ՆԵԱՑ ԱՅՐԸ ԱՌԱՋՆՁՆԱՆԱԼԸ ԵՒ ՎԱԽՃԱՆԸ.

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը շըջելով Տրդատի հետ
Հայաստանի ամեն կողմերը՝ քարոզեց քրիստոնէութիւնը
և մկրտեց բոլորին. քանդեց կռատունները և նոցա տեղը
Եկեղեցիներ կառոյց. ամեն տեղ սուրբ խաչի նշանը
բարձրացրեց. ուսումնարաններ բացեց Յոյն և Ասորի
գիտութեանց, որովհետև Հայոց գրեր չկային. քուրմերը

որդուցը ուսուցիչներ կարգեց. նոցանից արժանաւորներին
ընտրեց և Եպիսկոպոսներ ձեռնադրեց, որոց թիւը 400-ի
էր համնում, չհաշուած քահանաներն ու արեգաները,
որոնք անթիւ էին. հոգեորականների համար ապրուստ
սահմաննեց, Սուրբ Հոփիսիմեանց և Պայիանեանց նահա-
տակութեան տեղերում վանքեր շինեց. հիմնեց վանքեր,
կուսանոցներ, որբանոցներ, հիւրանոցներ. սահմաննեց
սրբոց տօններ և Կեսարիոյ Եկեղեցում տեսած Սոտուած-
պաշտական կարգերը ընդունեց իւր հիմնած Հայկա-
կան Եկեղեցում. սահմաննեց Եկեղեցւոյ եօթն սրբարար
խորհուրդները. նորահաւատ քրիստոնեաների և հոգեո-
րականների համար կանոններ գրեց. Յաճախապատում
ասուած կանոնական և յորդորական գրուածքը հրատա-
րակեց:

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը մի հրաշալի տեսիլը
տեսաւ—որ Սոտուած Միածին Որդին—Յիսուս Քրիս-
տոս ոսկէ ուռը ձեռին, հրեշտակիներով շրջապատուած՝
իջնում է երկնքից և Վաղարշապատի քաղաքամէջ հրա-
պարակի գետնին խփում է մուրճով, թնդում է անդուն-
դը և լուսեղին նկարում է Մայր Եկեղեցւոյ շինութեան
ձեր. և այնտեղը, ուր տեսաւ Սուրբ Գրիգորը այդ շո-
ղակաթ տեսիլը, Շողակաթ կոչեց: Տեսիլը պատմեց
Տրդատին և նախարարներին և ձեռնարկեց տաճարի
շինութեանը, որին գործակցում էին Տրդատը, Աշխէն
տիկինը, Խոսրովիդուխտը և շատ աւագաբարձ նախա-
րարներ: Տաճարը կոչւում է էջմիածին, որ նշանակում է
Միածինը իջաւ կամ Միածնի էջքը, այսինքն՝ Միածնի
իջնելը: Երբ աւարտուեցաւ շինութիւնը՝ Եկեղեցւոյ օրհ-
նութեան նաւակատեաց հանդէս կատարեցին: Հայրապե-
տանոց շինեցին և Հայրապետական Աթոռը հաստատուե-
ցաւ Սուրբ Էջմիածնում. և ինքը Սուրբ Գրիգոր Լուսա-

ւորիշը եղաւ չայ Աղգի առաջին Ընդհանրական Կաթողիկոսը, որի յաջորդութինը շարունակում է մինչև այսօր։ Կաթուղիկոսը օրհնում է սրբալոյս Միւռնը, ձեռնադրում է Եպիսկոպոսներ... և այլն¹⁾:

Կարգազրեց կատարել ամենայն տարի Սուրբ Հովհաննեանց և Գայիանեանց և ուրիշ սրբոց տօները. Նաև Շողակաթի Սրբոյ Էջմիածնի տօնը. Նոյնպէս Սուրբ Առառածածնայ և ուրիշ Տէրունական տօներ։

Եւ երբ ամեն կողմից հաստատապէս բարեկարգեց Հայաստան աշխարհը՝ այն ժամանակ 331 թուին առանձնացաւ նախ Տարոնայ Գլակայ վանքը, ուր մնաց շորս ամփո. յետոյ զնաց Բարձր Հայք աշխարհի Պարանաղեաց գաւառը և Սևպուհ լիրան մի այրում սկսաւ ճգնողական կեանք անցկացնել. այդ այրը, ուր նախ ճգնումէր Մանեայ կոյսը, Սուրբ Հովհաննեանց ընկերուհին, կոչւում էր Մանեայ այր։ Անտեղ վախճանուեցաւ. հովհաները գտան նրա մարմինը և անյայտ տեղում թաղեցին։ Ժամանակից յետոյ Աստուածային յայտնութեամբ գտաւ նրա մարմինը Թառնիկ անուն ճգնաւորը և թաղեց Թորդան աւանումը, որ սուրբ Լուսաւորչի կալուածքն էր. յետոյ քերին Վաղարշապատ, որտեղից նրա մասունքները հետըգնեաէ տարան զանազան երկիրներ. իսկ Աջը մնաց Էջմիածնում, որով օրհնում են սրբալոյս Միւռնը։ Սուրբ Աջը և ուրիշ շատ սուրբ մասունքներ սրբոց, խնամքով պահում են մինչև այսօր Էջմիածնի թանգարանումը։

Սուրբ Լուսաւորչի յիշատակը երեք անգամ է տօնում մեր Եկեղեցին. առաջինը՝ Մուտն ի Վիրապն—Մեծի պահոց հինգերորդ շաբաթ օրը. երկրորդը՝ Ելն ի Վիրապին—Հոգեգալստից յետոյ Յարութեան առաջին կիւ-

¹⁾ Տես Զեռնարկո Ա. առարի.

րակէի եօթնեկի շաբաթ օրը. երրորդը՝ Գիւտ Նշխարաց Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ—Յարութեան երրորդ կիւրակէի եօթնեկի շաբաթ օրը. իսկ Կաթուղիկէ Սուրբ Էջմիածնի տօնը կատարւում է Յարութեան երրորդ կիւրակէ օրը։ Տրդատ թագաւորի, Աշխէն տիկնոջ և Խոսրովիդուխտի տօնը կատարւում է չօրրորդ կիւրակէի եօթնեկի շաբաթ օրը։

Ճ. ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԿՈՐՉԻ ՇԱԳՄԱՆ¹⁾

Ի վշաբեր արմատոյ²⁾ վարդ կամբերփեան ծաղկեալ. առաքելաշնորհ տէր Գրիգորիոս. անուշահուտ բուրմամբ լցեր զՀայաստան աշխարհ։ յայտնելով ի մեզ զհոտ գիտութեան։

Փուշ բերող արմատից³⁾ կարմրագոյն վարդ ծաղկեցար. ով Առաքելական չնորհքով զարդարուած տէր Գրիգորիոս. և ինչպէս վարդը անուշահուտ է՝ դու ևս Աստուածպիտութեան և Քրիստոնէութեան նոյնպիսի անուշահոտութիւն բուրեցիր մեր Հայաստան աշխարհում։

Ճ. ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԿՈՐՉԻ ԶԱՐՉԱՐԱՆԱՅ.

Խոստովանող Քրիստոսի ճշմարիտ վկայ. բաղմաշարշար նահատակ տէր Գրիգորիոս. զպակասութիւն շարչարանաց Տեառն ի մարմի քում կրեցեր։

¹⁾ Բացատրել—թէ ում որդին էր. սերնդական կամ ցեղական ծագումը։

²⁾ Բացատրել—Փշաբեր արմատ—Անազը. վարդ կարմրեր գիւտ են ան—ինքը Լուսաւորիչը։

Քրիստոսին հաւատացիր, խոստովանեցար—որ նա
է Աստուած. և ճշմարիտ վկայ հանդիսացար նորան. ով
բազմաշարչար նահատակ տէր Գրիգորիոս. Տէր Յիսուս
Քրիստոսի շարչարանքների պակասը դու լրացրիր քո
մարմնի վերայ:

ԺԴ. ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԿՈՐՉԻ ՎԻՐԱՊՈՅ ՄՏՆԵԼՈՒ:

Պարակից հոգեղինաց երկնային զօրացն. սըր-
բափայլ զգեստիւք տէր Գրիգորիոս. ի խոր վիրա-
պին իշեր ի տղմին դառնաշունչ օձիցն. զի փրկես-
ցես զմեզ ի շար վիշապէն:

Հրաշալի զարմացմամբ երանելին սուրբ Գրիգոր.
զանտանելի զշարշարանս ի յանձն էառ. և երեք
հնգօք ամօք ի մէջ թունաւորացն բնակէր անդնդա-
յին տանջանօքն ի վիրապին...:

Ո՞վ տէր Գրիգորիոս, դու՝ որ հոգեղէն երկնային զօր-
քերին—հրեշտակներին էիր արժանի դասակից ու պարա-
կից լինելու քո սրբութեամբ վայլող զգեստներով—ան-
մեղութեամբ ու անպարտութեամբ՝ այսօր խորվիրա-
պըն ես իջնում, տղմի—ցեխի ու դառնաշունչ օձերի մէջ.
որպէս զի մեզ փրկես ու ազատես շար վիշապից—հե-
թանոսական խաւարից կամ մեղքի իշխանից—այն շար
հոգու իշխանութիւնից՝ որ պատրելով ու խարելով նա-
խածնողներին, զրկեց անմահութիւնից և մահուան դատա-
պարտութեան տակ ձգեց. ազատեց մարդկանցը ին-
քը Քրիստոս Փրկիչը. և այժմ դու, նորա արժանաւոր
Առաքեալ, աղատում ես Հայաստան ժողովուրդը նոյն
դատապարտութիւնից:

Երանելի Սուրբ Գրիգորը զարմանելի համբերու-

թեամբ և հրաշքով տարաւ տասներկու տեսակ դաժան
ու անտանելի չարշարանքները. և տասն և հինգ տարի
գժոխային տանջանքներով բնակւում էր վիրապում թու-
նաւորների մէջ:

ԺԵ. ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԿՈՐՉԻ ՎԻՐԱՊՈՅ ԴՈՒՐՍ
ԳԱԼՈՒՆ:

Հրաշագործ քո րանիւդ և մեծ ողորմութեամբդ՝ ե-
լեալ բժշկէր զհարուածեալսն ի դիւաբախ սաստիցն, եր-
կրպագուս առնելով զամենհսկան սուրբ Երրորդութեանդ:

Քո հրաշագործ խօսքովդ, Տէր, և մեծ ողորմու-
թեանդ չնորհիւ Սուրբ Գրիգորը վիրապից գուրս գալով՝
բժշկում էր այսահար—դիւահար հարուածեալներին, շա-
րից սաստուածներին, որոնք սուրբ Գրիգորի քարո-
գութեամբ և բժշկութեամբ հաւատացին Սուրբ Երրոր-
դութեանդ և սկսան երկրպագութիւն տալ Հօրդ և
Որդուդ և Սուրբ Հոգուդ:

ԺԶ. ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԼՈՒՍԱԿՈՐՉԻ ԿՈՉՄԱՆ, ԳՈՐԾԵՐԻ, ՔԱ-
ԶԱՆԱՅԱՆԱԼՈՒՆ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻՆ ՄԿՐՏԵԼՈՒՆ:

Հրաշափառ Աստուած և միշտ բարեխնամող. որ
յառաջ զիտութեամբ զփրկութիւն Հայաստանեայց
սկզբնաւորեալ. ի պարթեական մեղապարտ ազգէն
Լուսաւորիչ մեզ չնորհեցեր:

Տանն Աստուծոյ տեսանող բարի. արժանացեալ
չնորհիւ տէր Գրիգորիոս. կործանիչ բազնեաց, քակ-
տիչ մեհենեաց՝ զօրութեամբ խաչին...: ... ընդ ա-
մենայն տեղիս շինեալ խորան փառացն Աստուծոյ:

Ընտրեալ յԱստուծոյ Քահանայապետ ճշմարիտ.

և հովիւ հոգեոր բանաւոր հօտի. տէր սուրբ Գրիգոր... քահանայապետ ընտրեալ Աստուածային յայտնութեամբն:

Որ համբերութեամբդ քո ստացար քեզ ժողովուրդս սեպհականս և ընտրեալս. և նորափետուր զարդարեցեր ծննդեամբ սուրբ աւագանին....

Ո՞վ հրաշափառ և միշտ բարեխնամ՝ Աստուած, որ կանուխ—շատ վազ ժամանակից էիր պատրաստել Հայաստանի և Հայ ազգի հոգեոր փրկութեան սկիզբը. որ պիտի լինէր մեղապարտ Պարթեական ազգից Քո մեզ չնորհած Լուսաւորչի ձեռքով....

Աստուծոյ Տանը բարի տեսանող լինելու արժանացար—Աստուծոյ չնորհիւ տեսուչ կաթուեցար և սուրբ Խաչի զօրութեամբ՝ բազինները—կուռքերի սեղանները կործանեցիր, մեհեանները—կուտունները քանդեցիր.... ամեն տեղ Աստուծոյ փառքի, մեծ վայելչութեան խորաններ—տաճարներ կառուցիր, հիմնեցիր:

Աստուծնոց ընտրուեցար ճշմարիտ քահանայապետ. Նորանից կարգուեցար հովիւ բանաւոր հօտի—հաւատացեալ ժողովրդի. և Հայ ազգը քեզ, ով սուրբ Գրիգոր, Աստուածային յայտնութեամբ ընտրեց Քահանայապետ և առաջին ընդհանրական Հայրապետ Հայաստան աշխարհի:

Քո համբերութեամբ՝ սեպհական և ընտրեալ ժողովուրդ կազմեցիր քեզ համար. և նորագոյն զարդերով պայծառացրիր այդ ժողովուրդը՝ երբ մկրտելով Եփրատ գետի մէջ՝ նորից ծնուեցան սուրբ աւագանից. որդեքրուելով չօր Աստուծոյ և ժամանդելով երկնքի արքայութիւնը:

ԺԱՐԱԿԱՆ ԿԱԹՈՒՂԻԿԵ ՍՈՒՐԲ ԷջՄԻԱԾՆԻ. էջմիածինն ի Հօրէ և լոյս փառաց ընդ նմանայնք հնչեցին սանդարամետք յանդնդոց:

Տեսեալ զլոյս մեծ Հայրապետին Գրիգորի. պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:

Եկայը շինեսցուք սուրբ զիսորանն լուսոյ. քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

Միածին Որդին իշաւ Հօրից և փառքի լոյսը իւրհետ էր. սանդարամետք անգունդից գոռաց—մեղքի իշխանութիւնը սարսափից գոռաց. նա զգաց—որ Միածինը գալիս է դժոխքը կործանելու և դժոխքի որդիութիւնը—կուապաշտութիւնը բնաշինչ կորցնելու:

Միածնի իշման մեծ լոյսը որ տեսաւ սուրբ Հայրապետ Գրիգորը՝ ուրախութեամբ պատմեց հաւատացեալ Տրդատ Ժտդաւորին:

Եւ նոքա ասացին միմեանց և ուրիշներին—եկէք շինենք Լուսոյ խորանը. որովհետև Հայաստան աշխարհի Քրիստոնէական լուսաւորութիւնը այս խորանի մէջ ծագեցաւ մեզ:

Ժ. ՇԱՐԱԿԱՆ ՏՐԴԱՏԱՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ.

Որ ի ձեռն մաղթանաց սըրոյն Գրիգորի. ի մարդկային բնութիւն դարձուցեր յանասնեղէն ի բնութենէն նորաստեղծեալ զարքայն մեծ Տրդատ....

Ո՞վ որդի Աստուծոյ՝ Յիսուս Քրիստոս, Սբբոյն Գրիգորի աղօթական մաղթաներով նոր ստեղծեցիր Տրդատ մեծ Ժագաւորին. որովհետև անասնեղէն բնութիւնը հանեցիր նորանից և մարդկային բնութիւն պարզեցիր:

ԺԹ. ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ՀՌԻՓՄԻՄԵԱՆՅ ԵՒ ԳԱՅԻԱՆԵԱՆՅ.

Գեղեցկութիւնք մարմնաւոր պայծառութեան ձերոյ. յիմարեցոյց զթագաւորն և պակեան հեթանոսք...:

Թուլացան կորովիք հաստաձիգ աղեղանց. և տկար կանայքն վառեցան զինու. թագաւորն պերճացեալ զօրութեամբ և փառօք՝ ի մանուկ ի կուսէն պարտեալ ամաչէր:

Ի վերայ միոյ պատուական մարգարտի. խաղացին ցնծալով ամենայն հեթանոսք. արևմուտք յարեւլս ընթացեալ հասին. քարոզել յայտնապէս զքնաղ տեսութիւնն:

Լուան թագաւորք և լցան խնդութեամբ. որսալ յանձն առին զգաղտնի մեծութիւնն. պարզեց իրերաց խոստանային բանիք. և ծածուկ հնարիւք գողանալ ի միմեանց:

Կանայք պատուականք քաղաքաւ և ազգաւ վաճառականք առատք անյայտ մարգարտին...:

Մերժեցին զկարիս մարմնական կենցաղոյս. զի ծանեան եթէ երազ է և սուտ պաճուճանք. ոչ հեշտացան ի գրկանս փափկութեան. իմացան եթէ սնոտի է անցաւոր մեծութիւնս:

Զեր մարմնաւոր պայծառ զեղեցկութիւնից՝ թագաւորը խելքը կորցրեց. իսկ հեթանոսները, զարմանքից ու վախից՝ սառած մնացին...:

Հաստաձիգ աղեղներ ձգող քաջերը՝ թուլացան, իսկ տկար ու թոյլ կանայքը սպառապինուեցան հոգեսր զէնքերով. իւր փառքով և զօրութեամբ պերճացած թագաւորը՝ մանուկ կոյսից յաղթուեցաւ և ամաչում էր իւր ստոր պարտութեամբ:

Մէկ պատուական մարգարտի վերայ ուրախ, ուրախ վխտացին, արշաւանքներ կազմեցին բոլոր հեթանոսները. արևմուտքից՝ չոռվմից՝ արեւելք՝ չայաստան — Վաղարշապատ եկան հասան նամակաբերներ, պատգամաւրներ. որպէս զի պատմեն ամէնքին ու Տրդատին չոխիսիմէի — մարգարտի շքնաղ զեղեցկութիւնը:

Լուցին թագաւորները — Դիսկութիւնում չոռվմում և Տրդատը Վաղարշապատում, չոխիսիմէ կուսի շքնաղ զեղեցկութեան մասին և անշափ ուրախացան. որովհետեւ երազում էին թէ իրենցն է, կարող նն հրապուրել նորա սիստը և արքայական թագի, գահի ու գայիսոնի փառքի փայլով շլացնել և արքայական տիկնութեան հասցնելով՝ զուարճանալ. այդ առթիւ՝ այդ թագաւորները քաղաքականութեամբ էին իրար հետ վարւում — Դիսկութիւնում զրում էր — եթէ կամենաս՝ դու ամուսնացիր. եթէ ոչ՝ ինձ ուղարկիր. կարծելով՝ թէ որովհետեւ Տրդատը պտրտաւորուած է իրանից՝ ի հարկէ, այս բարակ քաղաքավարական առաջարկը կհասկանայ և չոխիսիմէին կուղարկէ իրեն. գրելով — Մէծ Թագաւոր. քանի որ Դու ես առաջին նորան տեսնողն ու ցանկացողը՝ Քնզ եմ ուղարկում. նա Քո մեծութեանն է վայել: Այսպէս իրար խոստումներ անեյով՝ խաբում էին իրար բայց ճածուկ ճանապարհներով աշխատում էին զողանալ իրարից. սակայն բոլոր նոցա ջանքերն ի զուր անցան. որովհետեւ սոքա:

Թէ քաղաքով, թէ ազգով ու ծագումով պատուական կանայք էին. և իրեն առատ վաճառականներ՝ անյայտ մտրգարիտն էին որոնում — Քրիստոսի փեսայութիւնը և նորա արքայութիւնը. գորա ապացոյցն այն է՝ որ

Մերժեցին այս կեանքի մարմնական կարիքները, հեշտութիւնները, զրկանք ու փափկութիւնները, փառ-

քըն ու մեծութիւնը. որովհետեւ այդ բոլորը նորա համարեցին իբրև երազ ու սուտ զարդարանքներ. իմացան և լաւ էին ըմբռնել - թէ ունայն ու փուճ է այս աշխարհի անցաւոր մեծութիւնը:

Ի. ՇԱՐԱԿԱՆ ՍՈՒՐԲ ԼՈՒՍՈՒՐՉԻ ԱՌԱՆՁՆԱՆԱԼՈՒՆ
ՍԵՊՈՒՀԻՈՅ ՄԱՆԵԱՅ ԱՅԲ, ՎԱԽՃԱՆԻՆ ԵՒ ՍՈՒՐԲ
ՆՇԽԱԲՆԵՐԻ ԳՏՆՈՒԵԼՈՒՆ.

Կերինք ամենայն այսօր ցնծացէք ընդ մեծապայծառ փառսն Սեպուհւոյ գեղազանց լիրինն. քանզի ի նմա բնակեցաւ սուրբն Դըշգորիոս սիւն լուսոյ չայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ:

Հովուին հսկողի՝ ճշմարիտ և քաջ հովուին պատկերի հովիւքն եղեն հետևողք. զոր ամփոփեցին զմարմինն մաքուր մերձ ի յայրն Մանեայ մեզ դեղ ախտից մաքըութեան...:

Դուք, բոլոր լիսներ. ցնծացէք - ուրախացէք այսօր Սեպուհ գեղազանց լիրան մեծ ու սլայծառ փառքի համար. փանզի ախտեղ բնակուցաւ Սուրբ Գրիգորիոսը - չայաստանեայց սուրբ Եկեղեցւոյ լուսոյ սիւնը:

Հսկող հովուին - Սուրբ Գրիգոր Լուսաւորչին, որ կրում էր իւր մէջ ճշմարիտ և քաջ Հովուի - Յիսուս Քրիստոսի պատկերը, հետևող եղան մեր մահկանացու հասարակ հովիւները - զտնելով նորա մարմինը, սուրբ նշխարները և ամփոփելով - տեղաւորելով Մանեայ այրի մօտ. որպէսզի մեր հոգիոր ախտերի բժշկութեան համար դեղ լինի:

ԻԱ. ՀԱՆԳԱՆԱԿ ՆԻԿԻՍԿԱՆ ¹⁾:

Հաւատամք ի մի Աստուած Հայր ամենակալ. յԱրաբիչն երկնի և երկրի, երևելեաց և աներեսութից: Եւ ի մի Տէր Յիսուս Քրիստոս. Որդին Աստուծոյ. ծնեալն յԱստուծոյ. Հօրէ Միածին. այսինքն՝ յէռթենէ Հօր: Աստուած յԱստուծոյ. Լոյս ի Լուսոյ. Աստուած ճշմարիտ. յԱստուծոյ ճշմարտէ. ծնունդ և ոչ արարած: Նոյն ինքն ի բնութենէ Հօր. որով ամենաւ ինչ եղի յերկինս և ի վերայ երկրի, երևելիք և աներեսոյթք:

Որ յաղագս մեր մարդկան և փասն մերոյ փրկութեան իշեալ ի յերկնից՝ մարմնացաւ, մարդացաւ, ծնաւ կատարելապէս ի Մարիամայ սրբոյ կուսէն Հոգւովն սրբով: Որով էառ զմարմին, զհոգի և զմիտ. և զամենայն որ ինչ է ի մարդ ճշմարտապէս և ոչ կարծեօք:

2արշարեալ, խաչեալ, թաղեալ:
Յերբորդ աւուր յարուցեալ:
Ելեալ ի յերկինս նովին մարմնովն՝ նստաւ ընդ աշմէ Հօր:

Դալոց է նովին մարմնովն և փառօք Հօր. ի

¹⁾ Հարեւնցի ծանօթութիւն տալ սաներին - որ 325 թուին Բիւթանացւոց Նիկիա քաղաքում եղաւ Տիեզերական ժողով 318 Հայրապետների ներկալութեամբ, ուր հրաւիրուած էր և մեր Լուսաւորիչը. չդնաց ծերութեան պատճառով. ուղարկեց իւր որդի սուրբ Արիստակէօին. որը բերեց ժողովի կանոնները և Հանգանակը - Հաւատամքը. որի վերայ սուրբ Լուսաւորիչը աւելացրեց - Իսկ մեք փառաւորեսցուք - Հայ Ակեղեցւոյ դաւանութեան անսխալ կնիքը:

դատել զկենդանիս և զմեռեալս, որոյ թագաւորութեանն ոչ գոյ վախճան:

Հաւատամք և ի Սուրբ Հոգին. յանեղն և ի կատարեալն. որ խօսեցաւ յօրէնս և ի մարգարէս և յաւեարանս: Որ էջն ի Յորդանան, քարոզեաց զԱռաքեալն¹⁾ և բնակեցաւ ի սուրբսն:

Հաւատամք և ի Մի միայն, Ընդհանրական և Առաքելական, Սուրբ²⁾ Եկեղեցի:

Ի մի Մկրտութիւն, յՆպաշխարութիւն, ի Քառութիւն և ի Թողութիւն մեղաց:

Ի յսրութիւնն մեռելոց:

Ի դատաստանն յաւիտենից հոգւոց և մարմնոց³⁾: Յարքայութիւնն երկնից և ի կեանսն յաւիտենականս:

¹⁾ Ուղիղ սովորցնել սաներին. որովհետեւ մի քանի ժամագրոց մէջ զրուած է «քարոզեաց յառաքեալսն և կամ զառաքեալսն»: որը սխալ է. ալզարէս սխալ ևս առում են մի քանիսները. ճիշտն է «քարոզեաց զառաքեալսն»: որովհետեւ Սուրբ Հոգւու իջումը՝ վկարութիւն էր Յիսուսի մասին. ինչպէս և Յովհաննէս Մկրտիչն էր սսել.

²⁾ Ալստեղ ևս պէտք է ուղիղ սովորցնել. որովհետեւ մի քանի ժամագրոց մէջ Սուրբ բառը բաց է թողնուած և շատերն ևս սխալ են ասում ալսպէս—ի մի միաւն ընդհանրական և առաքեալս եկեղեցին: Ճիշտ չէ այս ձեր. որովհետեւ Հանգանակ հաւատող՝ հաւատի բաժինն է, մասնակցութիւնն է, դաշն է, գրաւն է. նա ուղիղ պիտի արտարարութուի հաւատող քարդապեառութեան մասին: Հաւատող Վարդապեառութիւնը ճշմարիտ Եկեղեցուն չորս նշան է բատկացնում—Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն և Առաքելականութիւն:

³⁾ Ալստեղ ևս պէտք է զրաւել սաների ուշադրութիւնը, որովհետեւ մեր կարգակիցներից ոմանք սխալ կէտաղրութեամբ են կարգում ալսպէս—ի լարութիւնն մեռելոց ի դատաստանն յաւիտենից. հոգւոց և մարմնոց. և ալին. պէտք է կարգակ վերջը գրածի նման. և զգուշանալ՝ որ սաներն ևս սխալ չկարդան:

Իսկ ոզր ասեն՝ Էր երբեմն, յորժամ ոչ էր որդին. կամ՝ Էր երբեմն, յորժամ ոչ էր Սուրբ Հոգին. կամ թէ յոչ էից եղեն: Կամ յայլմէ էութենէ առեն լինիլ զՈրդին Աստուծոյ և կամ զՍուրբ Հոգին՝ և թէ փոփոխելիք են կամ այլայլիք՝ զայնպիսիսն նզովէ Կաթուղիկէ և Առաքելական Սուրբ Եկեղեցի:

Իսկ մեք փառաւորեսցուք՝ Որ յառաջքան զյաւիտեանս: Երկիրպազանելով Սրբոյ երրորդութեան և Միոյ Աստուածութեան, Զօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ:

Մէկ Աստուած ենք ճանաչում ու նորան ենք միայն հաւատում: Նա Ամենակարող Հայր է բոլոր մարդկան՝ իրեւ Խրո որդուց: Նա է երկնքի և երկրի և նոցա մէջ եղած բոլոր երեսով ու չերեսով արարածների Արարիշը: Նա է ստեղծել և խնամում բոլոր իւր ստեղծուածներին:

Մէկ Տէր Յիսուս Քրիստոս ենք ճանաչում. և հաւատում ենք՝ որ նա Աստուծոյ Որդին է. Աստուծուցն է ծնուած և Զօր Միածինն է. այսինքն նորա էութիւնիցն է. ինչպէս խօսքը՝ մարդուց. Նա Աստուած է՝ Աստուծուց ծնուած. Լոյս է՝ Լոյսից յառաջացած. Ճշմարիտ Աստուած է՝ ճշմարիտ Աստուծուց ծնուած և ոչ ստեղծուած: Յիսուս ինքը՝ Զօր հետ մի բնութիւն, մի գոյացութիւն է կազմում. և նորանով է եղած այն ամենը՝ որ ինչ երկում է կամ չէ երկում երկնքի և երկրի վերայ:

Որդին Աստուած Յիսուս, մարդկան ազգի փրկութեան համար, երկնքից իջաւ, մարմին առաւ, մարդդարձաւ, Սուրբ Կոյս Մարիամից Սուրբ Հոգւոյ չնորհքով և հովանաւորութեամբ ծնաւ: Նոյն Սուրբ Հոգւով առաւ

—ստացաւ մարմին, հողի, միտք և այն ամենը՝ ինչ որ ունի իւրաքանչիւր մի մարդ, բացի մեղքից. և այդ մարդկային բնութիւնը ճշմարտապէս առաւ և ոչ կարծիքական ձեռվ:

Նա մարդկան ազգի փրկութեան համար յօժարութեամբ յանձն առաւ Զարշարուել, Խաչուել, Թաղուել. ոչ թէ իւր մեղքը՝ ինքը մեղք չունէր, այլ մեր մեղքերը քաւելու համար. մեղ մեր Երկնաւոր Հօր հետ հաշտեցնելու համար միայն:

Նա երեք օր¹⁾ դերեզմանի մէջ մեռած մնաց և երրորդ օրը իւր Աստուածային կարողութեամբը ինքը իրեն յարութիւն տուեց. օրինակ տալով մեր մահուան և յարութեան. ուսուցանելով՝ որ մահը վերռած է. նա շկայ այլ ես. իսկ կեանքը նորից գնուած է իրանով. և

¹⁾ Գաղափար տալ սաներին Հրէական օրակարգ ժամաթուերի մասին—ա. արև.—Ուրբաթ օրը, 6 ժամից յետոյ զկնի ճաշու—թաղումը Յիսուսի, բ. արև—Շաբաթ օրը: գ. արև—լուս Միաշաբաթ կամ Կիւրակէ. Երրոր Յարեաւ, Իւրաքանչիւր արև հաշուելով մի օր՝ անում է երեք օր. Երրորդից չորրորդ օրը, որ անում է դ. արև՝ Յարեաւ:

Յերեկը բաժանում էին շորս մասի—Արեածագ. ա- մաս. ա. ժամ: բ. մաս. գ. ժամ: կէս օր. դ. մաս. զ. ժամ: դ. մաս. թ. ժամ:

Գիշերն էլ բաժանում էին շորս մասի—Իւրաքանչիւր մաս՝ առում էր «պահ»: ա. պահը սկսում էր արեամտից առաջ և շարունակում էր մինչև Երեկոյեան 9 ժամը, բ. պահը՝ մինչև կէս գիշերը: դ. պահը՝ մինչև առաւօտեան 3 ժամը, դ. պահը՝ վերջանում էր արեածագով: Եթէ ուսուցիչը բարմար դատէ՝ կարող է բացարել սաներին Աւետարանական նախադուչութիւնը.—«Արթուն կացէք. զի՞ ո՞ւ զիտէք երբ տէր տանն դալցէ. Երեկօրեավ, եթէ ի մէջ գիշերի, եթէ ի հաւախօսի, եթէ ընդ առաւօտսոյ»: Մարկ. ՓԳ. 35:

այդ կեանքը վերջ չունի. նա անվախճան է, յաւիտենական է:

Քառասուն օր երկրի վերայ մնալուց յետոյ՝ երկինք համբարձաւ և Հօր Աստուծոյ աջ կողմը նստաւ:

Ինչ մարմնով որ համբարձաւ՝ նոյն մարմնով և Հօր Աստուծոյ փառքով գալու է միւս անդամ և դատելու թէ կենդանիներին և թէ մեռեներին և թաղաւրելու է բոլորի վերայ. և նորա թագաւրութեանը վերջ չէ լինելու:

Հաւատում ենք նաև Սուրբ Հոգուն, որ միշտ եղել է և կատարեալ է. և թէ նորա ազդմամբ և թելաղբութեամբ են գրուած չին և նոր Ուխտը. հին Ուխտը՝ իւր օրէնքներով և մարգարէութիւններով. իսկ նոր Ուխտը՝ իւր սուրբ Աւետարանով: Այդ Սուրբ Հոգին էր՝ որ Յիսուսի մկրտութեան ժամանակ իջաւ նորա վերայ և յալտնեց ու վկայեց ամենքին—թէ այդ մկրտող Քրիստոսն է Աստուծոյ Որդին ու Երկնքի Առաքեալը: Հաւատում ենք—որ Սուրբ Հոգին բնակւում է սուրբ մարդկանց մէջ:

Մի Եկեղեցի ենք միայն ճանաշում և հաւատում. այդ Եկեղեցին Քրիստոսն է հիմնել աշխարհիս երեսին բոլոր մարդկանց համար, և ինքը անբաժան է այդ Եկեղեցուց և նորա մէջն է բնակւում. այդ Եկեղեցին է միայն ճշմարդիտ Եկեղեցին, որ ունի չորս յատկութիւն կամ նշան—Միութիւն, Սրբութիւն, Ընդհանրականութիւն և Առարեկանութիւն:

Հաւատում ենք այդ Եկեղեցւոյ մէջ կատարուած Սրբարար խորհուրդներին. որոնցից—Մկրտութիւնով՝ աղատում ենք մեր նախածնողների գործած մեղքից, որ կոչում է Սկզբնական մեղք. իսկ Ապաշխարութիւնով՝ արժանանում ենք Սուրբ Հաղորդութեան խորհրդին, որով աղատում ենք ներգործական մեղքից, որ գործում ենք

մեր կեանքի մէջ. և ստանում ենք Քաւութիւն և Թողութիւն մեր մեղքերի:

Հաւատում ենք մեռելների յարութիւնը, որ նոքաիրենց գերեզմաններից պլիտի վերկենան նոյն մարմնով Քրիստոսի միւսանդամ գալստեան ժամանակ:

Հաւատում ենք վերջին և Ահեղ Դատաստանին՝ Յաւիտենական կեանքի դատավճառով, այսինքն՝ երբ դատաստանը կվերջանայ, դատուածները յաւիտեան կապրեն. այն զանազանութեամբ սակայն՝ որ արդարները Աստուծոյ արքայութիւնը կժառանգեն, ու այն տեղ կապրեն անվախճան յաւիտեան. իսկ մեղաւորները շարի իշխանութեան մէջ կապրեն յաւիտենական, անվախճան տանջանքներով:

Իսկ որմնք ասսւմ են—թէ՝ կար ժամանակ, երբ չկար Որդին Աստուծօ. և կամ եղել է ժամանակ, երբ չէ եղել Սուրբ Հոգին. և կամ թէ՝ նոքա ոչնչից են եղել և կամ ուրիշ զոյցութիւնից են առաջ եկել Աստուծոյ Որդին և Սուրբ Հոգին, և կամ փոփոխական և խառնուշփոթ բաներ են դաքա՞ այսպէս ասողներին ու քարոզողներին՝ Քրիստոսի ծշմարիտ սուր Եկեղեցին նզովում է ու անիծում:

Իսկ մենք—Հայես միշտ կփառաւորենք նորան՝ որ յաւիտեան ժամանակներից ևս առաջ եղած էր և կար պլիտի լինի. և երկիրպագանելով կպաշտենք ու կհաւատանք Սուրբ Երրորդութեանը—Հօր և Որդոյ և Սուրբ Հոգւոյն՝ որոնք Մի Աստուծութիւն են կազմում ¹⁾:

¹⁾ Նիկիական Հանդանակը անշուշտ պիտի աւանդել սաներին. «իսկ որք ասեն»—ը կարելի է թողուլ. եթէ նկատուի

Ե. ՄԵԾՆ ՆԵՐՍԵՍ.

Մեծն Ներսէս Սուրբ Լուսաւորչի թոռան թոռն էր. զինւորական կարգին հմուտ և սենեկապետ ¹⁾ Երշակ Բ. Հայոց թագաւորի:

Արշակ Բ-ը և Հայ իշխաններն ու նախարարները Փառներուհի կաթուղիկոսի մահից յետոյ, միաբան հաւատութեամբ խորհուրդ արին ընտրել նորա տեղը Ներսէս Մեծին, որը այդ ժամանակ գտանւում էր Կ. Պօլսում: Հարակիրեցին այստեղից և ուղարկեցին Կեսարիա. ուր հոգեսոր կոշում ստանալով՝ քահանայական կարգ ընդունեց. և Եպիսկոպոսանալով՝ 364 թուին ընտրուեց Կաթուղիկոս Հայոց ազգի:

Ներսէս Մեծը անօրինակ Աստուծատէր, Մարդա-

թէ ժամանակը չէ ներում Շարականներից կարելի է թողուլ և չանցնել այնպիսիները՝ որպիսիք չդասաւանդելով մի մեծ կորուստ ուեցած չպիտի լինինք: Հանգանակը և առհասարակ անգիր անելու երկար աղօթքներն ու շարականները կարելի է օգուած լոգուտծ և ընդհատ ընդհատ անցկենալ. ոչ թէ դասական շարունակութեամբ, ալլ աւելի հեռու ժամանակամիջնորով՝ եթէ ճանձրութիւն նկատուի սաների մէջ: Օրինակ՝ Աշխարհի Արարշագործութեան գասին կարելի է կցել Հաւատամքի առաջին անդամը. մի քանի գասերից յետոյ, ուր անգիր անելու իմաստ չկայ՝ կցել երկրորդ անդամը. Յիսուսի Ծննդեան Պտտմութեանը՝ Մարմնառութիւնը. Յիսուսի Զարչարանաց, Խաչելութեան, Թաղման, Յարութեան, Համբարձման պատմութիւնները սովորելիս՝ կցել 4-որդ, 5-որդ, 6-որդ անդամները. Հոգեգալաւտեան պատմութեանը կցել 8-որդ անդամը. Թաղէսու և Քարգութիւնը Սուրբ Լուսաւորչի պատմութեանը կցել 9-որդ, 10-որդ անդամները... եալին. որպէսզի Ճանձրակի չինի սաներին ամբողջ Հաւատամքը մի անգամից սովորելը. իսկ յետոյ՝ հատուածական դասաւանդուածը մշացնել և մի ամբողջութիւն կազմել:

¹⁾ Սենեկապէտ բառը բացատրել սաներին—արքունի զրան պաշտօնեալ, որի որշող նշանն է՝ ոսկի բանալի, որը կարուած է լինում համազգեստի Ճախ գրպանի վերայ կապածիր նշանակապով: Հասկացնել—որ ալդ նշանը չկար ան ժամանակ:

սէր և Հայրենասէր անձնաւորութիւն էր: Կարգավահութիւն, կանոնաւորութիւն և խաղաղասիրութիւն ասած բաները նորա սրտին շատ մօտ էին: Դժբաղդարար Կաթուղիկոս դառնալուց առաջ՝ երկպառակութիւն ու խոռովութիւն էր տիրում մեր աշխարհում, մնր ազգի նախարարների մէջ, աշխարհականների ու հոգեորականների մէջ:

Կաթուղիկոս ընտրուելուց յետոյ, իսկոյն բարեկարգութիւնների ձեռք զարկեց, որպէս զի տիրած անկարգութիւնները վերջացնէ, արմատախիլ անէ. այդ պատճառով էլ Սզգային ժողով գումարեց Աշտիշատ քաղաքում Արշակ Բ. թագաւորի հաւանութեամբ 365 թուին և Ազգօգուտ, Եկեղեցօգուտ, Մարդասիրական և առհասարակ Աստուածահանոյ կարգադրութիւններ է սահմանադրում: Ճատերից մի քանիսները յիշենք—կարգադրում է հեթանոսական սովորութիւնները վերցնել. օրինակ. մօտիկ ազգականների իրար հետ ամուսնութիւնը, մեռեների վերայ փողհարների ու վարձկան լալկանների ներկայութիւնը, յուսահատ սղաւորութիւնը, ոգաւորների ահազին ծախսերը նեցեցեալին մեծաշուրջ թագելու համար... և այլն: Կարգադրում է և ինքը ահճամբ գործակցում է, աջակցում է—բանալ հիւրանոցներ՝ պանդուխտ օտարականների համար, աղքատանոցներ՝ թշուառ և աշխատելու կարողութիւն չունեցող խեղճերի համար, հիւանդանոցներ՝ անտէր, անօքնական հիւանդների համար և ապրուստը սահմանում է զիւղերից ու քաղաքներից: Ճինում է Եկեղեցիներ ու Վանկեր Հայաստանի քաղաքներում, աւաններում ու զիւղերում: որոց թիւը հասնում է 2000-ի:

Բաց է անում ուսոմնարաններ Յոյն և Ասորի զի-

տութիւնների. որովհետեւ դեռ ևս Հայոց զիրը շէր գտնուած:

Անդադար շրջելով գիւղերն ու քաղաքները՝ այցելութիւն է անում իւր հօտին, իւր ազգի որդւոցը. և հայրական սէր ու խնամք է ցոյց տալիս բոլորին առանց խտրութեան:

Թագաւորը, նախարարները, ազգի մեծամեծներն ու իշխանները, Եպիսկոպոսները. Ներսիսի մեծագործութիւնները տեսնելով՝ ժողով են գումարում Վաղարշապատ քաղաքում 366 թուին և պատում են նորան Պատրիարք տիտղոսով. և սահմանադրում են—որ Հայոց Կաթողիկոսները այլ ևս չերթան Կեսարեա օծուելու. այլ Կաթողիկոսական օծութիւնը առնուն Ազգի Եպիսկոպոսներից Վաղարշապատում: Այն օրուանից այս կարգը պահուելով՝ տեսում է մինչև մեր օրերը:

Հայրենեաց փառքին և օգտին նուիրուած այդ Մեծ չերպու երկու անգամ Կայսերների արքունիքն է գնացել իւր Ազգի թագաւորների համար. առաջին անգամը՝ 366-ին Վաղենոտիանոս կայսրին անձամբ դիմեց և հաշտեցրեց նորան մեր Արշակ Բ. թագաւորի հետ առանց պատերազմի. երկրորդ անգամը՝ 378 թուին Վաղէս կայսրին դիմեց և օգնութիւն խնդրեց. բայց փոխանակ օգնութիւն ստանալու՝ նորանից աքսորուեցաւ մի անմարդարնակ կզզի:

Վաղէսից յիտոյ թագաւորեց Մեծն Թէսդոս կայսը 379 թուին. որը բարեպաշտ, Աստուածասէր, մարդասէր ու խաղաղասէր թագաւոր էր: Սա տեղեկանալով Մեծին ներսիսի անմեղութիւնը—որ Արիոսականութիւնը¹⁾ չըն-

¹⁾ Բացատրել Արիոսականութիւնը. բայց շատ զդուշ. թեթև բացատրութիւն տալ—թէ նա ծուռն էր մեկնում Քրիստոնէութիւնը, Աւետարանը... ևալն. ինչպէս շաա անդամ որդին:

գունելու համար է աքսորուել՝ վերադարձրեց նորան աքսորատեղից և երկու տարի պահեց իւր մօտ. և Կայսեր առաջարկութեամբ ներկայ եղաւ Մակեդոն Պատրիարքի դէմ Կոստանդնուպոլսում կայացած տիեզերական ժողովին 381 թուին:

Երշակ Բ-ի մահից յետոյ, որ մեռաւ Ընյուշ բանտում. Մեծն ներսէս Կ. Գօլումն էր տակաւին. Մեծն Թէոդոսը նորա խնդրանօք, թագաւորեցնում է Հայաստանի վերայ Արշակայ Պապ որդուն. որի հետ միասին վերադաւ Հայաստան: Անչնորհակալ և տակերախտ թագաւորը իւր մոլի գործերի համար շատ յանդիմանուելով սուրբ Հայրապետից, փոխանակ չնորհակալութեամբ ընդունելու բազմերախտ Հայրապետի խրատները՝ մահաթոյն է տալիս իւր մօտ կազմած ճաշկերոյթի ժամանակ գաղտնի կերպով և զրկում է Ազգին ու Հայրենիքը և Ազգային Եկեղեցին Հայ աշխարհի Լուսաւոր ճրագից և Հայրենեաց Մեծ պաշտպանից Եկեղեց գաւառի Խախ զիւզում 383 թուին, երեսուն երեք տարի հայրաբար Կաթողիկոսութիւն անելուց յետոյ, Խոկ Պապ թագաւորը անմեղ ձեացնելով իրեն, մեծ սգով և յուղարկաւորութեամբ թաղել տուեց նորա մարմինը Թիլն աւանում:

Մեծին ներսիսի յիշատակը մեր Եկեղեցին տօնում է Կաթուղիկէ սուրբ Էջմիածնի տօնի հօթնելի Ճարաթօրը. կամ Յարութեան Բ. Կիւրակէի հօթնելի շարաթօրը:

Քը չեն հասկանում իրենց ծնողներին կամ սաները՝ իրենց ուսուցիչներին. և նրանց խօսքերը ծուռն են պատմում կամ մեկնում: Ես կարող եի չդնել ալստեղ ալդ բառը. բայց նախ՝ որ միտքը կիսատ կմնար. և երկրորդ՝ պէտք է ծանօթանան բառին. ապագայումը Եկեղեցական Պատմութեան համար, որ պիտի սսվորեն:

ԻԲ. ՇԱՐԱԿԱՆ ՄԵԾԻՆ ՆԵՐՍԻՍԻ:

Այսօր տօնէ Եկեղեցի զիշատակ սրբոյն Ներսիսի, Հայաստանեաց Լուսաւորչի. արի և քաջ հովուապետի՝ ընտրեալ ի գլուխ հօտին Քրիստոսի....:

Որ յանդիմանելով զթագաւորն հանգոյն մեծին Յովհաննու. ով երանելի տէր սուրբ Ներսէս. և ի վերայ պատուիրանաց զբաժակ մահու արբեալ ընդ անմահիցն դասս վերակարգեցար:

Այսօր տօնում է Եկեղեցին սուրբ Հայրապետ Ներսէս Մեծի—Հայաստանի Լուսաւորչի յիշատակը, որ Քրիստոսի բանաւոր հօտին ժիր և քաջ հովուապետ ընտրուեցաւ:

Մեծին Յովհաննու նման, որ յանդիմանեց Հերովդէս թագաւորին, և գու՝ ով սուրբ Ներսէս, յանդիմանելով Պապ թագաւորին՝ սուրբ պատուիրաններիդ փոխադարձ հատուցումը մահու բաժակը եղաւ. բայց զու անմահների շարքը դասուեցար:

Զ. ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՒ.

Սուրբ Սահակ Պարթեւ Մեծին ներսիսի որդին էր և Լուսաւորչայ ցեղի վերջին կաթուղիկոսը: Ուսումը ստացել էր Կոստանդնուպոլսում. նա քաջ տեղեակ էր Յոյն, Պարսիկ և Ասորի լեզուներին, Աստուածաբանական գիտութեան և Հայկաբանութեան: Կոստանդնուպոլսում եղած ժամանակ բարեկամ մարդիկ խորհուրդ տուին նորան ամուսնանալ, որպէսզի Լուսաւորչայ ցեղի կաթողիկոսութիւնը շվերշանայ: Նա կատարեց բարեկամների բարի խորհուրդը. ամուսնացաւ, ունեցաւ մի զուստր,

որին անուանեց Սահականոյշ։ Սահականուշին ամուսնացրեց չամազասպ Մամիկոնեան նախարարի հետ։ Սուլբ Սահակի վերջին ծնունդն էր Սահականոյշը։ Նա արուզաւակ չունեցաւ։ և շատ տխուր էր—որ ինքն է լինելու Հուսաւորչայ ցեղի վերջին կաթուղիկոսը։ ուստի և ջերմեռանդ աղօթքներով ինդրում էր Գրիգորի Սստուծուց մի արուզ զաւակ։ Սակայն Ամենախնամ Արարչի նախասահման տնօրինութեամբ ուրիշ բան էր վիճակուած չայսատան աշխարհին։

Ահա թէ ինչ—Աւագ՝ չինդշարթի օրը սուրբ Սահակը սուրբ Պատարագի սպասահարկութիւնից յետոյ ամբողջ օրը Սուրբ Էջմիածնայ Տաճարից չէ հեռանում։ Տաճարի բոլոր սպասահարկութիւնը աւարտելուց յետոյ ննջում է Աւագ Սելանի սանդուխի աստիճանների վերայ։ տեսլեան մէջ յայտնուում է իրեն—որ «Հուսաւորչայ ցեղի բահանայապետութիւնը պիտի դադարի և Արշակունեաց ցեղի հարստութիւնը պիտի վերջանայ։ վերջը նորից պիտի վերականգնի»։ Այս տեսլը տեսել էր և Մեծն ներսէս, Յ. Սահակայ հայրը։

Սուրբ Սահակը խոր հառաջանքներով է ընդունում այդ գոյժը։ բայց փառարանում է Արարչի նախասահման տնօրինութիւնը։

Սուրբ Սահակը իւր ամուսնու մահուանից յետոյ, հրաժարուեցաւ աշխարհիկ կեանքից, աշակերտներ հաւաքեց, որոնք թւով մօտ վաթսուն հոգի էին և ուսուցանում էր նոյա Յոյն, Պարսիկ և Ասորի լեզուները, Աստուածաբանութիւն, չայկաբանութիւն և այլն։

Խոսրով Գ. թագաւորի և աղջի հաւանութեամբ 390 թուին ընտրուեցաւ Կաթուղիկոս։ Մեր նախարարներից ոմանք, որ շէին համաձան այս ընտրութեանը, յանձն առնելով իրենց վերայ մատնիչի և դաւաճանի

գէրը՝ 391-ին գնային Պարսից դուռը և յայտնեցին ձապուհին այս ընտրութեան մասին, և հազար ու մի քարուրանքներ—զրպարտութիւններ բարդելով Սուրբ Սահակի և Խոսրովի վերայ, սկսան շարախօսել նոցա։ ձապուհը, որ շատ ուրախ էր իւր սրտում չայերի այս անմիաբանութեան ու երկպառակութեան համար՝ աւելի օրինական կերպարանք տալ ուղելով իւր մտադրութիւններին՝ բարկացաւ—թէ ինչնու, առանց կանխօրէն իւր համաձայնութիւնը առնելու, կատարուել է այդ ընտրութիւնը։ Ուստի հիմնուելով ազգութաց նախարարների ամբաստանութիւնների վերայ, պատգամաւորներ ուղարկեց Խոսրովի մօտ և կանչեց նորան իւր արքունիքը։ Խոսրովը հրաժարուեց զնալ և օգնութիւն ինդրեց Յունաց Արկադիա կայսրից, բայց նա հրաժարուեց օգնել նորան։ Թէ գրսից և թէ ներսից—նախարարներից անօգնական մնալով՝ դիմեց Զապուհի Արտաշիր որդուն, որին շատ զօրքով ուղարկել էր Զապուհի Խոսրովի դէմ։ Արտաշիրը անդմարար վարուեց նորա հետ—շղթաներով կապեց Խոսրովին և տարաւ Տիգրոն։ թագաւորեցնելով նորա փոխանակ նորա Վոամշապուհ եղբօրը։ Սուրբ Սահակին էլ աթոռազուրկ արեց, առանց նորա երեսը տեսնելու, 392 թուին։ Խոսրովին բանտարկեց Անյուշ բերնելու մէջ։ Փամանակից ինչ յետոյ թուղթ գրեց Վոամշապուհին, որով կրկին հաստատում էր Յ. Սահակին չայրապետական Աթոռի վերայ։ Զապուհի մահից յետոյ թագաւորեցից Արտաշիրը, որը շորս տարի թագաւորելուց յետոյ մեռաւ և աթոռը ժառանգեց Վոամշապուհի հետ և արձակեց նորա բարեկամացաւ Վոամշապուհի հետ և արձակեց նորա խոսրով եղբօրը Անյուշ բերգից և աղատութեան մէջ էր պահում նրան և շատ պատուվ։

Սուրբ չայրապետը բարեկարգում է չայսատանը,

նորոգում է Պարսիկներից քանդած Եկեղեցիներն ու Վանքերը, որոց հետ և Հռիփսիմեանց Վանքը. ուր գտնելով Սուրբ Հռիփսիմեանց մասունքը մէկ արկղի մէջ, որ կնքուած էր Սուրբ Լուսաւորչի մատանիքով՝ բաց շարեց, այլ իւր մատանիքով էլ՝ երկրորդ կնիքը դրեց, 395 թուին:

Վռամշապուհը 21 տարի արժանաւոր և ազգօգուտ թագաւորութիւն անելուց յետոյ. վախճանուեց Խաղաղութեամբ և թողուց մի տասնամեայ ժառանգ Արտաշէս անունով. որի մանկահասակ լինելու պատճառով՝ նախարարները խնդրեցին Սուրբ Սահակին դիմել Պարսից գուռը և միջնորդել Յաղկերտի առաջ—գարձեալ թագաւորիցնելու Խոսրովին: Յաղկերտը կատարեց Ս. Սահակի խնդիրը և Խոսրովը զարձեալ թագաւորեց. բայց մի տարուց յետոյ վախճանուեցաւ. և թագաւորեց Հայոց վերայ Յաղկերտի որդի Շապուհը:

Շապուհին յաջորդեց Վռամ երկրորդը. սա Հայ նախարարների խնդրանօք 422 թուին թագաւորեցրեց Հայոց վերայ Վռամշապուհի Արտաշէս որդուն, որը 18 տարեկան էր: Կեց տարի Խաղաղութիւն էր վայելում Հայոց աշխարհը. Արտաշէսը, որը կոչւում էր նաև Արտաշիր, զեղիս և շռայլ կեանք էր անցկացնում. և տղայարար էր ընդունում Ս. Սահակի հայրական խրատները և չէր կատարում:

Այնուհետեւ դարձեալ վրդովուեցաւ Սուրբ Հայրապետի հօգեկան խաղաղութիւնը. որովհետեւ նախարարները դժգոհ լինելով թագաւորի զեղիս և մոլի դորձերից՝ խորհուրդ արին դիմել Պարսից գուռը և վերջացնել Արշակունեաց թագաւորութիւնը: Սուրբ Հայրապետը շատ էր յորդորում յետ կենալ այդ շար, այդ՝ ազգի համար մահարեր խորհրդից. ասելով. «ինչպէս փոխեմ

իմ հիւանդու ոչխարը առողջ գաղանի հետ՝ որի առողջութիւնը ինձ համար վնասակար է»: Բայց նախարարները իրենց ուղածն արին և Սուրբ Հայրապետին ու թագաւորին մատնեցին: Պարսից թագաւորը երկուսին էլ կանչեց Պարսկաստան ու բանդարկեց. Սուրբ Սահակի փոխանակ աթոռակալ կարգեց Սուրմակ երեցին. իսկ Արտաշրի փոխանակ մարզպան կարգեց Վեհամիհրշապուհ Պարսիկ մէկը: Այսպէս ահա վերջացաւ Արշակունեաց թագաւորութիւնը և Լուսաւորչայ ցեղի Քահանայապետութիւնը 428-ին և 440-ին:

436 թուին, Բրբիշոյ և Ճմուէլ Սսորի աթոռակալ-Ների մահուանից յետոյ, նախարարները դիմեցին Ս. Սահակին, զղչացին իրենց արածների մասին և խնդրեցին Նորից յանձն առնել Կաթուղիկոսական իշխանութիւնը. խոստանալով—թէ այդ իշխանութիւնը որդւոց որդի կտրուի Ս. Սահակի սերունդներին. բայց կենդանի նահատակ Մեծ Պարթեր վճռողաբար հրաժարուելով՝ զնաց Բագրևանդայ Բլուր զիւղը, այնտեղ անցկացրեց վերջին օրերը ուր և վախճանուեցաւ 440 թուին 51 տարի կաթուղիկոսութիւն անելուց յետոյ. և թագուեցաւ Տարօնոյ Աշտիշատ գիւղում, որ իւր սեպհական կալուածքն էր:

Վերջը նորա զերեզմանի վերայ Եկեղեցի շինուեցաւ, ուր կենում էին կրօնաւորներ, իրու կրօնաւոր եղբայրութիւն¹⁾:

Մեծին Սահակայ Պարթե Սուրբ Հայրապետի յիշատակը մեր Եկեղեցին աօնում է առանձին և Սուրբ

1) Բացարեկ Կրօնաւորների եղբայրութիւնը—Վանքական Սիարանութիւնը. օր. Կուսանաց Վանքը, Սահանի, Հաղբատի, Էջմիածնի, Սևանի... և ալլ.

Մեսրովք Մաշտոցի հետ միասին. առանձինը՝ տօնում է Մեծ Պահքից առաջ. Բուն բարեկենդանի եօթնեակներում, Առաջաւորաց Պահքից յետոյ. իսկ միասինը՝ տօնում է Հոգեգալուստից յետոյ Յարութեան Պ. Կիւրակէի եօթնեակում:

ԻԳ. ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵՒԻ.

Որ նորափետուր բանիւ զարդարեալ՝ պայծառազգեցան Եկեղեցիք Հայաստանեայց ի ձեռն Սրբոյ Սահակայ...:

Նորազարդ խօսքով և քարոզութեամբ Սուրբ Սահակ Պարթև Հայրապետի՝ Հայաստանեայց Եկեղեցիքը հոգեոր զգեստներով պայծառացան:

Է. ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՎՔ ՄԱՇՏՈՅ.

Սուրբ Մեսրովք Վարդապետը Եկեղեցական սուրբ գրքերից Մաշտոց¹⁾ ասուած գիրը կանոնաւորելու համար՝ կոչում է Մեսրովք Մաշտոց:

Սուրբ Մեսրովք Մաշտոց Վարդապետը Տարոն գաւառի Հացեկաց գիւղիցն էր. Վարդան անուն մի բարեպաշտ մարդու որդի. Մեծին ներսիսի աշակերտը, գիտէր Յունաց, Պարսից և Ասորուց լեզուները. Նախ՝ ատենադպիք էր Հայրապետի մօտ. որի մահուանից յետոյ՝ Արշակունեաց թագաւորների մօտ դիւանադպիքի կամ քարտուզարի պաշտօն էր վարում. հմուտ էր նաև

¹⁾ Մաշտոց գրքի մասին հարևանցի ծանօթութիւն տալ սաներին. նրանք լաճախ տեսած կինին քահանաների ձեռքին ալդ գիրքը, Մկրտութեան և Պահակի խորհրդակատարութեանց ժամանակ.

պինտրական աղհեստին: Այսպիսի պարապմունքների մէջ ևս՝ նա միշտ ուսումնասիրում էր սուրբ Գիրքը և հոգեսոր սիրով էր վառոււմ. ուստի և թողեց աշխարհային փառքն ու վայելչութիւնը, առանձնացաւ. Գողթան գաւառը և մի վանքում արեղայ ձեռնադրուելով՝ սկսաւ վանական կեանք անցկացնել: Ժողովեց շատ աշակերտներ և կոթեց նրանց Աստուածային ուսմունքի մէջ. որոց հետ քաղաքներ ու գիւղեր պտտելով՝ քարոզում էր նոյս ճշմարիտ կրօնը և ջնջում էր աւելորդապաշտութիւնները: Իսկ 396 թուին, Վրամշապուհի թագաւորութեան հինգերորդ տարին, լսելով Մեծին Սահակայ մեծամեծ գործերը՝ թողեց ճգնողական կեանքը և եկաւ միացաւ Ս. Սահակի հետ. որի հրամանով սկսաւ քարոզել փրկութեան ճանապարհը Հայաստանի զանազան մասերում:

Հայոց Սուրբ Սահակ Պարթև հայրապետի մահից յետոյ վեց ամիս կառավարում է Հայրապետական Աթոռը. և վախճանում է 441 թուին, որի սուրբ մարմինը Վահան Ամատուեի իշխանը հանդիսացուք յուղարկաւորութեամբ հանգստացնում է Օշական գիւղումը. և նորա գերեզմանի տեղումը Եկեղեցի է շինում. գերեզմանը բէմի տակն է:

Սուրբ Մեսրովք Մաշտոցի յիշատակը մեր Եկեղեցին կատարում է Սուրբ Սահակ Պարթև Հայրապետի հետ առանձին. և Սուրբ Թարգմանիչների հետ էլ տոանձին:

ԻԳ. ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՅՆ ՄԵՍՐՈՎՔԱՅ ՄԱՇՏՈՅ.

Հրեշտակ Երևեցար ի յերկը և վարս ունէիր Աստուծոյ հաճոյական...:

Մտացող եղեց պատուիրանաց ՍուրբՀոգւյն. և

ապրեցար ի յաղբից հրապուրողին. կատարեցեր զառարինութիւն...:

Երկրի վերայ հրեշտակ երևեցար. որովհետև Աստուծում հաճելի—դուրեկան վարք ունէիր:

Սուրբ Հոգոյ պատուիրանները ստացար. չարի հըպուրանքներից ազատուեցար. առաքինի դործեր կարատարեցիր¹⁾:

Ը. ՏԱՌԵՐԻ ԳԻՒՑԸ,

Սուրբ Մեսրովը իւր քարոզութեան գործի մէջ մեծ դժուարութիւնների էր հանդիպում. որովհետև ինքըն էր կարդում սուրբ գիրքը և ինքն էր թարգմանում և ապա քարոզութեամբ բացատրում։ Այս դժուարութիւնների առաջն, ընդ միշտ, առնելու համար՝ մտածեց Հայոց գրերը գտնել։ Ուստի թողեց Գողթան գաւառը, եկաւ Վաղարշապատ, դիմեց Սուրբ Սահակին և յայտնեց նորան իւր մտադրութիւնը. որը իւր կողմից ևս յայտնեց նորան—թէ ինքն էլ է մտածում այդ բանի մասին։ Երկուսը միասին ներկայանում են Վասմշապուհ թագաւորին և յայտնում են իրենց խորհուրդը։

Վասմշապուհ, լինելով խելացի և ուսումնասէր մի թագաւոր, ամենայն բարեհաճութեամբ խոստանում է աշակել այդ սուրբ և օգտակար մտադրութեան իրա-

¹⁾ Բացատրել սաներին—որ լիշեալ երկու տուն շարականների միտքն այն է՝ որ Սուրբ Մեսրովը թողեց աշխարհագին կեանքի վայելչութիւնը, որից կարող էր հրապուրուել և առաքինի դործեր չկատարէր ու Աստուծուն էլ հաճելի չինէր. բայց նա ազատուեցաւ—կրօնաւորական սքէմի տակ շատ բարիք արեց. ինչպէս կսովորենք «Տառերի գիւտի» պատմութիւնից։

գործմանը։ Սուրբ Սահակ Հայրապետը ժողով է կազմում Վաղարշապատում։ ուր ներկայ են յինում եպիսկոպոսներ ու վարդապետներ. այդ ժողովի մէջ Վասմշապուհը յայտնում է—թէ ինքը լիել է Հարէլ քահանայից, որ Միջագետքում Դամիէլ գիտնական Ասորի եպիսկոպոսի մօտ գտանուում են Հայոց մի քանի հին նշանագրեր։ Ժողովի որոշմամբ ուղարկում է Վահրիմ իշխանը թաղաւորի և եպիսկոպոսների յանձնարարական թղթով և ներկայանում է Դամիէլ եպիսկոպոսին Հարէլ քահանայի հետ միասին. նշանագրերը բերում են և, ինչպէս սովորել էին Դամիէլից տառերի հեգելը՝ նոյնպէս սովորցնում են Ս. Սահակին և Մեսրովին։ Երկար վարժմունքներ անելուց յետոյ, թագաւորի հրամանագրով հաւաքւում են ուշիմ մանուկներ և սկսում է նոցա կրթութիւնը նոյն նշանագրերով։ Ս. Սահակ և Մեսրով երկու տարի տքնեցան, ջանացին սորվեցնել, բայց անօգուտ վաստակեցան, որովհետև նկատեցին—որ ձայնաւոր տառեր չլինելուն պատճառով՝ տառերը չեն հեգւում. Ուստի աւելի նպատակայարմար համարուեցաւ Սուրբ Մեսրովի անձամբ գնալը Դամիէլի մօտ. և նա առնելով հետը ուշիմ աշակերտներից ոմանց՝ զնաց Միջագետք Դամիէլի մօտ։ Բաւական աշխատելուց յետոյ, տեսնելով որ չէ յաջողւում՝ հեռանում է նորանից. և հետն առնելով Յովհան Եկեղեցացի և Յովիէփ Պալնացի աշակերտներին, դիմում է մի քանի յայտնի գիտնականների աշակցութեանը. նախ՝ Եղեսիա—Պղատոս գիտնականի մօտ, բայց ապարդիւն. յետոյ՝ Փիւնիկէ—Եպիփանոս գիտնականի մօտ, բայց նրան վախճանուած է գտնում. յետոյ գնում է Սամուսատ Հոռիանոս գիտնականի մօտ. այնտեղ ևս ապարդիւն։ Տեսնելով որ զուր ջանք, անօգուտ վաստակ է իւր դիմումները գիտնականներին՝ դիմում է Աստուծոյ օգնութեանը։

Եւ ահա 406 թուին Սամուսատ կղզում տեսիլք է տեսնում և տեսիլքի մէջ մի վէմ և մի թաթ, որ գըրում էր վիմի վիրայ չայոց Այբուբէնքը։ Սուրբ Մեսրովը, իւր կէս քուն կէս արթուն տեսիլքում տեսածը, գրի է անցկացնում իսկոյն, որ շմոռանայ, և ուրախ շտապում է չոռփանոսի մօտ. որի օգնութեամբ կանոնաւոր դասաւորելով՝ այնպէս են ձեակերպում, որ ազատ կերպով և հեղում են և կարդացուում։ Իսկոյն թարգմանում է նոր Կտակարանը և Առակաց գիրքը Յունարէնից իւր հետ տարած աշակերտների զործակցութեամբ։

Ելու ուրախալի համբաւը համուում է Վաղարշապատ, և Վոամշապուհ թագաւորն ու Սուրբ Սահակ Պարթե չայրապետը մեծաշուր ընդունելութիւն են պատրաստում Սուրբ Մեսրովի համար։ Գալիս է Տառապիւտ Սուրբ Վարդապետը, ընդունուում է սիրալիր շրով, և այնուհետև Վոամշապուհի արքայական թղթով չայաստանի քաղաքներից ու գիւղերից ընտրուում ենուշիմ պատանիներ, բերուում են Վաղարշապատ, բացուում են դպրոցներ, թարգմանուում են սուրբ գրքեր և չայոց Եկեղեցոյ Աստուածաշտութիւնը կատարուում է չայերէն լեզուվ. իսկ Սուրբ Սահակը իւր աշակերտների աջակցութեամբ թարգմանուում է Աստուածաշտունչը Ասորերէն լեզուից։

Սուրբ Մեսրովի հրաշալի Տառապիւտի հնորհիւ և Վոամշապուհ թագաւորի և Սուրբ Սահակ Կաթուղիկոսի աջակցութեամբ ծաղկում, բարգաւաճուում է չայ դըպրութիւնը Ե-որդ դարում. և այդ դարը անմահ պարծանքի կնիքը ճակատին դրոշմելով՝ ասուում է «Ոսկէ դար»։

Սուրբ Մեսրովը կազմեց նաև Վրաց ու Աղուանից այբուբէնքը։ Վրաց Բակուր իշխանը և Մովսէս կաթողիկոսը մարդիկ ուղարկեցին Սուրբ Մեսրովի մօտ, խընդրելով, որ իրենց համար ևս նշանագրեր հնարէ։ Սուրբ

Մեսրովը առնելով իւր հետ աշակերտներից մի քանիսին և Զաղայ անուն մի թարգմանիչ, վնաց Վրաստան և հնարելով նոցա համար նշանագրեր և դպրոցներ բանալով՝ սորվեցրեց աշակերտներին նոյն տառերով գրելու կարդալ. և յանձնելով գործի առաջնորդութիւնը Տիրայր Խորձենացի և Մուչէ Տարոնացի աշակերտներին՝ մի քանի ժամանակից յետոյ վնաց Աղուանից աշխարհը, ուր նոցա Սրսվաղէն թագաւորի կարգադրութեամբ և Քէնիամին անունով մէկի գործակցութեամբ ու Երեմիա կաթողիկոսի համութեամբ Աղուանից համար ևս հնարեց նշանագրեր. բացեց դպրոցներ, հաւաքեց աշակերտներ և նոյն գրելով սորվեցրեց գրելու կարդալ. Թողնելով այնտեղ Ենոքը, Դանան և վերջը Յունաթան աշակերտներին՝ ինքը վերադարձաւ չայաստան։

Անցնելով չայաստանի արևմտեան կողմը—Յունաց բաժինը՝ այնտեղ ևս սկսեց դպրոցներ բանալ. բայց Յունական կառավարութիւնը թոյլ չտուեց։ Սուրբ Սահակի յանձնարարութեամբ վնաց Կոստանդնուպօլիս և դիմեց Թէոդոս փոքրին, որ նոյն ժամանակուայ կայսրն եր. նորանից և՛ թոյլտութիւն ստացաւ և Էկլէսիաստիկոս գիտնական տիտղոսով պատուեցաւ. որ կնշանակէ վարդապետ Եկեղեցու և պատով վերադարձաւ չայաստան։

Ի՞ն. ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՑՆ ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՎԵԱՅ։

Որ երկոքումբք սուրբ Լուսաւորչօք տանս Թողոմայ. հաստատեցեր զեկեղեցիս չայաստանեաց. զլոյս իմաստից ի մեզ ծագելով...։

Մեր Թորգոմայ տան երկու սուրբ լուսաւորիչներով Հայաստանեայց Եկեղեցիները հաստատեցիր. իմաստից և դիտութեան լոյսը ծագելով Հայաստանի մէջ. որովհետեւ տառերը գտնուեցան, Սուրբ գրքերը Հայերէն թարգմանուեցան, Աստուածաշտութիւնը Հայոց լեզով սկսաւ կատարուել, դպրոցներ բացուեցան և Հայ դպրութիւնը սկսաւ ծաղկի:

ԻԶ. ՇԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԳԻՒՏԻ ԵԽ ՍՐԲՈՅՆ ՄԵԽՐՈՎՔԱՅ.

Որ խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց Անեղին. նկարագրեցաւ մեզ գիր կենդանի յարգանդ մաքուր մեծին Մեսրովքայ... նմանեալ Մովսիսի տէր վարդապետ. բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ. որով լուսաւորեցան ազգ որդւոց Թորգոմայ:

Անեղի—Յաւիտենական Արարշի խորհրդաւոր փառքը ճշմարիտ լուսով թափանցեց Մեծին Մեսրովքի մտքի մէջ. կենդանի գրի—Հայկական Այբուրէնքի իսկական նկարադիրը տալով նորան:

Ինչպէս Մովսէս մարգարէն Սինայ լերան բարձունքից օրինաց գիրը—Տասնաբանեայ պատուիրանները բերեց իսրայէլեան ազգին՝ նորա նման և մեր Տառագիւտվարդապետը նոր Ուխտի Սիրոյ Օրէնքը բացայայտող Հայոց Դիրը բերեց Հայաստանեայց ժողովրդին և Թորգոմայ որդիքը—Հայերը լուսաւորուեցան այդ Աստուածահրաշ յայտնութեամբ գտնուած Գրով:

Թ. ՍՈՒՐԲ ԹԱՐԳՄԱՆԻՉՔ.

Սուրբ Սահակի և Մեսրովքի առաջին աշակերտները ուսուցիչներ են կարգւում նորաբաց գպրոցների նորեկ աշակերտներին. և երբ վերջիններս աւարտում են իրենց ուսումը՝ այն ժամանակ ընտրում են նոցանից վաթունի չափ ընդունակ, յառաջադէմ աւարտողներ և Պռամշապուհի ու Սուրբ Սահակի յանձնաբարական թղթերով, որոնք զրուած են լինում Թէոդոս կայսրի, Պրոկոպ և Ստավրիոս Պատրիարքների վերայ, որպէս զի ուղարկուած Հայ երիտասարդ ուսանողութեան վերայ լինամք ունենան՝ ուղարկում են Աթենք, Եգեսիա, Կեսարիա, Բիւզանդիոն Աղքասանդրիա և ուրիշ տեղեր, ուր գիտութիւնը ծաղկած էր այդ միջոցին. Մեծ յաջողութեամբ պարապում են նորա և այդ ժամանակ Ստավրոս և Մաքսիմիանոս պատրիարքների և բարեկամ մարդկանց միջոցով գտնում են Սստուածանչի մի ընտիր օրինակ. որևէ ասւում է Եօթանասնից թարգմանութիւն, որը Պաղոմէոս թագաւորի հրամանով Եօթանասուն հոգի գիտնական մարդիկ Երրայեցերէն ընագրից թարգմանում են Յունարէն: Այդ օրինակն առնում են հետները և ուրախ ուրախ բերելով Հայաստան՝ տալիս են իրենց սիրելի և բարերար Ուսուցիչներին—սուրբ Սահակին և սուրբ Մեսրովքին. ու իրենք կրկին վերադառնում են իրենց ուսումնավայրերը:

Սուրբ Սահակը և սուրբ Մեսրովքը ծայրէ ի ծայր կարդալով Եօթանասնից թարգմանած Աստուածանչի այդ ընտիր օրինակը և համեմատելով Ասորերէնից թարգմանածի հետ՝ շատ են հաւանում. և համոզուելով՝ որ այս օրինակը աւելի ճիշտ է և մօտիկ ընալրին, քան թէ իրենց Ասորերէնից թարգմանածը՝ սկսում են նորից

թարգմանել այդ նոր բերածը իրենց աշակերտների հետ,
որոնց մէջ էր և Եղնիկ Կոլբացին, իրքև յաջող թարգ-
մանից։ Այդ Եօթանասնից օրինակն է, որ այսօր ունենք
մենք չայերս։ Այդ թարգմանութիւնը հնագոյնն է բոլոր
թարգմանութիւնների մէջ և այնքան սրանչելի՝ որ օտար
ազգի մատենագիրները գովում են շատ, իսկ Անգլիացի
Վիստոնեան եղբայրները անուանում են՝ «Թագուհի ամե-
նայն թարգմանութեանց», որպէս Յովհաննէս Սքրոդեր
գերմանացին շատ մեծ գովասանքներ է մէջ բերում իւր
մի գրուածքում լատինական երևելի հեղինակներից,
մանաւանդ մէկի հետևեալ խօսքերը—«Հայկական Աս-
տուածաշնչի թարգմանութիւնը այնքան ընտիր է, որ
արժան էր նորա համեմատութեամբ ուղղել Յունական
բնագիրը»։

Ուզարկուած չայ ուսանողները ուսումը աւարտելուց
յետոյ վերադառնում են չայաստան «հարսանեաց երգեր
նուագելույուսով» ասում է նոցանից մէկը. բայց, ինչ են
տեսնում —իրենց բարերարները չկան. նոքա վախճանու-
ած են. ցաւում են—որ չկարողացան իրենց ստացած ուս-
ման պտուղներով ուրախացնել իրենց բարերարներին. ցա-
ւում են նաև—որ տեսնում են չայաստանի մէջ իրենց
տեսած խաղաղութիւնը չկայ. այլ խոսվութիւն, երկ-
պառակութիւն, Պարոիկներից հարստահարութիւն. ցա-
ւում են—որ տեսնում են՝ թէ իրենց վերայ ուշագրու-
թիւն դարձնող չկայ. և մանաւանդ՝ որ իրենց կեանքն էլ
վտանգի մէջ է. ուստի դեռ ևս ոչ մի բանի ձեռք չեն
զարկում. սպասում են որ աշխարհը խաղաղուի և
յետոյ սկսեն իրենց գործունէութիւնը. Վերջապէս
սկսում են նոքա ազատ գործել Վահան մարզպանի և
Գիւտ կաթուղիկոսի օրով. թարգմանութիւններով և ինք-
նազիր երկերով ճոխացնում ու հարստացնում են իրենց

բարերարների սկսած չայ դպրութիւնը, գլականութիւ-
նը, լեզուն, կրօնական ու դպրոցական կեանքը։

Սոքա ասւում են՝ Երկրորդ կարգի աշակերտներ։
իսկ սոցա ուսուցիչները, որոնք Սուրբ Սահակին և
Մեսրովին էին միայն աշակերտութիւն արել և Արտա-
սահման չէին գնացել՝ նոքա ասւում են՝ Առաջին կար-
գի աշակերտներ։

Թէ առաջին և թէ երկրորդ կարգի աշակերտները
միասին ասւում են Թարգմանիչներ։ որոց տօնական
յիշատակը կատարում է մեր Եկեղեցին չոպեղալստից յետոյ
Դ-որդ Կիւրակէի հօթնեկին՝ միայն Սուրբ Սահակյ և
Մեսրովբայ. իսկ Խաչվերացի Դ-որդ Կիւրակէի հօթնե-
կին՝ միւս բոլոր թարգմանիչների յիշատակը առանձին
շարականով, որի վերնազիրն է Կանոն Սըրոց Թարգ-
մանչաց։

Իէ, ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՅ ԹԱՐԴՄԱՆՉԱՅ.

Որ զգիտութիւն քո զերկնային՝ և զհոգեոր զի-
մաստութիւն. առատապէս ծաւալեցեր յեկեղեցիս
չայաստանեալց ի ձեռն սըրոց Թարգմանչացն...։

Ո՞վ Աստուած, Քո Երկնային գիտութիւնը և հո-
գեոր իմաստութիւնը առատապէս ծաւալեցիր—փոեցիր
չայաստանեալց Եկեղեցիների մէջ մեր սուրբ Թարգմա-
նիչների ձեռքով։

Ժ. ՍՈՒՐԲ ԱՏՈՎՄԵԱՆՔ.

Փրկշական 428 թուին, 580 տարի տեսլուց յետոյ, Արշակունեաց թագաւորութիւնը վերջացաւ, չայաստանը երկու մասի բաժանուեցաւ, մի բաժնին տիրում են Յոյները և միսին՝ Պարսիկները: Պարսիկները վաղուց մտադիր էին չայերի, Վրացիների, Ազուանների և միւս հարևան Քրիստոնեայ ազգերի մէջ իրենց կրօնը տարածել—արևապաշտութիւնն ու կրակապաշտութիւնը: Նոցա մեծ երկիւղը Յոյներիցն էր. որովհետև նսքա, իրեկ Քրիստոնեայ հզօր պետութիւն, կարող էին վտանգաւոր ժամանակին օգնել իրենց հաւատակիցներին:

Պարսիկների ամենամեծ ջանքն էր—որ թուլացնեն Յոյների ոյժը, զօրութիւնը, և այնուհետև ազատ, արձակ, համարձակ տիրեն փոքր ազգերին—հարևան Քրիստոնէաններին:

Նոքա հասան իրենց նպատակին. մի անդամ պատերազմ՝ ունենալով Յոյների հետ՝ յաղթում են նրանց. և այնուհետև հպարտացած այդ յաղթութիւնով՝ պատրաստում են պատերազմել նաև Հոնաց դէմ: Բայց նախ բան պատերազմ սկսելը՝ հրաման է ուղարկում Պարսից Յազկերտ թագաւորը իւր հպատակ ազգերին, որ օգնեն իրենց զօրքերով, այրուձիերով:

Հայերն ևս միւս ազգերի հետ գնում են օգնութեան. յաղթութիւնը Պարսիկներն են տանում եօթլ տարի պատերազմելուց յետոյ, և հրաման է ուղարկում հպատակ ազգերին—արեգակին ու կրակին երկրպագութիւն տալ. իսկ պատերազմում դժնւողներին արգելում է հայրենիք վերադառնալը:

Հայ իշխաններից Ատոմ Գնունին և Մանաճիճը Ռլշտունին, առ ոչինչ համարելով այդ հրամանը՝ իրենց զօր-

քերով ուղեցին փախչել չայաստան. բայց Պարսից զօրքերից նահատակուեցան 449 թուին: Եւ բոլոր նահատակները Ատովմ Գնունու անունով՝ կոչուեցան Ատովմնանք. որոց յիշատակը կատարում է մեր Եկեղեցին Առաջաւորաց Պահոց հետեւալ եօթնեկին կամ Բուն Բարեկինդանի նախնժաց եօթնեկին,

Ի. ՇԱՐԱԿԱՆ ՍՐԵՈՅ ԱՏՈՎՄԵԱՆՑ.

Սղաշեմք զքեզ Տէր բարեխօսութեամբ սըբոց Ատովմեանց. որք նահատակեցան ի ճակատամարտ պատերազմի. յաղթող գտան ընդդէմ թշնամոյն. բարեխօսութեամբ սոցա Քրիստոս խնայեա ի մեզ:

Սղաշսւմ ևնք Քեզ, Տէր, սուրբ Ատովմեանց բարեխօսութեամբը. որոնք ճակատ առ ճակատ պատերազմի մէջ նահատակուեցան. և թէպէտ նահատակուեցան մարմնով՝ բայց յաղթեցին հոգւոյ անվեներութեամբ—Սուրբ չոգւոյ սուրբ իրենց մէջքին կապած. յաղթեցին Յիսուսի խաչի նշանովը—Փրկութեան սաղաւարու զլիներին զնելով. յաղթեցին հաւատի սպառապինութեան զրահը հագած—իրենց սիրտը մաքուր տաճար պատրաստելով սուրբ Անուանդ համար, յաղթեցին Քո և Հայրենեաց սիրով—իրենց սուրբ արիւնը թափելով: Արդ՝ նոցա բարեխօսութեամբը լինալիք մեզ:

Ժ. ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՔ.

Մամիկոնեան Սուրբն Վարդան՝ Սուրբ Մահակ Պարթևի թոռն էր: Յունաց բամնումը Թէսդոս կայսրից զօրքավը կարգուեցաւ. յետոյ գալով հայաստան, նոյն պաշտօնի

մէջ հաստատուեցաւ նաև Պարսից Վռամ թագաւորից։
Վռամին յաջորդում է Յաղկերտ Բ. Քրիստոնեաների կատաղի թշնամին. որը Յունաց և Քուչանաց դէմունեցած պատերազմների յաղթութիւնը տարած լինելով՝ հայրատանում է. և Հայերին, Վրացիներին; Աղուաններին Պարսիկ դարձնելու երազներով ոգեորուած՝ Միհրներսէն զօրավարի ձեռքով հրովարտակ է ուղարկում երեք ազգերին ևս, որ գան իւր մօտ։ Ենօգնական Հայերը գնացին. Վարդան և իւր ընկերները կեղծ ուրացան Քըրիստոնէութիւնը և առ երեսս երդրավագութիւն տուին արեգակին, որպէսզի շաքսորուին ու Հայաստանը անտէր շմնայ. այլ մտածեցին—որ կեղծ ուրացութեամբ կհաւատացնեն Յաղկերտին, կազմառուին նորա ձեռքից, և զալով Հայրենիք՝ կհոգան Հայրենեաց փրկութեան համար. այդպէս էլ արին։

Յաղկերտը ուրախացած նոցա ուրացութեամբ՝ մեծ պատով ճանապարհ ձգեց նոցա. և նրանց հետ 700 մոգեր դրեց, որ շատ շուտով կրակապաշտութիւնը տարածեն Հայաստանում¹⁾:

Սուրբ Վարդանի ընկերներից միայն Վասակ Միւնեաց նախարարն էր՝ որ սրտանց ուրացել էր Քրիստոնէութիւնը. նա մարզպան էր կարգուած Հայոց աշխարհի երբ հասան Հայաստան՝ Վարդան և իւր ընկերները փախան Պարսկական մոգախումբ բանակից, մտան իրենց հայրենակիցների մէջ, դիմեցին Յովսէփ Կաթու-

¹⁾ Պատմու սաներին թէ—ինչ գաղտնի պատուէրներ էր տուել—Հայախօսութիւնը վերջացնել, Պարսկական լեզուն տարածել, Պարսից դպրոցներ բանալ Հայերի համար, Հաղջիկներին Պարսկական տարագ հազցնել և Պարսիկ տղաների հետամուսնացնել. «ոմանց կաշառել : ոմանց վախեցնել. եալլն».

ղիկոսին, թողութիւն ինդրեցին իրենց սուտ ուրացութեան համար. և ուխտապահ նախարարներն ու սուրբն Վարդան վառուած Աստուծոյ և Հայրենեաց ոիրով՝ իսկոյն հաւարեցին իրենց զօրքերը և յարձակուելով Պարսից զօրքերի վերայ ահազին ջարդ տուին ու քշեցին երկրի սահմաններից. Վասակ Միւնին էլ փախաւ իւր աշխարհը—Միւնիք։ Պարսիկների շինած կրակատները քանդեցին, կիսակործան Եկեղեցիները նորոգեցին, շինեցին, մոգերին քշեցին Հայոց աշխարհից, ուրացողներին սպանեցին, Վասակի կալուածքը քարուքանդ արին, իրեն էլ բռնեցին և ուղում էին պատժել կամ սպանել. բայց Սուրբ խաչի և Աւետարանի վերայ երդուելով—թէ ինքը սուտ է ուրացել՝ խաբեց Սուրբ Վարդանին և ուխտապահ նախարարներին. ազատուեցաւ սոցա ձեռքից. բայց ծածուկ խորհուրդներ էր տալիս մոգերին, մոգպետին, Միհրներսէհին—թէ ինչ պիտի անեն՝ որ Հայերին Պարսիկ դարձնեն։ Այս բոլորը կատարում էր 450 ժուին։

Յաղկերտ լսելով այս անսպասելի անցքի մասին՝ դառնացաւ, կատաղեցաւ ու փրփրեց. և անթիւ զօրքեր ու փիղեր ուղարկեց Միհրներսէն հազարապետին, ընաջինջ անել Հայն ու Հայութիւնը. Միհրներսէհը զօրքի հրամանատարութիւնը յանձնելով Մուշկան Նիւսալաւուրտին՝ պատուիրեց—Վասակի խորհրդով գործել. Վասակը միացաւ նորա հետ։

Հայ Ուխտապահ նախարարները Սուրբ Վարդանի հետ իմանալով—որ Պարսիկները ահեղ պատրաստութեամբ չեր և Զարենանդ գաւառներից անցնելով՝ բանակ են դրել Արտազ գաւառի Աւարայր դաշտի վերայ, Տղմուտ գետի մօտ՝ հաւաքում են Արտաշատ քաղաքում 66,000

զօրք և դիմում են ճակատամարտ տալու Պարսից
բանակին:

Հասնում են Սուտայը. այնտեղ, նախ քան պատե-
րազմը, Յովսէփ Կաթուղիկոսի ներկայութեանը Ղետոնդ
երէցը և Սուրբ Վարդանը ազգու խօսքերով ովկորում
են զօրքերին, շմկրտուածներին մկրտում են և Սեղան
ուղղելով՝ Սուրբ Պատարագ են մատուցանում և բոլոր
զօրքերը չազորպում են. և ասելով «Ժնդ հաւասարուի
մեր մահը արդարների մահուանը» սկսում է պատերազ-
մը 451 թուին, Յունիսի 2-ին:

Յաղթութիւնը չայց կողմն էր, եթէ Վասակ ու-
րացողը իւր զօրքերով չանցնէր Պարսից բանակը. բայց
և այնպէս պատերազմը ահեղ էր, կոիւը յուսահատական։
Սուրբ Վարդանը առիւծ էր դարձել ևնորա ընկերները՝
կորիւներ. կատաղաբար կռւում էր Սուրբ Վարդանը
և հաւի պէս թուցնում էր Պարսիկների գլուխները.
բայց բիւրաւոր նետերի դէմ այլ ևս չկարաց դիմանալ
նորա լեռնացած կուրծքը. նա ընկաւ. և պատերազմը
վերջացաւ, արևն էլ մայր մտաւ։

Հայերի կողմից ընկան Հայրենեաց նահատակները
1036 հոգի. իսկ պարսիկների կողմից՝ 3544 հոգի։

Սուրբ Վարդանի և նորա հետ ընկած նախարար-
ների անուններով է երգւում մեր եկեղեցում «Նորա-
հրաշ պսակաւոր» շարականը. որ գրել է Սուրբ Ներսէս
Շնորհալի հայրապետը։

Սուրբ Վարդանի անունով, պատերազմի մէջ ընկած
նահատակները, կոչւում են Վարդանանք. այդ 1036 նա-
հատակ վկաների նահատակութեան հանդիսի յիշատակը,
որ անմոռաց է ամեն մի Հայի համար, մեր Եկեղեցին
կատարում է Բուն բարեկենդանի եօթնեկի չինդշաբ-
թի օրը։

Նահատակ զօրավարներից գլխաւորներն են—Պա-
րագլուխ Վարդան քաջ նահատակը—Աւարայրի սրտի
կարմիր Վարդը, Խորէն խորհրդականը. Արտակ քաջը.
Հմայեակ՝ Հօր ընծայեալը. Տաճատ զարմանալին. Վա-
հան վեհ երեեալը. Արդարութեամբ ճոխացեալ Արսէն
ցանկալին. Գարեղին յառաջադէմը: Սորա են՝ որոնց
անմահ և պարծանաց արժանի անունները զարդարում
են «Նորահրաշ»-ի տունների գլխակարգութիւնը։

Իթ. ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՅ.

Նորահրաշ պսակաւոր. և զօրագլուխ առաքի-
նեաց. վառեցար զինու Հոգւոյն՝ արիաբար ընդդէմ՝
մահու. Վարդան քաջ նահատակ՝ որ վանեցեր զթշնա-
մին՝ վարդագոյն արեամբդ քո՝ պսակեցեր զեկեղեցի։

Ռամկական խումբ հազարաց՝ և երեսնից թիւ
քնդ վեցից՝ որք ընդ նոսին նահատակեալ արիա-
բար պատերազմաւ. և հեղին զարիւնս իւրեանց ի
նորոգումն եկեղեցւոյ. ընդ նոսին պսակելով ի յերկ-
նաւոր հանդիսաղբէն։

Գոհութեամբ փառատրութիւն՝ Երբորդութեանդ
նուագեմբ. բազմութեամբ պսակելոց՝ զմեօք մածեալ
առաքինեացս. Եկեղեցիք Հայաստանեայց՝ պայծառա-
պէս զարդարեցան. ուներով միշտ բարեխոս՝ զճգնու-
թիւն մարտի սոցա։

Խելքից վեր հրաշալի պսակը զլխիդ դրած՝ առա-
քինի քաջերին զօրագլուխ դարձար. և Աստուծոյ և Հայ-
րենեաց փառքի համար Սուրբ Հոգւոյ սպառազինու-
թեամբը, այսինքն՝ Հաւատով, Յուսով և Սիրով զի-

նուելով՝ քաջաբար ընթացար դէպի մահու ճակատամարտը, ով Վարդան, քաջ ու կարմիր նահատակ. Աստուածդ ու Կրօնդ, Ազգդ ու Հայրենիքդ հայհոյող և կործանել ցանկացող թշնամիդ քշեցիր և վարդ կարմիր արինդ թափելով՝ Քրիստոսի սուրբ Եկեղեցու—հաւատացեալ Հայութեան ճակատը արիութեան և քաջութեան, Սստուածսիրութեան և Հայրենասիրութեան վեհ անոնով պսակեցիր:

Հազար երեսուն և վեց քաջամարտիկ նահատակները իրենց գլխաւոր զօրավարներին բոլորաշուրջ խումբ կապելով՝ նահատակուեցան, արիաբար ու քաջաբար սպատերազմելով. և Եկեղեցւոյ նորոգութեան համար թափեցին իրենց արինը. և իրենց քաջարի պարագալսկ զօրավարների հետ միասին փառքի ու հոգեսոր յաղթութեան պսակը ստացան Երկնաւոր և նահատակութեան ամենամեծ հանդիսադիր Յիսուս Քրիստոսից:

Մեր շուրջը հաստտտ ու անբաժան միութեամբ հաւաքուած պսակաւոր առաքինիների բազմութեան հետ միասին՝ գոհացողական փառատրւթիւն ենք նուագում—Եղանակում Սուրբ Երրորդութեանդ. որովհետեւ Հայատանեալց Եկեղեցիները պայծառապէս զարդարուեցան. նոցա նահատակութիւնը բարեխօս ունիմը Քո առաջ, ով Սուրբ Երրորդութիւն:

ԺԲ. ՍՈՒՐԲ ՂԵՒՈՆԴԵԱՆՔ.

Ղենդ երէց Վահանդեցին Սուրբ Սահակի և Մեսովովի աշակերտներիցն էր:

Երբ մոգախումբ բանակը ոտք դրեց Անդդ գիւղաքարը և սկսան քանդել Եկեղեցին՝ Ղենդ երէցը առաջինը եղաւ որ դէմ դրեց մոգպետին. և Ծաղկոտն գաւառի Եկեղեցւոյ միաբանութիւնը իւր շուրջն առած՝ փայ-

տերով յարձակուեցան Պարսիկների վերայ, հալածեցին նրանց, ժողովրդին ոտքի կանգնացրին, կրակատները քանդեցին և շատ մոգեր սպանեցին:

Ղենդ երէցը Յովսէփ կաթուղիկոսի հետ գտնուեցաւ պատերազմի դաշտումը և իւր ազգու ճառով ոգեսրեց զօրքերին սուրբ հաւատի, Ազգի ու Եկեղեցւոյ համար քաջաբար կռուելու:

Սա թէկ չնահատակուեցաւ սուրբ Վարդանանց հետ՝ սակայն ուրացող Վասակի մատնութեամբ և զրպարտութիւններով՝ Յովսէփ կաթուղիկոսի և միւս հոգեորականների հետ կանչուեցաւ Պարսից դուռը և նահատակուեցան բոլորն ևս 454 թուին:

Սուրբ Ղենդի հետ նահատակուովները, նորա անունով, կոչուեցան Ղենդեանը. որոց նահատակութեան յիշատակը տօնում է մեր Եկեղեցին բուն բարեկենդանի եօթնեկի Երեքշաբթի օրը. իրենց յատուկ շարականով, որ զրել է սուրբ Ներսէս Ճնորհալին:

1. ՇԱՐԱԿԱՆ ՍՐԲՈՅ ՂԵՒՈՆԴԵԱՆՑ.

Սահակայ և Յովսէփայ սուրբ հայրապետացն Ղեւոնդէ սուրբ Վարդակետն հրամանաւ լուսաւորել զարիական քաջ քաջ սպառագէնսն....

Ողբ Եկեալ հասեալք լինէին սկագունդ զօրըն Պարսից. զի յափշտակեսցեն զառաջնորդն Հայատանեայց. զսուրբ Ղենդեանսն:

Ողբ շուեալ գնացեալք լինէին ի պալատն անօրէն թագաւորին. զի վկայեսցեն ճշմարիտ Սուրբ Երրորդութեանն. սուրբ Ղենդեանը:

Սուրբ Սահակ և Յովաէլի հայրապետների հրամանով սուրբ Ղեղինդ երէցը ոգիորիշ ճառով—հաւատի լուսով զինեց քաջ ու արի զինուորներին:

Պարսից սեագունդ մոգախումբ զօրքը եկել, հասել էին մեր աշխարհը, որ Հայաստանի առաջնորդներին—սուրբ Ղեղինդեանց՝ յափշտակեն. հեշտութեամբ իրագործելու իրենց շար մտադրութիւնը:

Սուրբ Ղեղինդեանք չուեցին, գնացին Պարսկաստան, անօրէն թագաւորի պալատը. որպէս զի ի սէր և ի փառս ճշմարիտ սուրբ Երրորդութեան՝ վկայական մահուամբ նահատակուեն.

ԺԳ. ՍՈՒՐԲ ՇՈՒՇԱՆԻԿ,

Ճուշան կամ Ճուշանիկ Վարդան Մամիկոնեանի դուստրն էր: Վրաց Վազգէն թագաւորի եղբայր Զոջիկ իշխանը մի քանի վրացի իշխանների հետ եկան մեր աշխարհ և խնդրեցին Ճուշանիկի ձեռքը՝ Վազգէնին կնութեան և Վրաց աշխարհի թագուհութեան համար. ասելով—«թէն մեր Վրաստանում աղջիկներ շատ կան և զեղեցկատեսիլ աղջիկներ. բայց տնտես ու տանտիկին, որդոց դաստիարակ ու մայր պատրաստուելու համար շեն նորա: Հայաստանի աղջիկները օժտուած են այդ արժանիքներով, այդ զեղեցիկ յատկութիւններով. մանաւանդ Մամիկոնեան տան զաւակը—Վարդան քաջի չնորհաշուք դուստր Ճուշանիկը, որը ոչ միայն թագուհի պիտի լինի Վրաց աշխարհի՝ այլ և Մայր Վրաստանի...»:

Եյսպիսի գովաստական վկայութիւններով համաձայնութիւնը առին և մեծաշուք փառքով տարան Վրաստան. ամբողջ Վրաստանի համար ցնծագին օր էր այն օրը:

Երբ Յաղկերտի հրամանով կանչուեցան Պարսկաս-

տան Հայոց, Վրաց և Աղուանից նախարարները և ոմանք սուս՝ իսկ ոմանք իսկապէս ուրացան Քրիստոնէական կրօնը. վերջիններիս մէջն էր և վրաց Վազգէն թագաւորը. ինչպէս և մեր անօրէն Վասակ ուրացողը: Այս լսելով Կարմիր Վարդանի Վարդանուհի Ճուշանիկը և վախենալով՝ թէ մի գուցէ ուրացեալ Վազգէնը նախատինքի և արհամարհանքի առարկայ շինէ սուրբ Խաչը, որ բերել էր Վրաստան Ճոխսիմեանց ընկերուհի առաքելուհի նունէն, և զանւում էր այդ խաչը Մցխեթու եկեղեցում՝ մտածեց ազատել այդ խաչը: Այդ օրերը եկաւ նորա մօտ Մշեցի Ղազարու վանքի Անդրէաս արեղան, որ Ս. Սահակի ու Մեսրոպի աշակերտներիցն էր. Վարդուհին Ճուշանիկ իւր ֆաջիկ տագել օգնութեամբ տուեց արեղային այդ խաչը. որ տանի Տարոնոյ աշխարհը: Այդ խաչը կոչուեցաւ Շուշանայ խաչ. որը Հմայեակ Մամիկոնեանի Գրիգոր թոռը տարաւ Կապուտ կամ Կապտոյ բերդը. ուր ինքն էր նստում:

Վազգէն ուրացողը վերադառնալով Վրաստան՝ ձրկտում է համոզել Ճուշանիկ կնոջը. որ նա ևս ուրանայ սիրելի հօր-անման Վարդանի պաշտած կրօնը: Ճուշանիկը, ի հարկէ իբրև Վարդան Մամիկոնեանի աղջիկ, բացէ ի բաց մերժեց Վազգենի անտեղի ու յիմար առաջարկութիւնը. թէն զիտէր—որ այդ մերժումը արեան զնով պիտի նստէր իրեն. բայց «Վարդան. և նորա լուսալը Ճուշանիկ. և Հայ աղջիկ. ուրանալ Քրիստոնէութիւնը մի տխմար, շողոքորթ, փառասէր, անմիտ թագաւորի կամակորութեան ու հաճոյքին բաւականութիւն տալու համար՝ օ՞հ. նշ. այդ միթէ հնարաւոր է. այդ անհնար է այնպէս՝ ինչպէս անհնար է համնել արեգակին, ապրել նորա հրային ծոցի մէջ և անկէզ մորենի մնալ»: Այսպէս էր մտածում Կարմիր Վարդանի

սպիտակ ու պարզ դաշտալին շուշանը, իմ Վարդ Վարդանի սիրելի Շուշանիկը—Վարդանուհին կամ Վարդուհին. Հայաստանի ընտիր աղջիկը:

Վազգէնը վերադրելով այդ՝ Հայի կամակոր բնաւորութեանը՝ հրամայեց—ծեծել, տանջել և ստիպել՝ որ կատարէ իւր հրամատնը. բայց ոչինչ չեղաւ: Ենուհետև հըրամայեց հանել նորանից արքայական, զգեստները և տանել նորան Տփխիս և արգելել Մետեխի բանտումը. անօթի պահել, ամեն օր հանել բանտից ու ծեծել, կըրկին տանել և բանտումը շղթայած պահել:

Շուշանիկին, իւր այս նեղութեան օրերին, օգնողն ու մխիթարողն էր Վազգէն անօրէն ուրացողի ազնուասիրտ եղբայր Զոջիկը. որը ծածուկ հրամայել էր բանտապետ Արսէնին—որ շղթայած շպահէ, կերակրէ նորան և հնարաւորութիւն տայ—որ նա երբեմն ազատ չըջէ և իւր այցելուներին ընդունէ: Արսէնը հաւատարմութեամբ կատարում էր Զոջիկի պատուէրը:

Վեց տարի այսպիսի շարչարանքներ կրելուց յետոյ, Զոջիկի հաւանութեամբ Արսէն բանտապետը ներս թողեց Վարդան Մամիկոնեանի ծառուկ ծերունի ծառային. որից լսեց վշտաբեկ Շուշանիկը իւր հօր մահը և Հայրենեաց սդալի վիճակը. այլ ևս չուզեց ապրել. աղօթեց իւր հօր Աստծուն—որ մահ տայ իրեն և տանէ իրեն իւր սիրելի հօր գիրկը: Եկաւ քահանան և ծածուկ մտնելով բանտը, ի հարկէ թշուառներին պաշտպանող Արսէնի ջանքով, խոստովանեցրեց Շուշանիկին. որը արժանանալով Սուրբ Հաղորդութեան խոհրդին՝ աշքերը վեր բարձրացրեց. և «Ճէ՛ Յիսուս, ընդունիր Քո աղախնի հոգին». ասելով՝ աւանդեց հոգին 45 տարեկան հասակում,

458 թուին:

Սուրբ Շուշանիկի գերեզմանը Տփխիսի Մետեխի ա-

սուած բանակի մէջն է. որի վերայ շինուած է Եկեղեցի իւր անունով. ուր ամենայն օր ժամասացութիւն է լինում բանտարկեալների համար. իսկ նորա կողքին՝ շինուած է մի Եկեղեցի Սուրբ Վարդան Մամիկոնեանի անուամբ. այդ Եկեղեցին Հայ բանտարկեալների համար է, Հայ քահանայ ունի և Հայերէն ժամասացութիւն է լինում:

Սուրբ Շուշանիկի գերեզմանը համբուրելու գնացող ուխտաւորների թիւը միշտ կայ ու կայ:

Սուրբ Շուշանիկի արժանաւոր յիշատակը մեր Եկեղեցին կատարում է Սեպտեմբեր ամսին խաչվերացի Բ. Կիւրակէի եօթնելին:

ԺԴ. ՍՈՒՐԲ ԵՂԻՉԵ,

Սուրբ Եղիշէ Վարդապետը Սուրբ Սահակի և Մեսրովի աշակերտներիցն էր: Ուսել էր Յոյն և Ասորի գիտութիւնները և քարտուղարութեան սլաշտօն էր վարում Վարդան Մամիկոնեանի մօտ: Զեռնազրուեցաւ Եպիսկոպոս Սմատունեաց. ներկայ էր Վարդանանց պատերազմին. որի իսկական նկարագրութիւնը նորա պերճ և հարազատ զրչի ծնունդն է. որ կոչում է «Պատմութիւն Վարդանանց պատերազմի». գիրքը կրում է «Եղիշէ» վերնագիրը: «Եղիշէ» կարդացողը, կարծես թէ սրտով, հոգւով և բոլոր իւր զբացմունքներով ներկայ է Տզմուտի ափերին և տեսնում է բաց աշքով Տզմուտի արիւնով ներկուած ջրերը և Հայ քաջերի առիւծաբար կոխը. չէ կարելի չզգացուել, չարտասուել և գէթ մի վայրկեան մտրով չթռչել ու չհանգչիլ Աւարայրի արիւնաների դաշտի ծոցին: «Եղիշէն» ամբողջովին մի սգեստութիւն է և

ամենահարազատ պատկեր է Վարդանանց Ազգային—Կրօնական պատերազմի, հերոսական կռուի:

Վարդանանց պատերազմից յետոյ, նոյն պատերազմի ողբերգակ բլբուլիկը առանձնացաւ Մոկաց լեռները և ճգնողական կեանք էր վարում. բայց որովհետեւ նորան տեսնել կամեցող հետաքրքիրների այցելութիւնը իրեն ախորժելի չէր՝ նա ուզում էր առանձնութեան մէջ աւելի ազատաբար թափել տշքերից զետօրէն արտասուքը և հանել սրտի խորքերից իւր հառաջքները ժամանակի հանգամանիրների վերայ և ոչ ոք շխանգարէ իրեն այդ իւր տխուր իզձերի մէջ՝ ուստի թողեց Մոկաց լեռները և առանձնացաւ. Ռշտունեաց գաւառը և լիտաների մէջն էր ճնում. այն տեղ էլ վախճանուեցաւ:

Նորա անունով Եկեղեցի շինեցին. ուր և թաղեցին նորա մարմինը:

Սուրբ Եղիշէի տօնը մեր Եկեղեցին կատարում է Սուրբ Թարգմանչաց տօնի հետ և նոյն օրը. շարականն է նոյնը. առանձին շարական շունի:

ԺԵ. ՍՈՒՐԲ ՄՈՎՈՒՄ ԽՈՐԵՆԱՅԻ.

Սուրբ Մովում Խորենացին Տարօն գաւառի Խորէն կամ Խորոնք գիւղաքաղաքիցն էր, Սուրբ Մեսրովը Մաշտոցի քեռորդին և նորա ու Սուրբ Սահակի աշակերտ. Սա իւր ընկերների հետ Աղքաքանդրիա ուսման գնալու ժամանակ, մտաւ Եղեսիա և գրատանից հաւարեց պատմութեան համար կարեսը նիւթեր և շարունակելով ճանապարհը՝ մտաւ Երուսաղէմ. սովորեց Պաղկեստինացւոց լեզուն և ապա մեկնեցաւ այն տեղից գէտի Աղքաքանդրիա, իւր փոքրիկ գրատունն էլ հետը տանելով: Աղքաքանդրիայում մնաց եօթ տարի և ուստի Աստուածաբանա-

կան և փիլիսոփայական գիտութիւնները:

441 թուին ուսումն աւարտելուց յետոյ վերադարձաւ չայաստան և վախճանուած գտաւ Սուրբ Սահակին և Սուրբ Մեսրովին. և տեսնելով թագաւորութիւնը վերջացած, աշխարհը երկպատկութեան մէջ՝ սկսաւ թափառական շրջել անտերունչ աղդի մէջ և ուսուցանել նոցա:

Նորա համբաւը տարածուեցաւ աղդի մէջ և նա երկելի եղաւ իւր ընկերների մէջ: Սա Սահակ Սսպետ Բագրատունի մարզպանի խնդրանօք զրեց ծերութեան ժամանակ «չայց աղդի պատմութիւնը», թողնելով աղդի համար մի անգին գանձ. իսկ իւր անուան համար մի փառաւոր անկործան կոթող յիշատակի:

Սորա տօնն ևս սրբոց Թարգմանչաց տօնի հետ և նոյն օրն է կատարում:

ԺԶ. ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ.

Սուրբ Գրիգոր Նարեկացին Խոսրով Անձեացեաց Եպիսկոպոսի որդին էր. ծնաւ 951 թուին. ուստի նարեկայ վանքումը Անանիա Առաջնորդից: Իւր ունեցած հմտութեամբը Աստուածաբանական զիտութեան մէջ՝ զերազանց եղաւ վանքի միաբանակիցների մէջ, և կարգուեցաւ ուստոցի նոյն վանքումը: 26 տարեկան հասակում քահանայ ձեռնադրուեցաւ և նոյն վանքին Պահանայր կարգուելով՝ կոչուեցաւ Նարեկացի:

Սուրբ Գրիգոր Նարեկացին մի հրաշալի բանաստեղծական տղօթագիր գրեց, որը կոչում է Նարեկ: Նարեկը շատ յարդի է չայ ժողովրդի մէջ ¹⁾:

¹⁾ Բացատրել սաներին—Նարեկի նշանակութիւնը մեր ժողովրդի մէջ—հիւանդների վերաբ կարդալը, հիւանդի բարձի տակ օրերով դնելը և ժողովրդի հաւատը դէպի աւդ սուրբ աղօթաղիրքը:

Սուրբ Գրիգոր Նարեկացու տօնը կատարւում է
Սրբոց Թարգմանչաց տօնի օրը և նոյա հետ:

ԺԷ. ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ ԿԱՄ ԿԱՅՑԵՑԻ.

Սուրբ Ներսէս Ճնորհալին կամ Կլայեցին, ծովք
դղեակի Պահլաւունի Ապիրատ իշխանի որդին էր: Ու-
ստաւ Սեաւ լերան Կարմիր Վանքի առաջնորդ Ստէփան-
նոս գիտնականի մօտ: Իւր եղբայր Գրիգոր Փ. Կաթու-
ղիկոսից քահանայական կարգի աստիճանն առնելուց
յետոյ՝ Եպիսկոպոս ձեռնադրուեցաւ: Եկեղեցական և
այլ գործերի բարեկարգութեան մէջ օգնում էր իւր
եղբօրը:

Գրիգոր Կաթուղիկոսը իւր ծերութեան օրերում
ժողով գումարեց Հոռվմկլայում 1166 թուին և ազգի
հաւանութեամբ իւր փոխանակ Կաթուղիկոս ընտրեց
եղբօրը—Ներսիսին:

Սուրբն Ներսէս իբրև մարդ՝ առաքինի էր և սուրբ.
իբրև գիտնական՝ գերազանց իմաստութեամբ և չնորհ-
քով էր բարգաւաճուած. և իրաւամբ յետնորդները նորան
«Ճնորհալի» մականունը տուին:

Սուրբն Ներսէս տեսնելով նեղացած ազգի հոգեոր
կարոտութիւնը՝ բանագէտ անձինք ընտրեց և ուղարկեց
զանազան կողմեր քարոզելու և ժողովրդին մխիթարելու:
Ինքն էլ զրեց կոնդակներ լի իմաստութեամբ և Աստուա-
ծային հոգւով ներշնչուած—իրին խրատ հովուական բո-
լոր Եկեղեցականների և աշխարհականների համար. այդ
կոնդակները միասին հաւաքուած՝ կոչւում է—թուղթ
ընդհանրական Ներսիսի Շնորհալոյ. որի մէջ կան և նա-
մակներ զանազան անձանց ուղղուած, կան և դաւանա-

բանական և տօնակատարական բացատրութիւններ ու
մեկնութիւններ:

Մեր Եկեղեցական, գրեթէ, բոլոր հոգեոր երգերը
Սուրբ Ներսէս Ճնորհալու Աստուածային հովուով զարդա-
րուած մաքի ծնունդն են և պտուղները. ինչպէս—Յի-
շեսցուք-ը, Զարթիք-ը. Առաւոտ լուսոյ-ն. Աշխարհ ամե-
նայն-ը. Եյսօր անճառ-ը, Նորոգող-ը. Աստուած անեղ-ը.
Արարշական-ը. Արեագալի շարականները. Օրհնեմք զրեգ-ը.
Նայեաց սիրով-ը. Իքէն հայցեմք-ը. Նորաստեղծեալ-ը.
Հաւատով խոստովանիմ աղօթքը. և շատ շարականներ:

Սուրբ Ներսէս Ճնորհալին թէկ ութ տարի կարճա-
տե կաթուղիկոսութիւն արեց և վախճանուեցաւ 1173
թուին, բայց սիրելի ու պաշտելի անուն թողեց Ազգի
ու Եկեղեցւոյ մէջ. նորա հոգեբուղլս շարականներն ու
երգերը, ճշմարիտ որ, ջերմեռանդական զգացմունքներ են
զարթեցնում բարեպաշտ հաւատացեալների մէջ. և նվ
զմայլմամբ չէ լսում նորա Առաւոտ լուսոյ-ն. Աշխարհ
ամենայն-ը. Նորաստեղծեալ-ը. Նայեաց սիրով-ը. և այն:

Սորա տօնն ևս կատարւում է սրբոց թարգմանչաց
տօնի հետ և նոյն օրը:

V. ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Սուրբ Ճուշանիկի պատմութիւնը աւանդելիս՝ աւե-
լորդ չի լինի կարգալ սաներին հանգուցեալ Կարինեանցի
«Յառաւոտ կենաց կուսանիս» երգը. և սուրբ Ճուշանիկին
վերաբերեալ մի կամ երկու տուն սորվեցնել երդի եղա-
նակով. այլ և կարգալ «Ճուշանիկ» ողբերգութիւնը:

Սուրբ Եղիշէի պատմութիւնը աւանդելիս՝ նոյնպէս

աւելորդ չի լինի կարգալ հանգուցեալ Ալիշանի «Ով զու բարեկամ այրած սրտերու» երգը. և բացատրելով երգի մէջ յիշուած բլբուլը՝ որ Եղիշէն է, երգը եղանակով սարվեցնել. գուցէ և գիտցողներ էլ լինեն սաների մէջ, քանի որ տարածուած երգ է:

Իսկ եթէ գտնուին նկատողներ—թէ երեխաների համար ծանր չեն արդեօք Մովսէս Խորենացու, Դրիգսր Նարեկացու և Ներսէս Զնորհալու, մինչև իսկ Եղիշէլ և սուրբ Զուշանիկի պատմութիւնները՝ վատահանում եմ երկու պատասխան տալ. առաջինը՝ Ազդ-իս մէջ կարելի է կարգալ. երկրորդը՝ այստեղ—

Սուրբ Զուշանիկը յիշուում է այստեղ իբրև մեր սիրելի Վարդ կարմիր Վարդանի աղջիկը, և որովհետեւ այցելու ուխտաւորներ շատ կան Տփխիսում, որ յաճախում են նորա անուամբ կառուցած Եկեղեցին՝ ուստի օգտակար համարեցի—որ սաները սովորեն նորա պատմութիւնը. Զատ յաճախ պատահել է ինձ հանգիսել այնպիսի ծնողների և ուսանող սերունդի, որոնք թէեւ յաճախում են Սուրբ Զուշանիկի Եկեղեցին, բայց երբ հարցրել եմ—ով էր սուրբ Զուշանիկը՝ չեն կարողացել պատասխանել. ոմանք էլ ասել են թէ վրացի էր:

Սուրբ Եղիշէն յիշուում է այստեղ իբրև, մեզ համար յաւիտեան անմոռաց մնացող, Վարդանանց պատերազմի պերճախօս նկարագիր. իրաւամբ իբրև Աւարայրի բըւլիկ, որին պէտք է ճանաչել ու սիրել.

Սուրբ Մովսէս Խորենացին յիշուում է այստեղ իբրև մեր ազգի փառքն ու պարծանքը, իւր մեզ թողած անդին գանձի—Հայոց պատմութիւն գրքի համար. որնվ ենք ճանաչուել մենք գիտնական աշխարհին. Բացի սորանից նորա այստեղ յիշուելը մի նախապատրաստական հետարկրութիւն է և անհամբեր ակնկալութիւն նորա

պատմութեան ապագայ ընդարձակ ուսումնասիրութեան:

Խորհրդաւոր էր կարգալ սաներին և բացատրել մեր սիրեցեալ Հայրիկ հայրապետի հոգեզմայլ բանաստեղծութիւնը, նուիրուած Մովսէս Խորենացու յիշատակին—իրեւ Զաղացպանի. որ Խորենացին և՛ Զաղացպան է Եղել. և՛ տասը տարի պարկը ուսին հաց մուրացող, և՛ պարեգօններից արհամարհուած և զրպարտուած նախանձի կրակով... և այն և այն. և սակայն Հայոց ազգի Պատմաբան վրկեց:

Սուրբ Գրիգոր Նարեկացին յիշուում է այստեղ նոյն նպատակով՝ որ սաները գիտենան ու ճանաչեն—թէ ով է այն Նարեկ աղօթագրքի հեղինակը. քանի որ այդ Նարեկը նոքա գիտեն և աեսել են իրենց տներումը:

Սուրբ Ներսէս Զնորհալին յիշուում է նոյն նպատակով. քանի որ սաները շատ են լսել և լսելու են նորա սրտաշարժ Առաւոտ լուսոյ-ն, Աշխարհ ամենայն-ը, նորաստեղծեալ-ը, նայեաց սիրով-ը և իրենց Հաղորդութեան ժամանակ հրգուած Այսօր անճառ-ը:

Ահա ինչ գիտումներով յիշել եմ ես փոքրիկ սաների համար՝ մեզ հետ և մեր կեանքի հետ սերտաբար կապուած այդ մեր սիրելի և պաշտելի Զուշանիկին, Եղիշէնին, Խորենացուն, Նարեկացուն և Զնորհալուն:

Իսկ եթէ սորա համար կբարեհաճեն քարկոծել ինձ՝ ես այն քարերը իբրև ծաղիկ կհաւաքեմ...:

անձնական մահացության բարեւառ մատիստաց
յի ընդունած և պահպան պարզ չէ քաղաքացին
ու օրդենածով բարեւառ համարական թիվուն բացակա
ռ որպես չի գործածել այսու նույնական ըմբռի
և յ անունու և մերժություն ու հնարքացած նորի
և բարեւուն բարեւառ պարզ գույն պատ և չը
մարդ նախականության և նույնական ու պահպանական
բար բարեւառ և համ և պատ և ինքան ու ժամանակական
առ բարեւառ բարեւառ ու պահպան չափությունը
ու բարեւառ առ նույնական բարեւառ ու նախական
բար ու պատ պահպան բարեւառ վական ու ա
նույնական բարեւառ ու պատ ու պահպան
պատություն Ե առաջ պատ ու պահպան պահը
առ ու պատ ու պատ ու պահպան ու պատ պահը
ու պատ ու պատ ու պատ ու պատ ու պահպան
պատություն ու պատ ու պատ ու պատ ու պահպան
պատություն ու պատ ու պատ ու պատ ու պահպան
պատություն ու պատ ու պատ ու պատ ու պահը



арм-к
3497

1
2

Դինն է 40 ԿՌՊ.

Ճանապարհածախսով 60 հ.

Վաճառում է բոլոր գրավաճառների մօտ. և հեղինակի մօտ այս հասցեով՝ Տիֆլիս, Մարինско-Անանով-
սկое женское училище.

Գումարով գնողներին $15 - 20\%$ դիջումն.